

ՏՏԵՐ

00 AUG 2010

493



N1

ՀԱՆԴԻՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

N1
ԻՒ.

ՅՈՒՆԻԱՐ

Փ Ա Ր Ի Զ

1938

03.05.2013

100 AUG 2010



"VEM,"
REVUE BIMESTRIELLE ARMÉNIENI
Directeur: S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


- Ա. ՎՐԱՅԵԱՆ - Փետրվար 18-ից յետոյ
Ո. ԲԵՐԲԵՐԵԱՆ - Պատրամիքների շրջանից
Վ. ՄԻՆԱԽՈՐԵԱՆ - Արհաւիրքի օրեր
ՏՈՒՔԹ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ - Յուշատետքէս
Ա. ԱԲԵՂԵԱՆ - Միջազգային դաշնագիրներ Հայաստանի մասին
ՀՄ. ՄԱՆՈՒԿԵԱՆ - Դէպֆերը Վասպուրականում
ՀԱՅ - ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ - Մշակոյթը Հայաստանում - Ա. Զապահ-
եանի յորելեանը - Ե՞րբ է հիմնուել Հ. Յ. Դաշնակցութիւնը
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՍՄՈՒԼ - Գէորգ Դ. Է. իր ժամանակը - Տոփք. Ն. Տ.
Մ. Թաշնանի գիրքը
ԴՐԱԽՕՍՍԿԱՆ - Ս. Արամեան՝ Ա. Պարտիզեան՝ «Հայ եկեղեցւոյ
տագնապը եւ անոր պատասխանառութերը»
ՅԱԻՆԻԱԾ - Գիւտ Մխիթարեան՝ «Պրագիլահայ գաղութը»

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Ֆրանսա եւ Սիւրիա
Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս՝
Մնացեալ բոլոր երկիրները
Հասցե՝ նամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար -

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson

Gérant: V. Hampartzoun

Imp. ARTISTIQUE. 12, Rue de la Jonquière PARIS 17.



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Զ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1

1938

ՆՈՅԵՄԲԵՐ - ՅՈՒՆԻԱՐ

Ա. ՎՐԱՅԵԱՆ

ՓԵՏՐԻԱՐ 18-Ի ՅԵՏՈՅ

(ՄԵՐ ՀԵՏԱԳԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ)

1921 թ. փետրվարին համաժողովրդական ապստամբութիւնը Հայաստանում տեսեց հիմք ամիս - փետրվար 18-ին Երեւանը ազատագրւեց բոլշևիկներից, ապրիլ 2-ին վերագրաւեց ոսւս բանակի ուժով, յուլիս ամսի կիսերին հակարողելիկ ուժերը Լեռնահայաստանից անցան Արակսը եւ ապաստան գտան Թաւրիզում:

Տարագրութեան հեց առաջին օրերից սկսած Հայաստանից հեռացած մտաւորականութեան եւ գործիչների շրջանում սկսեց կատարած գործի բնադատութիւնն ու վերագնահատութիւնը: Եւ առաջին հերթին, բնականաբար, Հ. Յ. Դաշնակցութիւնն էր որ ձեռնարկեց այդ աշխատանիքին, բնիութեան առարկայ դարձրեց փետրվարին շարժման հետ կապւած խնդիրները: Տեղի ունեցան բազմամարդ ժողովներ, որոնց մէջ մշակւեց կուսակցութեան հետեւելիք բաղադրականութիւնը: Այդ աշխատանիքներին մեկնակէտ ծառայեց, լինկերների յանձնաբարութեամբ, իմ արած մի գեկուցումը, որի ամփոփումը իրատարակվեց Թաւրիզի «Այգ» երկօրեայ թերթի 1921 թ. Օգոստ. 13 եւ 18 համարներում:

Այս գեկուցումը արտայատում է մեր ունեցած մտայնութիւնը 1921-ի վորորկայոյց օրերին եւ բարակական այն ուղին, որին հետեւում էինք այն ժամանակ: Հետազայն, Հ. Յ. Դաշնակցութեան պատասխանառու ժողովներն էլ հաստատեցին այդ ուղին, որին մինչեւ այսօր էլ հաւատարիմ մնացել է մեր կուսակցութիւնը: 17 տարւայ դէպֆերը, բայց, մանաւանդ, Հայաստանի ներսն ու շուրջը վեր-

ՀՕՀ



520-2001

զերս զարգացող իրադարձութիւնները անզամ կոյրերի աչքին տեսանելի փաստերավ հաստատեցին Հ. Յ. Դաշնակցութեան այն ժամանակայ նախատեսութիւնների ու որդեգրած ուղեգծի նիշտ լինելը: Որպէս, ուրեմն, վերոյիշեալ գեկուցումը այսօր պատմական վաւերագիր հանդիսանալուց բացի ունի նաև գործնական ուղեցոյցի նշանակութիւն:

Մատնանշած երկու հանգամանքով էլ մենք աւելորդ չենք համարում վերաբաղրել այդ գեկուցումը «ՎԵՄ»-ի էջերում, քանի որ «Այգ»-ի յիշած համարենք մատչելի չեն որ եւ է մէկին: Այս գեկուցումից ընթերցազը յատակ կերպով կը տեսնէ, թէ ի՞նչ գաղափարներ ու մտահոգութիւններ զբաղեցնում էին մեզ Հայաստանում եւ տարագրութեան առաջին օրերին. կը տեսնէ նաև, թէ մեզ վերագրուող շատ տեսակէտներ ու մեր հասցէին նետող շատ մեղադրանքներ անհիմն են եւ անտեղի: Գաղափարական այն նաևապարհը, որին հետեւն է Հ. Յ. Դաշնակցութիւնը Հայաստանում, կարմիր գծի պէս, անշեղ զարգացել է մինչեւ մեր օրերը: Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ այն ժամանակ, եւ այսօր պետական ու ժողովրդական շահը գերադաս է համարել իր կուսակցութեան շահից:

Զեկուցումը վերաբաղրուում է գրեթէ անփոփոխ, ոնական մի քանի թերեւ սրբագրութիւններով եւ աննշան յապաւումով: Ս. Վ. Բ.

Հայաստանում եւ ամբողջ առաջաւոր Ասիայում այսօր առեղի ունեցող դէպքերը միայն մի գրւագն են կազմում այն վիթխարի պայքարի, որ մզում են իրար դէմ Անտանան ու Խորհրդացին Ռուսաստանը: Հաս էութեան գա հին վէճի շարունակութիւնն է: Համաշխարհային պատերազմում տնտեսապէս ու քաղաքականապէս պարուած Ռուսաստանը ձգտում է նոր ձեւերով վերազրաւել իր կորցրած միջազգային դիրքերը: Այն, ինչ որ չյաջողւեց իրականացնել Միլիւկովներին ու Գուչկովներին՝ ոռու աղջայնական դրօշակի տակ՝ հիմա իրականացնում են Լենիններն ու Զիւերինները՝ կոմունիզմի եւ միջազգայնութեան անունով: Էութիւնը նոյնն է — ոռուսական իմպերիալիզմ. վորուած է ձեւը — կոմունիզմ: Եւ Անտանտի ղեկավարները շատ լաւ են հասկանում այս հանդամանքը եւ դէպքերը Մերձաւոր Արեւելքում գնահատում են որպէս ոռու — անդլիական հին հակամարտութեան շարունակութիւնը: Ռուսը մզուում է դէպի տաք ծով, դէպի միջազգային շահաստանները. անդլիացին նրա քթին է տալիս, յետ է մզում: Ռուս մուժիկը, որ Տրոցկիների հրամանով զէնք առած գնում է նոր երկիրներ զբաւելու եւ մանր աղջեր ձնշե-

լու, հետեւում է նոյն տարերային բնաղջին, որով շարժւում էր ցարերի հրամանը կատարելիս:

Իրենք՝ բոլշևիկները համաձայն չեն այսպիսի բացատրութեան: Նրանք պնդում են, որ իրենք պրոլետարական յեղափոխութեան խարոյիներ են վառում զանազան երկրներում: Եւ ուզում են մեղ էլ համազել, որ աղէտ ու սոված ոռու մուժիկը համաշխարհային յեղափոխութեան համար է աշխատում եւ ժողովրդներին երկաթով ու կրակով ձնշելով, երկրներ աւերի ու թալանի մատնելով՝ ազատութիւն ու հաւասարութիւն է տարածում: Թո'զ, սակայն, նրանք այլպէս համոզւած լինեն. գրանից խնդիրը չի փոխվի: Փաստը մնում է փաստ. Մեր հոդի վրա տեղի են ունենում խոշոր ընկերային վերիվայրումներ, որոնք անմիջապէս անդրադառնում են մեր ճակատագրի վրա, եւ մենք պարտաւոր ենք զիտակցել մեր դերն ու դիրքը այդ երեւյթների հանդէպ:

Այս խնդրի մասին մենք նոր չենք, որ մտածում ենք: Դեռ անցեալ տարի, հայ քաղաքական ղեկավարները լրջօրէն կշռելով բոլոր հանդամանքները՝ տիֆն միջազգային դէպքերից բխող արամարանական պատասխանը — միակը, որ այն ժամանակւայ պայմաններում հնարաւոր էր: Նրանք կամովին հրաժարւեցին իշխանութիւնից՝ յօդուս բոլշևիկների, որոնք, թւում էր, թէ ստեղծւած կացութեան հետեւանքով աւելի էին ի վիճակի հայ աշխատաւորութեանը խաղաղութիւն եւ զարգացման հնարաւորութիւններ ապահովելու: Դեկտ. 2-ի ակտը մտածւած, չափուած ու ձեւած քաղաքական քայլ էր: Դա մի զիւանագիտական խաղ չէր մեր կողմից, ոչ էլ արդինք ներքին թուլութեան, այլ հետեւանք անկեղծ համոզման, որ այն պայմաններում միայն Խորհրդացին Ռուսաստանին յարելով, հնարաւոր էր հաւասարակառութիւններ պահպանել իրար խաչածնուղ զանազան ուժերի հանդէպ: Այդ ուղղութեամբ էր մզում մեղ նաեւ քեմալական անհաշտ արկածախնդիր քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ: Մենք առանց վերապահութեան կամենում էինք գործակցել վորքարանը եւ մեր երկրում հող չունեցող, բայց սուսական զօրութեան շընորհիւ միջազգային կշիռ ունենալու ընդունակ բոլշևիկների հետ՝ առանց, ի հարկէ, հրաժարելու միացեալ եւ անկախ Հայաստանի հիմնական գաղափարից: Գործակցութեան ցանկութիւնը ոչ թէ մեր սնափառութիւնից կամ իշխանամոլութիւնից էր բխում, այլ միանդամայն այն ճիշտ համոզումից, որ հայ ժողովրդի եւ մտաւորականութեան մեծ մասը կապւած է մեղ հետ եւ առանց մեր գործօն աջակցութեան Հայաստանում ոչ մի իշխանութիւն չէր կարող յաջողութիւն ունենալ:

Դեկտ. 2-ի ականին, որին բոլցեւիկները տխմարօքէն, կամ դիտաւորեալ կերպով, յեղափոխութիւն անունն են տալիս, յաջորդեցին յունաբան եւ փետրւարեան մղձաւանջային օերերը: Ուուսաստանի զանազան ծայրերից Հայաստան քշւած Հայ բոլցեւիկները, որոնց մեծագոյն մասը կամ քրէտկան տիպեր էին, կամ նախապարաստական դասարանի աշակերտներ, կամ թուկից փախած որիկաներ եւ կամ, լաւագոյն դէպքում, կրէտիններ ու մաքի ներքինիներ, արբեցած հեշտ ճեռք բերւած իշխանութեամբ, հաստատեցին Հայաստանում մի ոչ-ժիմ, որ անուն չունի: Մակիավելիովիքի, բոնակալութեան, շանտաժի, պրովոկացիայի, թալանի եւ անամօթութեան ոչժիմ էր այդ, ևրբ ամբողջ Հայ ժողովուրդն ու Հայ մտաւորականութիւնը խաղալիք դարձան մի քանի խելագարների կամայականութեան, երբ բանալ դարձաւ հաղարաւոր մարդկանց ապրելավայր եւ կացինը՝ իշխանութեան հեղինակութիւնը պահպանելու միջոց: Այս ոճարդործ քաղաքականութեան հետեւանքով շուտով ժողովրդի բոլոր խաւերը զբու երես դարձրին բոլցեւիկներից, եւ երկիրն անվանելի ուժով մղւեց դէպի փետրւարեան շարժումները: Գեղեցիկ խօսքի համար չէ, որ ասւում է, թէ փետրւարեան յեղացրջումն առաջ է եկել անկաղ-մակերպ, տարերային կերպով եւ առանց լայն ղեկավարութեան: Եթէ երբ եւ իցէ եղել են բնապետութեան դէմ ուղղւած անխառն ժողովրդական շարժումներ, դրանից ամենաժողովրդականն, անկանած, փետր. 18-ի յեղացրջումն էր Հայաստանում:

Այսպիսով, ուրեմն, փետրւարեան յեղացրջումը արդիւնք էր ներքին պատճառների՝ հետեւանք բոլցեւիկների յանցաւոր քաղաքականութեան: Նա չէր բխում քաղաքական հանդամանքների միջազգային նոր դասաւորութիւնից: Միջազգային կացութիւնն, ընդհակառին, աւելի նպաստաւոր էր բոլցեւիկների համար. Ազրէ-ջանն անշարժ էր, Վրաստանի անկումն անխուսափելի, Ռուսաստանի ներսը լուրջ շարժումներ չկային, Եւրոպան զբաղւած էր սեփական հոգսերով, եւ տաճիկ - բոլցեւիկեան բարեկամութիւնն աւելի եւս ամրանալու վրա: Յեղափոխութեան քաղաքական պատճառ չկար, եւ շարժումը տեղի չէր ունենայ, եթէ բոլցեւիկներն իրենք պրովոկացիայի չենթարկէին ժողովրդին: Ազատ մնացած մտաւորականութիւնը ցաւով ու կակիծով էր դիտում այս ամենն եւ շարժման մէջ մտաւում թէ «իշխանութեան քաղցրութիւնները վայելելու», այլ ժողովրդական տարերքին քաղաքարական բովանդակութիւն տալու եւ երկիրը ծայրայեղութիւնից հեռու պահելու նպատակով: Մենք այնքան կոյր չէինք, որ չտեսնէինք, թէ ինչպիսի միջազգային աննպատ

պայմաններում տեղի ունեցաւ շարժումը, որի հեղինակը՝ գիւղացիութիւնը հաշվի չէր առել հետագայ լինելիքները, որոնք անխուսափելի կերպով պիտի տանէին դէպի պարտութիւն, մանաւանդ Վըրաստանի անկումից յետոյ, երբ բոլցեւիկ հրամանատարութեան ձեռքբերն արձակւեցին, եւ նա դէպի Հայաստան շպրտեց մեծաքանակ ուսւական զօրքեր:

Փետրւարեան յեղացրջումը ճնշւեց, բայց նա ունեցաւ, ի հարկէ, մի շարք զբական հետեւանքներ, որոնց մէջ առաջին տեղն է բռնում Հայ մտաւորականութեան փրկութիւնը կացինահար լինելուց կամ թուսաստան աքսորելուց: Անշուշտ, այդ շարժումը քիչ նշանակութիւն չունեցաւ եւ ունչիմի փոփոխութեան տեսակէտից. այսօրւայ «մեղմ» կուրսը Հայաստանում, որոշ չափով, պարտական է եւ փետրւարեան յեղացրջման: Սակայն, ինչքան եւ նշանակալից լինի փետր. 18-ի արդիւնքը, որքան եւ անխուսափելի ու անհրաժեշտ համարենք այդ շարժումը, չի կարելի ժխտել, որ նա էպիզոտիկ բնոյթ ունի եւ չի կազմում օրգանական մասը քաղաքական դէպքերի շարայարութեան: Փարզ է, որ եթէ զեկուեմբերից իշխէր աւելի խելացի ու հեռասես քաղաքականութիւն, փետրւարեան ապստամբութիւնը տեղի չէր ունենայ, եւ Հայաստանը աղատ կը մնար մի խոշոր ցնցումից: Փարզ է եւ այն, որ փետրւար 18-ից յետոյ Հայաստանում կատարող դէպքերի պատասխանատուն ոչ թէ «նենդ գաշնակներն» են, այլ հէնց իրենք բոլցեւիկները, որոնք ստեղծեցին Սոդոմ - Գոմորը, հետեւարար եւ փետրւարեան դէպքերը: Ես աւելորդ եմ համարում թւել ու վերլուծել այստեղ Հայաստանում եւ Լեռնահայաստանում կատարած գործողութիւնները, որովհետեւ նրանք ըստ ամենայնի հասկանալիք են եւ անխուսափելի փետրւարի դէպքերից յետոյ. մեր կուտը Լեռնահայաստանում շարունակութիւնն էր Հայաստանում սկսւած կուտի, եւ այն հանդամանքը, որ մենք սուսական մեծաքանակ ուինների ճնշման տակ տեղի տւինք, զես չի նշանակում, թէ մեր գատն անարգար էր, եւ մենք պարտաւած ենք իսուս: Ո՞չ, մենք պարտաւած չենք, մեր գաղափարները հիմա եւս Հայ ժողովրդի սրտում նոյնքան վառ են, որքան եւ առաջ: Մեզ կարելի էր կուտի դաշտում յաղթել, որովհետեւ մեր բանակը փոքր էր, իսկ ուսւ զօրքը շա՞տ. մեզ կարելի է ֆիզիքապէս վերացնել՝ յենելով ուսւ ախնների կամ վարձկան մարդասուրների վրա, բայց գրանով մեր զաղափարները չեն մենք. նրանք վաղ թէ ուշ կը յաղթանակեն:

Մեր զաղափարներն այն զաղափարներն են, որոնցով ապրել ու ողեւորել է Հայ ժողովուրդը վերջին տասնամեակներում եւ որոնք

բոլշևիկների կողմից էլ ընդունվում են տեսականապէս — բոլոր աղղերի ազատութիւնը, թէեւ հէնց որ բանը գործի է հասնում, նրանք ոչ միայն ազատութիւն չեն տալիս, այլ եւ դահիճ են դասնում աղղերի զլիխն: Ե՛ւ փետրւարին, ե՛ւ առաջ, ե՛ւ այսօր մեր քաղաքական նշանաբանն է Հայաստանի ազատութիւնը — Միացեալ եւ Անկախ Հայաստան, եւ այն փաստը, որ Հայաստանում այսօր ուսւ զինուրի սւխն է իշխում, բնաւ չի յուսահատեցնում մեզ: Մենք դրա վրա նայում ենք իրեւ ժամանակաւոր դժբախտութիւն — դժբախտութիւնները յարատեւ չեն լինի. նրանք կանցին, եւ Հայաստանն էլ, ի հարկէ, կը լինի ազատ: Այսպէս ենք մտածում մենք, որ մեր գաղափարի համար քշւած ենք օտար երկնքի տակ, ինչպէս քշւում էին ազատութեան ռահվիրանները ցարերի ու սուլթանների կողմից: Այսպէս է մտածում եւ բովանդակ հայ ժողովուրդը, որ զատապարտած է տաղբելու բոլշևիկների իշխանութեան ներքոյ, ինչպէս եւ նրանք, որոնք ցրւած են աշխարհի չորս ծայրերը:

Մեր հակառակորդները մեզ վարկարեկելու դիտաւորութեամբ մեր պայքարն աշխատում են ներկայացնել որպէս նեղ եսական, շահագլխական մի գործ: Իրը թէ, մենք չենք ուզում հրաժարւել իշխանութիւնից՝ «փափուկ աթոռներից», «հանգիստ կեանքից», «չաղ ոռձիկից» ու «պետական կարկանդակից»: Պրովոկացիայի ամենազուհիկ ու էժան տեսակն է սա, որովհետեւ անզամ երեխաններին յայտնի է, թէ մենք ինչ «փափուկ» աթոռներից վրա էինք նստած Հայաստանում եւ ինչ համեղ «կարկանդակներ» էինք ուստում: Եւ եթէ հարցն անձնական վիճակին զայ, կարելի՞ է համեմատութեան դնել «ժողովրդական կոմիսարներից» և մեր ապրելակերպի միջեւ. մենք ուրախ կը լենինք նրանց յարմարութիւնների տասներորդ մասը գէթ ունենալու: Նրանք, ովքեր ծանօթ են այն պայմաններին, որոնց մէջ մենք ամենք ապրել ու դորձել ենք Հայաստանում, չեն կարող մեզ մեղադրել անձնական միտումների մէջ, իսկ եթէ մեղադրում են, կը նշանակէ շատ անբարեխիղմ, շատ վատ մարդիկ են:

Մենք Հայաստանի ազատազրութեան մենաշնորհը չենք իւրացրել. մեղ համար կարեւորը ազատազրութեան փաստն է: Թէ ո՞վ կը տայ հայ ժողովրդին ազատութիւն — դաշնակցականները, բոլշևիկները — այդ միեւնոյնն է. միայն թէ ազատութիւն տրւի: Եւ մենք պատրաստ ենք նեցուկ հանդիսանալու ամէն մէկին՝ ով կը գործէ այդ ուղղութեամբ: Թո՞ղ բոլշևիկներն իրականացնեն մեր պահանջները, մենք ամենայն ուրախութեամբ յետ կը քաշենք: Բայց կարո՞ղ են նրանք իրականացնել, ընդունա՞կ են դրան, կը կամենա՞ն...

Մեր պահանջն է, որ Հայաստանը լինի իրապէս անկախ, որ երկու Հայաստանները միացւեն, որ Հայաստանի իշխանութիւնը բիսի Հայաստանի ժողովրդից եւ ոչ թէ նշանակւի Մոսկվայից, որ Հայաստանը կառավարուի սեփական պաշտօնեաներով ու զինուրներով եւ ոչ թէ ուսւ կոմիտարներով ու սւիններով, — մի խօսքով, որ հայ ժողովրդը լինի իր երկրի եւ ճակատազրի տէրը եւ ոչ թէ Մոսկան կամ Մոսկվայի անունով եկող թալանչի եւ արբեցող կոմիտարներ կամ մեր իրականութեանն անհարազատ չինովնիկներ: Կարո՞ղ են այս տեսակէտի վրա կանգնել երեւաննեան «ցինտրովիկները»: Եթէ կարող են — մեր գոյութիւնը աւելորդ է: Եթէ չեն կարող, — ինչպէս չեն կարողացել մինչեւ այժմ, — մենք կանք ու կը մնանք, եւ հայ ժողովրդի համակրանքը միշտ ու միշտ մեզ հետ կը լինի, որքան էլ ձնշումներ գործ դնեն կոմիտարները: Մեր գոյութիւնն ու գործունէութիւնը հետեւանք է ոչ թէ մեր կամքի, այլ՝ մեր իրականութեան, եւ քանի այդ իրականութիւնը չէ փոխած համաձայն առարկայական պայմանների եւ ժողովրդի ցանկութեան, մեր գոյութիւնը անխուսափելի է: Կարող են փոխել զերակատարները. մի անձի տեղը կը բանէ միւսը, բայց զաղափարը եւ այդ գաղափարի իրագործողները կը շարունակեն ապրել եւ կը լինեն այնքան ուժեղ, որքան խոր արմատ կունենան Հայաստանի իրականութեան մէջ:

Այս տեսակէտից, բոլորովին վազաժամ են մեր հակառակորդ բանակից լուող կանչուսութեները, թէ Դաշնակցութիւնը քայքայւում է, թէ նրա շարքերից շատերը հեռանում են, թէ նա կտրւում է հայ կեանքից եւ այն: Վազաժամ են այս ցնծութիւնները, որովհետեւ Դաշնակցութիւնը այսպիսի օրեր շատ է տեսել եւ միշտ էլ գուրս է եկել ճղնաժամից կազզուրւած եւ գոտեպինդ. նոյնը կը լինի եւ այս անզամ: Մի շարք վիթխարի ճակատամարտներից յետոյ՝ Դաշնակցութիւնը քաշւել է նոր գիրքեր: Նահանջի ժամանակ, ի հարկէ, կը լինեն թուլամորթ զասալիքներ, որոնք գողում են իրենց կաշին փերկելու համար. կը լինեն հողերանութեամբ պարտածներ, վհատուղներ, շարքերից գուրս ընկածներ, զաւածաններ, թշնամիւ կողմը անցնողներ եւ այն: Սա սովորական երեւոյթ է պատերազմների ժամանակ, եւ զարմանալ պէտք է միայն, որ զասալիքների եւ զաւածանների թիւը շատ քիչ է մեր շարքերում...

Այսու, Դաշնակցութեան համար պայմանները դասաւորւեցին բառական աննպաստ: Աննպաստ ո՞չ թէ զաղափարական տեսակէտից — մեր զաղափարները մնում են թարմ եւ անխոցելի — այլ արտաքին հանգամանքների չնորհիւ: Ամենից առաջ, ծանր նահանջը եւ Զան-

գեղուրում կրած մեր դժւարութիւնները անդրադարձել են մեր հոգեվիճակի վրա։ Ամենքս զաղաղած ենք եւ իրարից դժոռհ։ Միւս կողմից, նիւթական վատ պայմաններն անտանելի են դարձնում մեր կեանքը տարագրութեան մէջ։ Եւ, վերջապէս, մենք շատ հեռու ենք արտասահմանեան մարմիններից, որոնք իրենց գործունէութեամբ երբեմն հակառակ են երկրի հրամայական պահանջներից բխող քաղաքական գծին եւ տարւում են զաղութային անհող ու ցնորական զաղափարներով, եւ մենք անդօր ենք լինում նրանց ուղիղ դեանի վրա կանգնեցնելու եւ միատարր քաղաքականութիւն պարտադրելու։ Քիչ չեն նաեւ բարոյական ազտեղութիւնները, որոնք տարիների ընթացքում հաւաքել են մեր շարքերում եւ վարակում են մեր կուսակցութեան մարմինը։ Բացի այդ, առաջ են եկել մի շարք քաղաքականութեան հարցեր, որոնք պահանջում են շուտափոյթ եւ լուրջ լուծում։

Այս ինդիքները միանգամայն գիտակցում են մեր ընկերների մեծ մասի կողմից եւ համապատասխան վերաբերումի են արժանանում, իսկ քչերն են միայն թեթև վերաբերում ցոյց տալիս ու զրադաց են «քննադատութեամբ», ու «ներքին հաշիւներ մաքրելով»։ Հետզետէ, սակայն, այս վերջիններն էլ կը սկսեն լմբոնել, թէ տրանունջով ու «քննադատութեամբ» բան դուրս չի գայ, եւ ժամանակն է խելքի գալու եւ գործի սկսելու։ Եւ գործն արդէն սկսւած է։ արտասահմանեան բոլոր շրջաններում մեր կուսակցութեան ներսը կատարւում է նոռն կազմակերպական աշխատանք, որը պէտք է զարդացնել երկու ուղղութեամբ։ մի կողմից պէտք է անողոք կոիւ մըզել պատեհապաշտութեան ու քաղաքական հայեցքների անորոշութեան դէմ՝ հաստատելով կուսակցական մէկ եւ ընդհանուր քաղաքական պէտք է աղատ պահել ներքին համար կայ եւ բարոյական ուժ եւ վճռականութիւն, եւ հայ աշխատաւորութեան ճնշչ մէծամասնութիւնը զարձեալ մեղ հետ է։ որքան եւ կեղծիքներ կատարւեն բոլեւիկների կողմից, սակայն մեր խորին համոզումով Հայաստանը պէտք է աղատ պահել ներքին ցնցումներից ու քաղաքացիական կուսներից։ Եթէ բոլեւիկները գոնէ այս անգամ համամիտ են մեղ, ապա կարելի կը լինի ժողովրդին որոշ ժամանակ ապահովել խաղաղութիւն եւ աշխատանքի հնարաւորութիւն։

Սակայն, մենք բաւական շեղւեցինք բուն ինդիքից։ Ես բնաւ նպատակ չունէի կուսակցական հարցեր յարուցանելու։ զրա մասին դեռ առիթ կը լինի աւելի հանդամանօրէն խօսելու։ Այսուղ իմ նպատակն էր պարզել, թէ ի՞նչ է լինելու մեր հետապայ քաղաքականութիւնը Հայաստանում։


Յօդւածս ուշաղրութեամբ կարդացողի համար, այս հարցի պատասխանը արդէն պէտք է պարզ լինի. վետրւարեան շարժման պատճառը բոլեւիկեան վայրագութիւններն էին։ Այդ վայրագութիւնների վերացումով վերացւեցին եւ շարժման անմիջական պատճառները, ուրեմն, վերացւեց եւ կուի շարունակութեան անհրաժեշտութիւնը։ Մենք շատ լաւ տեսնում ենք, թէ ներկայումս մեր ժողովրդին ամենից աւելի ինչ է հարկաւոր։ նրան հարկաւոր է հանդիսաւ եւ տընտեսական բարելաւում։ Եթէ այժմւայ բոլեւիկները կարողանան գէթ նւազագոյն չափով գոհացնել ժողովրդին, մենք ո՛չ միայն խոչընդուն չենք լինի, այլեւ ամենասանկեղծ կերպով կը թելազրենք մեր երկրի ընկերներին ողնել նրանց եւ արտասահմանում էլ արգելքներ չենք յարուցանի։ Այդպէս էինք մտածում մենք գեկտեմբերին, երբ բոլշևիկները անամօթօրէն խարիցին եւ հասցրին վետրւարին։ Այդպէս ենք մտածում եւ այսօր, եւ այս անգամ էլ, ինչպէս առաջ, միայն իրենցից՝ բոլշևիկներից է կախւած՝ կրկնել հին խաղը, թէ նոր զըրսութիւն առեղծել։ Մենք կուից վախեցող չենք եւ բոլեւիկների մեղ ուղղած ամէն հարւածին կը պատասխանենք մի քանի հարւածով։ մեր մէջ զրա համար կայ եւ բարոյական ուժ եւ վճռականութիւն, եւ հայ աշխատաւորութեան ճնշչ մէծամասնութիւնը զարձեալ մեղ հետ է։ որքան եւ կեղծիքներ կատարւեն բոլեւիկների կողմից, սակայն մեր խորին համոզումով Հայաստանը պէտք է աղատ պահել ներքին ցնցումներից ու քաղաքացիական կուսներից։ Եթէ բոլեւիկները գոնէ այս անգամ համամիտ են մեղ, ապա կարելի կը լինի ժողովրդին որոշ ժամանակ ապահովել խաղաղութիւն եւ աշխատանքի հնարաւորութիւն։

Այս ամենից, սակայն, բնաւ չի հետեւում, որ մենք զաղափարական հահամն ենք կատարում բոլեւիկմի առաջ։ ո՛չ, մենք միայն հահանջում ենք ուսւ սլիմների առաջ։ Մենք հաստատ գիտենք, որ բոլշևիկմը Հայաստանում իշխող կը լինի այնքան, որքան ուսւ զօրք կայ այսակեղ։ Հենց որ ուսւ զօրքը կովկասից հեռանայ, հայ բոլեւիկներն իրենք էլ կը փախէն։ Այդ պատճառով, մենք կարծում ենք, որ Հայաստանի բոլեւիկներից աղատազրւելլ ներքին հայկական խրնդիր չէ, այլ համակովկասեան կամ ընդհանուր ուսւական մի խնդիր։ Մենք հաւատացած ենք, որ հեռու չէ բոլեւիկմի մահը։ իր սոցիալական փորձերի մէջ նա վազուց սնանկ է յայտարարւել։ հասել է արդէն եւ քաղաքական սնանկութեան ժամը, եւ կոյր պէտք է լինել ըստ հասկանալու համար իտւաստանում նկատուող երեւյթների խմասուր։ Այս, շատ հեռու չէ այն ժամանակը, որ մեղ լացով ու սպով ճանապարհ դցող, հայ քաղաքացիներն ու գիւղացիները խնդրութեամբ ու

ծափահարութեամբ կը զիմաւորեն մեզ Հայաստանում : Եւ զբա համար ո՛չ յեղափոխութեան կարիք կայ, ո՛չ տեսուների եւ ոչ էլ ուրիշ սարսափելի բաների . անդամ պրոպագանդի էլ պէտք չկայ : Հայաստանը բոլորովին հասունացած է այդ վիճակի համար, եւ նա այդպէս կը սպասէ մինչեւ որ ոռւսական լուծը վերացւի իր պարանոցից :

Այս այսպէս լինելով՝ երկրում գտնող մեր ընկերները պէտք է շատ զգոյշ լինեն եւ չենթարկեն որ եւ է պրովոկացիայի : Պէտք է լծւել պետական եւ հասարակական աշխատանքին, նպաստել ժողովրդի տնտեսական վիճակի բարելաւման, պետական մեքենայի կարգաւորման, երբեք չմտածել սարոտաժի մասին . պէտք է նպաստել, որ ստեղծւած դրութիւնից Հայաստանը առաւելագոյն օգուտները քաղէ : Որովհետեւ, կրկնում եմ, ինչ որ այսօր, բոլցեւիկների օրով, չինի Հայաստանում, վաղը պիտանի պէտք է լինի մեզ համար : Օգնելով այսօր Հայաստանի վերաշնութեան՝ մենք նպաստած կը լինենք մեր վաղւայ գործին :

1921 թ. Թաւրիզ



ՌՈՒԲԵՆ ԲԵՐԵԲԵՐԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ

II

Ժընեվ 1890 թ. — Առաջին տպաւրութիւններ .— «Գիտական» բանի հմայքը .— «Հնչակ»-ի ծնունդը եւ Հայ յեղափոխութեան պահանջը .— Ընկերային հարցի յանկարծակի հրահրումը Եւրոպայում եւ հայուսանողական միջավայրը .— Նազարեկի գեկոյցը ընկերվարութեան մասին :

«Մարդկային կեանքը մշտատեւ պատրանք է լոկ» :
Pascal, «Les Pensées»

Հասնելով Ժընեվ, 1890 թ. օգոստոսի սկիզբներին, ես հաստատեցի գրեցերական մի համեստ ընտանիքում, որի մօտ ազգականներից էր Ժընեւի համալսարանի ուսուցչակետ Հոչակաւոր գիտնական թաու Ֆուխթը : Վերջինս մեծ չափով օգնեց ինձ համալսարանի լուրսուաթուառում ունենալու մշտական սեղան բնադիտական, մարդարանական եւ, մանաւանդ, քիմիական աշխատանքների համար : Այսօր ես չեմ կարող երախտագիտութեամբ չյիշել Ք. Ֆուխթի անունը, որ իր գասախօսութիւններով, խորհուրդներով ու, մանաւանդ, բնատնեկան յարկի տակ արած զրոյցներով ու պատմութիւններով մի քանի ամսուայ ընթացքում բոլորովին յեղաշրջեց իմ աշխարհահայեացքը տիեզերքի բնական ուժերի եւ, ի հարկէ, իմ ունեցած գաղափարների գերբնական զօրութեան ու հոգու անմահութեան մասին :

Ծերունի Ֆուխթը, երբեմն գերմանական յեղափոխական, մի ժամանակ տաք բանակուի էր ունեցել Ք. Մարքսի հետ, յետոյ, իբրեւ տարագիր եկել հաստատել էր Ժընեւում եւ ամբողջովին նորուել գիտութեան : Նա մարմնացումն էր 19-րդ դարի բանապաշտ գիտնականի տիպարի, որի բմբանումներով ամէն ինչ օրինապատշաճ էր բնութեան մէջ : Գոյութիւն ունէր միայն նիւթը ու սրա ուժը, որ եւ կաղմում է մարդկային փիլիսոփայութեան հիմքը, սկիզբն ու վախճանը . իսկ ինչ որ ողեկան է, զգացմունքի կամ հոգու հետ գործ ունի՝

«միայն միսթիքների ծամծմումն է»։ Նա ընդունում էր Դարվինի հաշտակառ տեսութիւնները, ինքն էլ այդ մարզում որոշ գիտութիւն արել, ասուածացնում էր գիտական փորձերն ու եղբակացութիւնները, անվերապահօքէն ընդունում էր բոլոր գիտական նոր գիտութիւն ու մեղ էլ, իր աշակերտներին, մասնակից անելով «գիտական» մտայնութեան՝ ողեւորում եւ մեր երիտասարդական հայեցքներին պատաստում էր զուտ նիւթապաշտական (գիտական մտքով) աշխարհահայեցք։ Երիտասարդութեան յատուկ հաւատով մենք եւրացնում էինք այն ժամանակայ գիտական տևեալները իրրեւ անհերքէի ճշմարտութիւններ, իրրեւ անկասկածէի եւ գիտութեան վերջին խոռք մարդկային գոյութեան էութիւնն ու գաղտնիքը «զըստնւած էր» մեղ համար, ամէն բան բնութեան մէջ պարզ էր. «զտնւած» էին տիեզերքի բնականոն օրէնքները եւ մնում էր միայն այդ ուղիով ընթանալ...

Եւ, սակայն, հաղիւ կոխած քսաներորդ դարի շէմքը՝ գիտութիւնը մի անսպասելի սսուումով այնպիսի քայլեր արաւ, որ մեր որդեգրած բնագիտական տեսութիւնները, նորանոր փորձերի ենթարկելով, հետազայում, մեղ ցոյց տւին, որ մեր ընդունած «գիտութեան վերջին խոռքից» շատ քիչ բան է մնում — գիտական պատրանքների մի շարան միայն... Բաւական է թէկուզ յիշել հիւէների նոր լորունումները, կամ ելեկտրականութեան յեղացքէ չիմքերը, բնադիտութեան եւ բնախօսութեան անակնկալ գիտուերը, տիեզերքի ու տարածութեան նոր բացատրութիւններն ու ժամանակի «յարաբերական տեսութիւններ»... Յեղաշրջումը բնական կամ դրական գիտութիւնների մէջ այնքա՞ն մէծ էր, որ հետազայում ստեղծւեցին փիլիսոփայական բոլորովին նոր ըմբանումներ մարդու, տիեզերքի ու բնութեան մասին... Բայց չեղունք նիւթից եւ անցնենք հերթով ժըների իմ առաջին ապրումներին։

Ժընեւում ես գտայ ինձ համար բոլորովին նոր եւ իւրայտուկ հայ ուսանողական միջավայր։ Ռուսահայ ուսանողութիւններ, որ եկել էր եւրոպական համալսարաններում ուսանելու համար (Փարիզ, Մոնպէլիէ, Միլանին, Բերլին եւ, մանաւանդ Փընեւ), սպունդի պէս ծծում եւ իւրացնում էր այն ամէնը, որ կապւած էր քաղաքական աղատութիւնների հետ, մանաւանդ երբ հարցը վերաբերում էր թիւրքիայի, Ռուսաստանի եւ մամաւառապէս Հայաստանի վիճակին։ Բայց հայ ուսանողութիւնը սկսել էր հետաքրքրւել ու որդեգրել նաև այն ընկերային ու ընկերվարական գաղափարներն ու հեռանկարնե-

ըս, որոնք այն ժամանակները մէծ ծաւալ եւ ուժգնութիւն էին սկսում առանալ ու զբուկ Եւրոպայի քաղաքական հարցերին զուգընթաց։

Եւրոպայի սուսահայ ուսանողութիւնն ստեղծած իւրայտուկ մթնոլորտը հասկանալու համար պէտք է ի նկատի ունենալ հետեւելալը։ Արդէն ութառնական թւականների կէսերից սկսած, Արծրունու աղատամատական գաղափարները միովին չին զոհացնում ուռահայ մտաւորականութեան նոր հասնող չերտերին, եւ որանք ըս զանելով հայկական հրապարակագրութեան ու հայ հանրային կեանքում քաղաքական մտարումների ձայնակից չեշտեր՝ իրենց հայեցքը ուղղել էին շրջապատի սուս արմատական մտաւորականութեան որոնումների վրա։ Այդ համակրութիւնը դէպի սուս արմատական խառերին, ըստ ինքեան, բնական էր, չնորհիւ սուս կասավարութեան ստեղծած յետագէմ քաղաքականութեան։ Եթէ սուս արմատական մտաւորականութեան հողեկան շարժումները պահանջ էին զգում աւելի թարմ, աւելի աղատ ու առողջ քաղաքական մթնոլորտի, եւս առաւել հայ հասնող երիտասարդութիւնը պէտք է իրեն զգար քաղաքական կապանքների մէջ. սուս կասավարութիւնը մէծ ուժով եւ մէծ չափով սկսել էր նեղ աղդայնական եւ հայհայկական քաղաքականութիւն, եւ ուրեմն, գիտակից հայ երիտասարդութիւնը թէ՛ իրեւ սուս քաղաքացի եւ թէ որպէս հայ համայնքի անդամ՝ տեսնում էր իրեն կատկապած եւ իրած յետագէմ քաղաքականութեան ցանցերում։

Կովկասում, ինչպէս եւ Ռուսաստանի մայրաքաղների համալսարանական ուսանողական շրջաններում, երեւան էին եկել հայ երիտասարդներ, որոնք արդէն որդեգրել էին սուս յեղափոխականների՝ «նարոգովոլոցի» կոչւած ընկերվարականների զաղափարները։ Հետազայում, երբ ստեղծւեցին հայ յեղափոխական կուսակցութիւնները, մենք պատահում ենք թէ՛ Զնչակի եւ թէ Դրօշակի հիմնադիրների շարքերում կարկառուն դէմքերի, որոնք երբեմն ընդունած էին «նարոգովոլոցի» յեղափոխականների ըմբոնումները։ Աղապայ հայ յեղափոխականների մը մասը ընդ միշտ մնաց յարած նարոգովոլոցիների քաղաքական եւ ընկերային տեսութիւններին ու աշխարհահայցի հետեւ, միւս մասը 1889 թւականից արդէն որդեգրած էր միջազգային «Սոցիալ - Դեմոկրատ» ընկերվարական կուսակցութեան գաղափարները։ Եթէ այստեղ միջանկեալ այդ մասին յիշեցի, պատճառը այն է, որ յեղափոխական ընկերվարութեան երկու տարրեր ըմբոնումները, ասեմ եւ աշխարհահայեցքները, դարձան մի տեսակ քար զայթակղութեան և հիմնակէտ երկու հայ յեղափոխական կուսակցութիւնների փոխաղարձ բանակուների, անմիարան զործունէութեան

և թշնամական վերաբերմունքի : Ես գեռ առիթ կունենամ այդ հարցին անդրադառնալու այն չափով որ չափով որ անձամբ ներկայ եմ եղել այդ բանակուիներին, «միութեան» առթիւ կատարւած նամակազրութեան եւ կովկասից եկած բանակցողի (Յ. Լորիս - Մելիքեանցի) առաջարկութիւններին ու խօսակցութիւններին : Այսաեղ անմիջապէս պէտք է ասեմ, որ իմ մօտ, եթէ չասեմ մտերիմ, կապերը ժընեւում հաստատուած Հնչակեան Կենտրոնի եւ Նալզարբէկեան ամուսինների հետ շարունակւեցին մինչեւ 1894 թ. վերջերը, որից յետոյ պաշտօնական նամակով յայտնեցի նրանց, որ չնորհիւ այն բանի, որ իմ եւ նրանց միջեւ եղած սկզբունքային տարածայնութիւնները (յեղափոխական գործունէութեան եւ կազմակերպչական հարցերի վերաբերմամբ) գնալով շատ սուր կերպարանք են ստանում, ես ստիպւած եմ դուրս գալ Հնչակից՝ խզելով իմ յարարելութիւնները Հնչակի Կենտրոնի հետ : Անշուշտ՝ աւելի մանրամասնօրէն եւ իր հերթին դեռ կը խօսեմ այդ մասին :

*
* 2

Զւիցերիայի ժընեւ քաղաքը զեռ անցեալ զարու սկզբներից մի տեսակ աւանդական բնակավայր էր եղած ամէն տեսակ քաղաքական - յեղափոխական տարագիրների համար : Երկրի քաղաքական ազատութիւնները համեմատած եւրոպական բոլոր միւս երկրների հետ՝ այնքան լայն էին և հաստատուն, տեղացի ազգաբնակութիւնը այնքան համբերատար ու միշտ համակիր էր օտարազգի քաղաքական տարագիրների վերաբերմամբ, որ աւանդաբար այդ քաղաքում ապրելու գործել են ե՛ւ Փրանսացի, ե՛ւ իտալացի, ե՛ւ գերման, ե՛ւ լիէ, ե՛ւ ոռւս յեղափոխականներ : Ինքը բնութիւնը, Աչման լճի գեղեցկութիւնը, ըլջապատի Ալյսեան լեռները, Առո և Թոն գետերի տարրելը գոյներն ու տարբեր վաղքը, որոնք որոշ կէտում միանում, խառնում ու հեռանում են, ամէն ինչ, ասում եմ ծնում էր վիպական մթնոլորտ եւ իր կնիքն էր զնում տարագիրների ընկերային - քաղաքական հեռանկարների ու ծրագիրների վրա : Նման մի միջավայրը, բնակունաբար, իր կնիքը պիտի զնէր եւ այն հայ յեղափոխական կուսակցութիւնների վրա, լինին ծնւած ժընեւի գեղածծիծաղ ափերի վրա, թէ այլուր, որոնք պիտի որդեզրէին հայ յեղափոխական գործը :

Մի քանի օր է, որ ես եկած էի Ժլնեւ, երբ վճռեցի գրել Mr. Beniard, Poste restante — «Հնչակ» թերթի զաղանի հասցէին՝ խնդրելով, որ համին տալ ինձ ժամապը թիւն խմբագրութեան հետ։ Անգել էր երկու երեք օր, երբ մի երեկոյ զալլս են ինձ մօտ հաղիւ

սուելած բիխերով երկու երիտասարդներ, արտաքուստ շատ նման իրար, և տեղեկանում են՝ Ե՞ս եմ արգեօք «Ռ. Բերբերեան ստորադրած նամակի հեղինակը։ Ֆրանսերէնից հայերէնի անցնելով՝ ես խնդրում եմ երկու երիտասարդներին բացատրել, թէ իրա՞նք ովքե՞ր են։ — Ես Աղեքսանդր Աթարէկեանն եմ, և կել եմ «Հնչակ»-ի խմբագրի կողմից ձեզ հրաւիրելու, և թէ կարելի է հէնց այժմ, դնալ մեղ հետ միասին, նրա հետ հանդիպում ունենալու համար։

Տալով իմ համաձայնութիւնը՝ ես ինչ որ հարցով դիմում եմ միւս Երկասարդին, հաւատացած, որ նա էլ հայ է : Բայց Ա. Աթաբէկիանը ընդմիջում է՝ ներկայացնելով իր ուղեկցին. «Հա՞ , ծանօթացէք (ոսւերէնի փոխելով խօսակցութիւնը) , սա իմ ընկերն է և բոլոր հայերին ծանօթ բուղզար ուսանող , ինձ պէս բժշկական բաժնի՝ Քոլութիա Ռակալսկի » . . . :

Ծուտով ձանապարհ ենք ընկնում Պ. Beniard-ին տեսնելու, որի
բնակարանը Փընեւի միւս ծայրումն էր գտնում: Ձանապարհին՝
բուլղար ուսանողը կոտրատած ուռւերէնով (Հետազայում լսւ էր
խօսում, եթի ամուսնացաւ մի ուսւ ուսանողուհու հետ) սպատից
ինձ, որ իր ամենամտերիմ բարեկամները Փընեւում հայ ուսանող-
ներն են: Հետազայ ամիսներում արդէն այնքան մտերմացած էի այդ
համակերպի ուսանողի հետ, որ «դու» էինք ասում իրար. նա երա-
զում էր «ստեղծել» Բուլղարիայում «Բուլղար Սոցիալ - Դեմոկրատ
ընկերութական կուսակցութիւն», եւ, պէտք է ասած, այդ երազը
մեծ չափով իրազործեց: Ես դեռ առիթ կունենամ նրա մասին խօսելու
երկարօրէն:

«Հնչակ»-ի խմբագիրը ապրում էր վեցերորդ յարկում, եւ նախ քան վեց յարկ բարձրանալը՝ Ա. Աթարէկեանը կանգնեց փողոցի միջին եւ վեցերորդ յարկի պատուհաններին նայելով՝ սկսեց սուլել այնպէս, ինչպէս առհասարակ գլխերիացիք սուլում են նշան տալու համար։ Շուտով վեց յարկանի տան բազմաթիւ պատուհանները բացւեցին եւ ամէն յարկից գլուխներ երեւացին ու թագնեցին։ Վերջապէս բացւեց եւ վեցերորդ յարկի պատուհանը, երեւաց զանգուր մազերով ու մօրուքով մի գլուխ եւ հայերէն պատասխանեց՝ «կարելի է»։ *)

*) Սուլոցի առքի երկու խօսք. եթի մի շաբաթ յետոյ ևս մենակ այցելեցի Նազարբեկին, ըստ սպառութեան, փողոցի մէջտեղը կանգնած՝ սուլեցի, որ իմաստա՞ տա՞ն է արդեօֆ. սակայն, մոռացել էի գիտերիացիների սուլելու եղանակը եւ զանազան հետիւններ փորձելուց յետոյ, չգիտեմ ինչպես և ինչո՞ւ՝ սուլեցի

Բարձրանում ենք։ Աթարէկը տալիս է զանդի երեք հարւած։ Մտնում ենք մի մեծ սենեակ, մէջտեղը կլոր սեղան, լուսաւորւած վերից կախած ելեկտրական լամպով։ սենեակի անկիւնում մի ուրիշ գրասեղան, որի վրա կարմբագոյն ելեկտրական աղօտ լուսաւորութիւն։ Սեղանին մօտ նստած էր զանդուք մաղերով մարդը՝ թիստէմ, սեւ մեծ մօրուքով, կարճատես աչքերին ֆրանսական ձեւի ակնոցներով։ Վեր է կենում, ձգում է չյանդած ծխախոտը միւս բաղմաթիւ կէս ծխած գլանակների մէջ, երկարացնում է ձեռքը ու աւելացնում՝ «Աւետիս Նաղարբէկ»։ Յետոյ՝ «ծանօթացէք, կինս է՝ Մարիամ Նաղարբէկ»։ Կինը միջամտում է եւ դիմելով ինձ՝ տելացնում է՝ «կարող էք ինձ ասել «տիկին Մարօ» եւ առանց պաշտօնական աղջանունների։ յուսով եմ, որ այնքան կը մտերմանանք, որ առանց «պարոն» կամ «տիկին» զարտակ բառերի էլ ընկերական յարաբերութիւններ կը ստեղծեն... ա՛յ, սա մեր ընկերներին (Հարեւան սենեակից ներս մտնողների մասին), ծանօթացէք։ սա մեր լեւոնն է (Բարսեղ Զաքարեան), սա մեր Յովինանն է (Յովինան Դաւթեան), սա մեր Սաշան է (Աղեքսանդր Աթարբէկեան), սա մեր Խոփոթիւն է (Քոփոթիւ Ռակովսկի) որոնց հետ արդէն ծանօթ էք։ Ու յետոյ, դիմելով նրանց, աւելացնում է։ «Պ. Ռուբէնը «Հնչակ»-ի վաղուցւայ ընթերցողն է ու (ինձ դիմելով) յուսով եմ եւ համակրողը։ մէնք հաւատացած էինք, որ «Առևլիան - Շահ» անունը իր կեղծանունն է։ բանից դուրս է գալիս, որ դա իր մեծ մօր աղջանունն է, որի հասցէտ «Հնչակ» էր ստանում»։

Սկզբում ես շատ զարմացայ որ տիկին Մարօն առաջին քայլից եւ ինձ համար անծանօթ մարդկանց ներկայութեամբ՝ մի ակնթարթում իմ մասին դիտցած ու չգիտցածը դուրս արաւ բերնից, բայց չուտով իմացայ, որ բոլոր ներկայ եղողները նաղարբէկեանների

«Մեր Հայրենիք» երգի առաջին տողի եղանակը ու ժանիցս կրկնեցի. այդ ժամանակ՝ միայն վեցերորդ յարկի պատռահամբ բայցւեց եւ լուեց՝ «կարելի է»։ Նազարբէկին բացարեցի, որ մոռացել էի ընդունեած եղանակը, ուստի փորձեցի հայկական երգով նշան տալ։ Նազարբէկը շատ հաւանեց եւ առաջարկեց իր ծանօթայ բարեկամներին՝ սուլի «Մեր Հայրենիք»-ի առաջին տողը, իբրև նշան միայն հայերի համար։ Հետազայում՝ Յոնան Դաւթեանը վերադասաւով կովկաս եւ Փարսկաստան՝ մտցրել էր այդ սուլոցը, որպէս նշան իր ծանօթների շրջանում։ Երբ «Կրօշակ»-ը հաստատեց Փենտում, 1893 թ., անխօրոք սկսաւ գործածել «Մեր Հայրենիք»-ը՝ իբրեւ նշան իրար զանելու, լինի գիշերայ մրութեան մէջ, լինի իմանալու համար թէ տա՞ն է այս կամ այն ընկերը եւ այլի։ Ո.Բ.

մտերիմ բարեկամներն են եւ «Հնչակ» թերթին շատ մօտ կանգնած մարդիկ։ Շուտով նկատեցի եւ այն, որ այդ տիկ։ Մարօն խիստ շատախոս կին էր, իւրայտառուկ բացականչութիւններով, յամառ, անզիջող տրամաբանութեամբ, անհամբերատար հակառակ կարծիքի վերաբերմամբ, բայց շատրւանի պէս յորդառատ, անսպառ եւ չյողնող (եւ ուրիշին յողնեցնող) խօսքի եռանդով։

Առաջին տպաւորութիւնները միշտ ուժեղ են լինում եւ լուսանկարում են յիշողութեան մէջ։ Աչքիս ընկնում են սենեակի երկու պատերը, որոնց ամբացած էին սպիտակ փայտեայ պահարաններ հարիւրաւոր գրքերով։ զբանեղանի հանդէղ կախած էր մօրուքով ու մեծ մաղերով մի պատկեր (հետագայում իմացայ, որ դա Քարլ Մարքսի լուսանկարն էր)։ Սենեակի միւս պատի վրա ամբացած էին շրջանակների մէջ առած բազմաթիւ լուսանկարներ, որոնց շարքին նկատեցի Բաֆֆիկ, Գր. Արծրունու, Ծերենցի, Գամառ - Քաթիստայի լուսանկարները։ Կար կախած եւ մի այլ պատկեր, որի վրա լուսանկարներ կին նաղարբէկը կանդնած, Գր. Արծրունին եւ տիկ։ Արծրունին նստած ու քիչ ցած ու նրանց ծունկերին յինւած տիկ։ Մարդուն իւսանկարը, ըստ երեւոյթին, քաշած էր 1884 թւականներին արտասահմանում։

— Գր. Արծրունին ձեր մտերիմն է, հարցրի ես Ա. Նաղարբէկին։

— Ե՛ւ այս, եւ ո՛չ։ Ես երբեմն Փարիզից աշխատակցում էի «Մշակ»-ին։ բայց չուտով հասկացայ, որ «աղատամիտ» կոչւած զաղակարների «Երդը Երգած է», ու զաղարեցրի թղթակցութիւններս, մանաւանդ որ «Մշակ»-ի խմբագրութեան մօտ կանգնած աշխատակցներ՝ լէօն, Մալումեանը եւ ուրիշները իմ գրածները «անտեղի» էին համարում ու երեւի կողմից ձգում։ Յաճախ է պատահում, որ որեւէ թերթի աշխատակցը հեռանում է ոչ թէ խմբագրից դժգոհ, այլ այդ խմբագրին շրջապատզ մտերիմներից եւ օղնականներից, բայց ես զոհ եմ, որ մոռացել եմ ժամանակից յետ մնացած այդ լըրագրի հասցէն։ Երեւի զոհ են եւ այն բազմաթիւ գրողները, որ երբեմն աշխատակցել են «Մշակ»-ին՝ Գ. Աղայեանցը, Պալասանեանը եւ ուրիշներ։

Շուտով խօսակցութիւնը զարդաւ ընդհանուր, նախ Պոլսում տեղի ունեցած ձերբակալութիւնների մասին եւ յետոյ վիշելմ Բ. կայսեր եւ շնորհի լեւոն պապի ճառերի մասին։ Լրագիրները հաղորդում էին, որ թէ Վիշելմը եւ թէ պապը, մէկը իր ճառի մէջ, միւր իր կոնդակում, խօսել են ընկերային զգացմունքների մասին, թէ մարդկութիւնը պէտք է լինի աւելի զթասէր զէպի խոնարհ խաւերը

եւ մանաւանդ դէպի բանւոր գտասակարգը, որի տնտեսական վիճակը, չնայած օրն ի բուն աշխատանքին, մնում է միշտ խղճալի, չնորհիւ այն բանին, որ գործարանատէրերը եւ հարուստները մարդասէր եւ գթասիրտ չեն, թէ առաջին ընկերվարական զգացմունքները ունեցած է Քրիստոս, եւ այլ այս տեսակ մտքեր: Սենեկում բոլորը միասին էին խօսում եւ իրենց կարծիքը յայտնում: Աթարէկը Վիլհելմին «կեղծաւոր աւաղակ» էր անւանում, միւսները յայտնում էին այն կարծիքը, որ ընկերվարական գաղափարը «խիստ մեծ ուժ և ստացել»: Ես լուս էի, որովհետեւ բոլորին ինձնից ե՛ւ աւելի խելացի եւ փորձառու, ե՛ւ աւելի կրթւած էի համարում, եւ ասելիք էլ չունէի, քանի որ ընկերվարութեան մասին համարեա ոչինչ չգիտէի:

Ա. Նաղարբէկը, չգիտեմ ինչու, ինձ նայելով յաղթական հայ- եացքով՝ աւելացրեց: «Այս՝ հայրիկո, այժմ այլեւս առանց սոցիա- լիստական հարցի ոչ մի քայլ չես կարող անել. մեր ժամանակները արդէն դառնալու են սոցիալիստական եւ ոչ թէ «մշակական» կամ «նոր - դարական»: Եթէ պապը ու Վիլհելմը խօսում են ընկերվա- րական զգացմունքների մասին, ասել է, թէ ամբողջ աշխարհ անհրա- ժեշտ է համարում ընկերային հարցերի լուծումը»:

Այդ ամենը ինձ համար այնքան նոր էր եւ շացուցիչ, այլ եւ կտրուկ ու անվիճելի իր շեշտով, որ հրաժեշտի ժամանակ ինդքեցի Ա. Նաղարբէկից տալ ինձ մէկ - երկու զրքոյի կամ ձեռնարկներ այդ վարդապետութեան ծանօթանալու համար: Նաղարբէկը ուրախու- թեամբ իր պահարանց հանեց 8 - 10 ոռուերէն եւ ֆրանսերէն զըր- քոյիներ, ասլա եւ «Հնչակ»-ի ծրագիրն ու վերջին համարը, եւ տւեց, առելով՝ «դժբախտաբար, սոցիալիզմի մասին հայերէն լեզով զըր- քեր չկան, բայց քանի որ դուք վարժ էք ֆրանսերէնին եւ ոռուերէ- նին՝ վերցրէք այդ զրքերը, հայ հասարակութեան մէջ արդէն պա- հանջ է զգացում ծանօթանալու զիտական սոցիալիզմին, յուսով եմ, որ այդ պահանջը «Հնչակ»-ը կը լրացնէ»:

Երբ Նաղարբէկ ինձ առաջնորդեց մինչեւ նախասենեակի դուռը, ես՝ մի պահ օգտական զէպից (քանի որ մտերիմ զրոյցներին եւ մըտ- քերին ներկայ էի եւ ուրեմն, ինձնից թաղցնելու կամ վախենալու պատճառ չկար), շունչս մէկ առած հարցը: «Ի՞նչ զրութեան մէջ է հայ յեղափոխութիւնը»: Իմ մի քիչ միամիտ հարցին՝ սեղմելով ձեռքս Նաղարբէկը պատասխանեց: «Յեղափոխութիւնը թրքահայտ- առանում պաւած է. Եթէ այս յաջողութեամբ ընթանայ, շուտով եւ- րոպական մեծ պետութիւնները ստիպւած պիտի լինեն հայկական

հարցով զբազւելու լրջորէն. ի հարկէ, ոչ թէ բարի զգացմունքներից դրված զէպի մեղ, այլ իբենց կոչտ ու պրոլայիք շահերի պատ- ճառով...» :

Որքան էլ մեծ լինէին այն երեկոյ իմ ստացած տպաւորութիւն- ները, այնուամենայնիւ այդ բոլորը ոչինչ էր համեմատած այն ար- պաւորութեան հետ, որ ես ունեցայ, երբ սկսեցի ծանօթանալ ընկեր- վարութեան գաղափարներին. յափշտակումս ա'յնքան մեծ էր, որ ես ընթերցանութեան նւիրեցի օրական 10 - 12 ժամ: Երեկոնները յաճա- խում էի ուսանողական հաւաքոյթները, որտեղ համարեա միշտ զե- կոյցից ու մտքերի փոխանակութեան առարկան ընկերվարութիւնն էր ու նրա հետ կապւած հարցերը: Այդ ժողովներում համարեա միշտ պատահում էի Բարսեղ Զաքարեանին եւ Յովնան Դաւթեանին, որոնք երկուն էլ համարսարանի հասարակադիտական բաժնի ուսանողներ էին եւ ինձ բարդաթիւ զըքեր էին տալիս եւ ես էլ անյագ կարգում, վերազարձնում ու նորերն էի տանում: Տեղի էին ունենում եւ մեծ զեկոյցներ սուսերին լեզով, երբ ներկայ էր լինում ոռու տարագիր եւ Սոցիալ - Դեմոկրատ կուսակցութեան հիմնադիր Գ. Պեխանո- վը. այդ զէպում վարձուում էր մեծ սրահ և խուռն բազմութիւնը լըց- ուում էր սրահը: Հայերից ու ոռուներից զատ զալիս էին բուրդար, սերբ, սլովաք, չեխ եւ լեհ ուսանողներ ու տարագիրներ: Ներկայ էր ինուում եւ Ա. Նաղարբէկը: Պէտքանովի հմայքը շատ մեծ էր. նա խօ- սում էր զեղեցիկ, արտայայտուում էր պարզ եւ տրամարանօրէն. ար- ծարծած հարցերին ոչ միայն լաւ իրաղեկ էր, այլ ինքն էլ արդէն զը- րած էր եւ կամ թարգմանած ինդէլսի եւ Կառուցիկի զըքերը: Պատա- հում էր, որ Պէխանովը անողոք հեղնանքի էր ենթարկում ընկերվա- րականների ամէն տեսակ «կեղծ» եւ «սխալ» լըբանումները Փրանսիա- կան «ըլանքիստ»-ների, ուսւ «նարոգովոլցի»-ների, խոալեւսպահա- կան «անիշխանական սոցիալիզմ»-ի եւ անդիխական «սինտիքալիստ»- ների ընկերվարական տեսութիւնները, ծրագիրները եւ «այլ մանր րութուական» աշխարհահայեցքները:

Այդ հաւաքոյթներում սկզբի ժամանակները ներկայ էին լինում եւ մի քանի «նարոգովալցի»-ներ, որոնք փորձում էին հակածառել վերջինիս մէջ բերած պատմական, վիճակաղբական տեսակներին ու նրա հեղնող շետի հարւածների տակ զըում էին ջարդւած եւ լուսում էին: Այդ բոլորը մեզ վրա մեծ տպաւորութիւն էր թողնում: Ամենքս իննթացած, կամ աւելի ճիշտն ասած, հմայւած էինք «գիտական», «գիտականութիւն» բառերից, իսկ Պէխանովի քարոզած ընկերվա- րութիւնը հո «գիտական» էր. այդ «գիտական սոցիալիզմը», հիմ-

նւած Քարլ Մարքոսի տնտեսական եւ փիլիսոփայական տեսութիւնների վրա, որդեղբառած էր արգէն գերմանական բանուրական կուսակցութեան կողմից, որի ուժն ու ծաւալը օրէց օր մնձանում էր այն աստիճան, որ մինչեւ իսկ գերման կայսրը սկսել էր ի մօսոյ ծանօթանալ այդ կուսակցութեան (Սոցիալ - Դեմոկրատ) պահանջներին եւ հետեւում էր նրա ղեկավարների ճառերին:

Ճակատագրի բերումով եւրոպական արգիւնարերական կնանքի երեւյթները (ընկերային ցոյցեր, բանուրական նոր կազմակերպութիւններ, խորհրդարանական ընտրութիւններին սոցիալ - դեմոկրատների յաղթութիւնները եւ այլ դէմքեր ու հանրային երեւյթներ) համարեա ամէն օր արգարացնում էին Պլեխանովի մարգարէութիւններն ու եղբակացութիւնները: Մեր անձնական կեանքի անփորձութիւնը, երիտասարդներին յատուկ հաւատքն ու ներքին մզումը դէպի նորը, դէպի լաւագոյնը, դէպի ամենայսակը, որ տանում է դէպի «ապագայ մարգկային երջանկութիւնը», մանաւանդ, երբ այդ զգացմունքները յենւած, հիմնւած ու կառչած են «գիտական տեսալների վրա» — չէին կարող մեղ չամողել, որ այս՝ «կայ միայն մի սոցիալիզմ եւ այդ սոցիալիզմը դիտական է ու հիմնւած է Մարքսի եւ ինդէլի ու նրանց աշակերտ Պլեխանովի մէջ բերած ու քարոզած մտքերի վրա»: Աւելին, այդ ընկերվարութեան դադարիարների դարդացումը, տարածումն ու իրազործումը հեռաւոր ապագայ դարերի հարց չէ, այլ ահա՝, այս մօտակայ տասնեակ տարիների... Նրա դարձուածը կեանքի իրական ընթացքի հետեւանքն է ու տրամարանութիւնը, ուստի եւ ճակատագրական. նրա դարմակ ամէն ինչ կը վրձուի... մարգկային ցաւերն ու թշւառութիւնները՝ բարոյական թէ Փիդիքական, նիւթական թէ ողեկան՝ կը չքանան, կը մեռնեն ինքն ըստ ինքեան... Անշուշտ, պէտք է հարթել ճանապարհը. կան արհեստական խոչընդուներ, որ պէտք է հեռացնել, որսէսպի դալիք «ընկերային յեղափոխութիւնը» լինի դէւրին, նւազագոյն զոհերով — ընական դարգացման ընթացքով...: Այդ մտայնութիւնը մենք այն ժամանակները ընդունած էինք համարեա բոլորս, եւ ոչ միայն հայ ուսանողութիւնը, այլ եւ ուսու, լեհ, բուլղար եւ այդ աղղութեանց պատկանած երիտասարդութիւնը. ի դէպ՝ ստացում էին տեղեկութիւններ, ըստ որոնց ուսու մայրաքաղաքների ուսանողութիւնը մեծ թւով մտնում էր նոր կազմակերպւած Ռուս. Ս. - Դ. կուսակցութեան շարքերը: Կրկնում եմ՝ այդպիսի իւրայատուկ հողեկան մթնոլորտ էր կազմւած Եւրոպայի շատ համալսարանների ուսանողական շրջաններում. եւս առաւել այդ օղը խտացած էր ֆընեւում, որտեղ,

1887 թւից արգէն զոյսութիւն ունէր «Հնչակ»-ը եւ որտեղ Հաստատած էր «Պիտական սոցիալիզմ»-ի ուսու կենտրոնը յանձին Պլեխանովի, Զասուլիչի, Աքսելոսդի եւ ուրիշ յեղափոխական տաղանդաւոր դործիչների:

Ու ստեղծւեց իմ եւ միւս հայ ընկերներիս մէջ այն հաւատքը, որ մէծ չափով յիշեցնում էր հաւատաւոր մտհմետականի աղօթքի նախարանը՝ «Միակ Աստամծը Ալլահն է եւ Մուհամմէդը նրա միակ մարգարէն»: Կայ միայն մի խոկտիան սոցիալիզմ եւ այդ՝ մարգարէնիցն է...» :

Մարգսիզմի մասին ես դեռ ասիթ կունենամ անդրադասնալու, քանի որ նա ոչ միայն հայ երիտասարդութեան մտորումների տեսակէտից որոշ դեր կը խաղայ, այլ եւ իրեւ տնտեսական ուսմունք, որսէս պատմահասարակական մերով եւ, մանաւանդ, իրեւ Փիլիսոփայական ըմբոնում, ինչպէս արգէն ասել եմ, զարձաւ ե՛ւ փորձաքար, ե՛ւ քար քայթակութեան հայ յեղափոխական եւ հայ յեղափոխականների միասնական ու համերաշխ զործունէութեան խանդարման տեսակէտից:

Նոյն ժամանակները համալսարանի սրահներից մէկում ես պատահմամբ ծանօթանում եմ մի հայ ուսանողի եւ մի ուսանողուհու, որոնք միասին էին զալիս ու միասին գնում էին զամախօսութիւնից յետոյ: Ուսանողը Քր. Օհանեանն էր, մօտ 23 - 24 տարեկան չէկ ու համակրելի դէմքով, իսկ ուսանողուհին՝ Օր. Մ. Թաղէսսեան (որը մի քանի տարի յետոյ ամուսնացաւ Թիֆլիսից եկած Արովեանց ուսանողի հետ): Իմ զարմանքին, որ նոր ծանօթներս երբեք ներկայ չեն լինում հայ եւ օտար ուսանողական հաւաքոյթներին եւ զեկոյցներին՝ պատասխան են ստանում, թէ՝ «դարտակ բաների վրա ժամանակ չենք ուղղում կորցնել»: Յ. Դավթեանը, ինչպէս եւ Ս. Նազարեէկը յետոյ ինձ բացատրեցին զրա գլխաւոր պատմառը. Քր. Օհանեանը «Հնչակ»-ի հիմնադիրներից մէկն է եղել եւ աշխատակցել է «Հնչակ»-ի առաջին համարների դրաշարական - տպարանական աշխատնքներին, բայց յետոյ, ինչ էնչ անձնական պատճառներով եւ Օր. Թաղէսսեանի աղգեցութեան տակ (որա ու Մարտի մէջ ինչ որ տարակարծութիւններ կային), իսկել էր իր յարաբերութիւնները նազարեէկի ու «Հնչակ»-ի միւս հիմնադիրների հետ (Ռ. Խանազարի ու Կաֆեանի): Շուտով որպանք իմանում են, որ Մ. Փորթուղարեանի հաւաքարական «Արմենիա» երկարաթաթերթում «Հնչակ»-ի դէմ զրոյ ու «Սիւնի» կեղծանունով սոորազրոյ յօլւածների հեղինակը Քր. Օհանեանն է:

Երբ ես եկայ Ժընեւ, «Հնչակ»-ը ոչ միայն չէր զարարեցրած իր

բանակութը «Արմենիա»յի հետ, այլ Պոլսի Յուլիս 15-ի ցոյցից յետոյ՝ է՛լ աւելի սրել էր ու մէկ ճակատի փոխարէն, Երկու նոր ճակատներ է՛ր դառն եւ նրանց գէմ յարձակուում էր. մէկը Մինաս Զերափի «Լ'Առմէնի » Երկամոհայ թերթն էր, միւսը՝ Սվազլը «Հայաստան» փոքրիկ թերթը:

Այդ բանակութը, անշուշտ, սկզբունքային էր եւ իր փոքրիկ պատմութիւնն ունէր. Հայ ուսանողութիւնը ինձ պատմեց, չուտով ես ինքս էլ ծանօթացայ թէ՝ «Արմենիա»յի եւ թէ՝ «Հնչակ»-ի հին եւ նոր համարներից:

Պէտք է ասել, որ սուսահայ մտաւորական յեղափոխականները ո՞չ այն ժամանակները, ո՞չ էլ հետազայում երրեք չեն բնդունած, որ Մկր. Փորթուգալեանը դործոն յեղափոխական է եղել: Գալով Մ. Զերափին ու Սըվազլըն՝ որոնք, իրենց իւրայատուկ մտայնութեամբ, Հէնց սկզբից եղել են Հակայեղափոխական մտածելակերպի ներկայացուցիչներ: Բայց Մ. Փորթուգալեանը որոշ մշակութային ու Հայրենասիրական անցեալ էր ունեցած Վասպուրականում, ծանօթ էր Թրքահայ գլխաւոր գաւառների կեանքին, ունէր իր գրական կողմերը, ունէր իր համակերներն ու կողմնակիցները. իսկ իննսունական թւականներին (1896) արմենականները մինչեւ իսկ որդեգրած էին Հնչակեանների եւ գանհակցականների յեղափոխական դործելակերպը (Վանի ինքնասպաշտանութեան մեծ դէպքը): Բանաւոր պատմութիւնից եւ «Հնչակ»-ի հին համարներից ես իմացայ հետեւեալը.

Երբ 1885 թւականին Նազարեկեան ամուսինները, Ռ. Խանազատը, Կաֆեսնը (Ծմաւոն) եւ ուրիշները գեռ չէին ծրագրած յատուկ յեղափոխական կուսակցութեան ձեռնարկուումը, փորձել էին Մարսէյլի մէջ հրատարկուղ «Արմենիա»յի միջոցով «Հրապարակ իջնել Հայաստանի ազատագլութեան զուտ յեղափոխական ծրագրով, նրանք առաջարկութիւններ էին արել «Արմենիա»յի խմբադրին՝ առատամբական - յեղափոխական ծրագրի մշակումը» եւ, ի հարկէ, ինդրել էին, որ Մ. Փորթուգալեանը նախօրօք իր կողմից «Արմենիա»յի քաղաքական հայեացքները ուղղէ դէպի այդ կողմը, այլ եւ թողնէ «ակնկալութիւններ» մտայնութիւնը թիւրք կասովարութեան կամ եւրոպական դիւնապէտների վերաբերմամբ: Բայց կրկին ու կրկին առաջարկութիւններից ու Փորթուգալեանի լուութիւնից յետոյ՝ խմբակը Նազարեկի առաջարկութեամբ վճռում է Հիմնել իր սեփական թերթը, որպէս արտայայտիչ զուտ յեղափոխական - ապստամբական դործելակերպի: Ա. Նազարեկը ինձ պատմում էր, որ Երբ Մ. Փորթուգալեանը 1886 թ. ստեղծեց «Հայոց Հայրենասիրական

Հնկերութիւնը», յայտարարեց թէ «լոիկ - մնջիկ պիտի դիմէ թերլինի Համաժողովին խոստացած ինքնավարութեան թրքահայ զաւառների համար»: «Այդ գեռ ոչինչ, աւելացնում էր Նաարբէկը, Փորթուգալեանը գեռ յոյսը չէր կորցրած Թիւրքիային դիմելու մեթոդից, ասելով, թէ՝ «այդ կերպով մենք մեր հպատակութեանը պարտքը կատարած կրպանք օամանեան պետութեան հանդէպ»:

Անշուշտ, ուստահայ մտաւորականութեան համար, (մանաւանդարդէն Եւրոպական ընկերային գաղափարներին համակիր ու կամ ընդունած), Փորթուգալեանը իր մտաւոր խիստ համեստ զարգացումով, անդիտակ Եւրոպական քաղաքական - ընկերային նոր հովերին, իսկ գլխաւորը, իր ոչ - յեղափոխականի խառնւածքով՝ չէր կարող զեկավար ուժ ներկայացնել: Հայ հանրային մթնոլորտը թէ՝ Թրքահայաստանում եւ թէ Կովկասում, Բերլինի Հիասթափեցուցիչ համաժողովից յետոյ կարող էր միայն ծնունդ տալ յեղափոխական գործեակերպի. պարապ խօսքը, լացն ու կոծը, աղերսը կամ անձքը արդէն ճանաչւած էին իրեւ իրական ուժից զուրկ աղքակներ: Արդարեւ՝ ոլ ապրել է այդ շրջանին, կամ նրա անմիջապէս մօտ տարիներին՝ յիշում է, որ ութառնական թւականների կէսերին հայ հանրային մթնոլորտը շատ աւելի ծարաւ էր բաղաքական գործիքարման թարմ շունչի, քան թէ անապատի կիզիչ արեւից տաքացած աւազը՝ ցողին ու անձրեւին . . . :

**

Ժընեւի իմ կեանքի առաջին շարաթներից իսկ Նազարեկը տեսնելով իմ անվերապահ համակրանքը դէպի Հնչակեան կազմակերպութիւնը եւ իմ ցանկութեան զիջելով՝ թոյլ տեսց, որ ծանօթանում թէ՝ «Հնչակ»-ի անցեալ տարիների լոյս տեսած համարներին եւ թէ առհամարակ, հատուկառ եղած կամ մնացած արձանագրութիւններից, հիմնաւորման ըրջանին: Պէտք է ասեմ, որ մինչեւ 1890 թ. Հնչակեան կազմակերպութեան պատմութիւնը մեծ չէր: Եօթ - ութ ուստահայ եւ պարսկահայ մտաւորականներ այլեւս կորցնելով իրենց յոյսը, որ «Արմենիա»յի միջոցով կը կարողանան ասպարէկ իջնել եւ Հայ հասարակութեան նոր զործելակերպ առաջարկել Հայկական հարցի վերաբերմամբ, վերջնականապէս վճռում են Հիմնել առանձին, զուտ յեղափոխական կուսակցութիւն թրքահայ Հարցին նիբւած՝ որպէտերիով ուռւ նարողովցիների եւ Փրանսիական ըլանկիստների զործելակերպը, այն է՝ ապստամբական - ահարեկչական պատրաստութիւններ թիւրք կառավարութեան դէմ: այդ մտնակի

ահաբեկչական միջոցները հրաժրելով եւ ուժ տալով թրքահայ ժողովրդի պահանջներին, խմբակի կարծիքով, մէկ կողմից հող պիտի պատրաստէին թրքահայ գաւառների ընդհանուր ապատամբութեան, իսկ միւս կողմից՝ պիտի անփէին եւրոպական մեծ պետութիւններին միջամտել եւ պահանջել թիւրք կառավարութիւնից մի շարք վարչական, քաղաքական եւ տնտեսական բարենորոգումներ հայկական գաւառներում: Այդ բարենորոգումներին, սակայն, պաղայ յեղափոխական կաղմակերպութիւնը, յենւած ժողովրդի զիտակից շերտերի վրա, պէտք է տար այնպիսի ընթացք, որ թրքահայ գիւղացին՝ աղատւած կառավարական բոնութիւններից՝ չենթարկեր պաղապայում նոր եւ ամէն տեսակի տնտեսական կեղեքումների ու շահագործութիւնների ո՞ր կողմից էլ որ երեւէին այդ շաղործութիւնները:

1886թ. Փընեւում հիմնւած նոր յեղափոխական կուսակցութիւնը արդէն 1887թ. ձեւաւորում է «Հնչակեան Յեղափոխական կուսակցութիւն» անւան տակ եւ հրատարակում է «Հնչակ»-ի առաջին համարը: Նոր քաղաքական կուսակցութիւնը եւ նրա հիմնադիրները այդ շրջանին, ինչոքս ասի, սրդելու էլուն նարողովուցի ընկերվարականների քաղաքական - ընկերային ըմբոնումները, մտածելակերպը եւ, ի հարկէ, գործելակերպը: Երկրից ստացւող նամակներից եւ տեղեկութիւններից, եկողների պատմածներից այն տպաւորութիւնն էր ստացւում, որ «Հնչակ»-ի պաղմաշունչ յօդւածները մեծ ընդունելութիւն էին գտնում հայ ժողովրդի բոլոր զանգւածների կողմից: Շատ բան, ևթէ ոչ ամէն բան, հայ գիտակից խաւերի համար նոր էր, թարմ եւ կենդանի «Հնչակ»-ի գրածների ու պահանջների մէջ: Բայց մասնաւորապէս հետեւեալը. նախ՝ ստեղծւած էր մի յատուկ քաղաքական կուսակցութիւն՝ թրքահայաստանի ապատագրութիւնը ապատամբական միջոցներով ձեռք բերելու նպատակով, երկրորդ՝ նա կռւելու էր միապետական կարգերի գէմ (աղդային հարցի շրջանակում), ուրեմն, անկախ թուրք, ոսւս, պարսիկ միապետական կառավարութիւնների օգնութիւններից կամ հակարանքից: Երբորդ՝ նա չէր ստեմանափակում իր պահանջները բերլինի համաժողովում ընդունւած, բայց չիրադործւած, 61-րդ յօդւածի բարենորոգումներով, այլ պահանջում էր թրքահայաստանի ու Պարսկահայաստանի անկախութիւնը, իրրեւ միացեալ հայրենիքի պետութիւն: Եւ, վերջապէս, չորրորդը՝ որ կատարեալ եւ նորութիւն էր, եւ հէնց սկզբից մտահոգեցուցիչ պարագայ, այդ՝ Հընչակեան Յեղափոխական կուսակցութեան ընկերվարական զաղափար-

ներն էին, որոնց իրազործումը նա թէեւ իր գործունէութեան «հեռաւոր ծրագրի» մէջ էր ամփոփում, եւ ըստ երեւոյթին զործունէութեան «զաղափարական պահեստ» էր, բայց գնալով քայլ առ քայլ խճողում էր ու բարգացնում Հնչակի ծրագրած անմիջական զուտ աղդային ապատամբական գործունէութիւնը:

Հնչակի ի յայտ բերած գործունէութեան ընթացքում, Երկութիւնն ու հակասութիւնները թէ՛ ներքին եւ թէ արտաքին գործելակերպի տեսակետից, այն ժամանակները իմ աչքին չէին ընկում. պատրանքները եկան հետազայտմ. բայց 1890 եւ մօտակայ 2-3 տարիների մթնոլորտը այլ էր: Իմ ժամանակակիցների վրայ մասնաւորապէս խոր տպաւորութիւն էր թողել «Հնչակ»-ի վերաբերմունքը 61-րդ յօդւածի վերաբերմումք: Ի՞նչ էր ասում նա:

«Հնչակ»-ը զրում էր 1889թ. սկզբից. «Հնչակ»-ը եւ նրա հետհայ ժողովուրդը պահանջելու չէ եւ, մանաւանդ, աղերսելու չէ Եւրոպայից 61-րդ յօդւածի գործադրութիւնը. այդ յօդւածը բացի մութ եւ երկդիմի բասախաղութիւնից ոչինչ չէ ներկայացնում, քանի որ Եւրոպան չի երաշխառորդում բարենորոգումների իրական գործադրութիւնը, ուստի ոչ մի միտք չունի զիմել Եւրոպային պահանջելով (եւս առաւել աղերսել՝ Փորթուգալեանի, Չերազի կամ Սըվազլը ա լա տունը մնացած պառաւ աղջիկների մտայնութեամբ) այդ յօդւածի գործադրութիւնը. ընդհակառակը, հայերը մէկ անզամ ընդ միշտ պէտք է թողնեն այդ սխալ եւ հայ ժողովրդի շահերին հակառակ ընթացքը եւ իրենց բոլոր ուժը եւ ճիգը զնեն սեփական հայկական ուժի վրա, զործադրելով զրան յեղափոխական - ապատամբական շարժումներով, որոնց նպատակը շատ աւելի ընդարձակ ու մեծ է 61-րդ յօդւածի իմաստից. միթէ դեռ կան Հայեր (բացի կոյր եւ խուլ ծնւած մի քանելի «աղջային» գործիչներից), որ չը հասկանային, թէ Երլինի համաժողովի ձեւականորէն ստաջարկած բարենորոգումները աչքակապութիւն եւ կեղծիք են: Աղջային անկախութիւնը կարող է հետեւանք լինել միայն աղդային սեփական ու իրական ուժի ցուցադրութեան . . .» :

Նոր էր, ասում եմ, մեզ համար եւ հմայիչ եւ այն ձեւակերպումը, որ «Հնչակ»-ը անում էր 1887թ. հրատարակած ծրագրում, ըստ որի, «Հնչակ»-ի նպատակն է յեղափոխել եւ ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովուրդն իր ստրկական զրութիւնից, տալ նրան քաղաքական կատարելութիւն միջամտելու քաղաքական գործերում, վերացնել այն խոչընդուաները, որոնք արգելք են լինում նրա տնտեսական զարգացման, առհասարակ նրա կուլտուրական

յառաջդիմութեան . . .» ու «տապակելով Թրքահայաստանի միապետական կարգերը՝ փոխարինել նրանց հանրային սամկավարական, սահմանադրական կարգերով»: Ու, վերջապէս, «Հնչակ»-ը պահանջում է հայ զիտակից հասարակութիւնից: Ա. Հայ յեղափոխական կործունէութիւն այսօր բացառապէս նւիրւած թրքահայ ժողովրդի դատին պաշտպանութեան եւ լուծման համաձայն մօտակայ նպատակի: Բ) Տալով հայ ժողովրդին տնտեսական կեանքի (հողային եւ արդիւնաբերական) զարգացման ազատ միջոցներ, որոնք կարող են իրագործւել միայն սամկավարական հասարակապետական համակարգով: այդ նպատակներին համեմու համար հայ յեղափոխականը պէտք է սրբագործէ քաղաքական ապստամբութիւնը եւ զրան պէտք է զիմէ այժմ եւ անմիջապէս»:

Մինչեւ այդ կէտար հայ զիտակից տարրերը, եթէ ոչ սմբողջութեամբ, զէթ մեծամասնութեան մէջ՝ անվերապահօքն ընդունած էին այդ մտքերը: բայց «Հնչակ»-ը հրատարակելով իրեն ընկերվարական գաղափարները որպեսպած կուսակցութիւն, նշում էր ընկերվարական համակարգը իրեւ «թէեւ հեռաւոր, բայց միակ իդէալ, որին զիմէլով հայ ժողովուրդը կը գտնէ իր աղդային եւ մարդկային իրական երջանկութիւնը»: Այդ «հեռաւոր» եւ «մօտակայ» ծրագիրների գաղափարը — մինչեւ իսկ 1890 թ. Ժընեվի հայ ուսանողութեան մէջ, որը «Հնչակեան» էր — ծնում էր մերժ ընդմերթ ազօտ կասկածներ աղդային ապստամբութեան տեսակէտից եւ ուրեմն, հարց էր առաջ դալիս, թէ որքա՞ն օրինապատշաճ է «այսօր» իսկ խօսիլ ընկերվարութեան մասին, թէ կուղ «հեռաւոր իդէալի»:

Այդ հանդամանքը մեղնից մի քանիսին ստիպեց խնդրել Ա. Նաղարէկին, իրեւ Հնչակեան կուսակցութեան պարագլուխին եւ «Հնչակ»-ի խմբագրին՝ աւելի լուսաբանել այն հարցը, թէ ինչո՞ւ «Հնչակ»-ը անհրաժեշտ է կարծում ընլոգել, որ նա ընկերվարական հիմունքների վրա է ամրացնում իր աշխարհահայեացքը եւ հէնց այժմ է խօսում այդ մասին ու մինչեւ իսկ ծրագրում է հրատարակել «միջազգային սոցիալիզմի» վերաբերեալ ժողովրդական կամ զիտական գլոբոյներ, — թէ եւ «սոցիալիզմը հեռաւոր նպատակ է» յայտարարւած . . .

Նաղարբէկը համաձայնեց մեղ զոհացում տալ եւ բացառութէ թէ ինչպէս է ինքը հասկանում «սոցիալիզմը եւ նրա անհրաժեշտութիւնը հայի համար»:

Առաջուց նշանակւած էր յատուկ օր: Բեռնից, Ցիւրիխից, Մոն-

պէտիկէից եւ մինչեւ իսկ Փարիզից (Սաքո Ազամիրզեան) եկել էին տասնի չափ ուսանողներ: Այսօր, 48 տարիներից յետոյ, ի հարկէ, զժւար է ինձ մէջ բերել նաղարբէկի մեծ զեկոյցը, բայց յիշողութեանս մէջ ամուր դրոշմած մնացած են զիլստոր կէտերն ու հիմունքները, որոնք ամփոփում էին այսպէս (պահելով, որքան կարող եմ, նաղարբէկի ոնն ու լեզուն, աւելի ցայտուն անելու համար նրա աշխարհահայեացքը):

«Մենք ներկայ ենք մարդկային պատմութեան այն շրջանին, երբ սոցիալական կամ բանուրական հարցը ամբողջ քաղաքակիրթաշխարհում հետզհետէ զանում է այլեւս կենտրոնակէտ, որի շուրջը կտարարում է քաղաքակիրթւած տէրութիւնների քաղաքականութիւնը եւ կուսակցութիւնների ընթացքը: Հին քաղաքական կուսակցութիւնները՝ պահպանողական եւ աղատամտական օրից օր կորցնում են իրենց ուժը, տեղի տալով նոր քաղաքական կուսակցութեան՝ «սոցիալիստական», որը ծնել է աշխատաւոր ժողովայից եւ բնականոն ընթացքով: Ու քանի աշխատաւոր (խօսքին լայն մտքով առած) զասակարգի քանակը մեծանում է եւ զիտակցութիւնը զարգանում, այնքան մեծ եւ անկանուն է լինելու սոցիալիստական կուսակցութիւնների ուժը եւ գործունէութիւնը: Մենք՝ հայերս հրապարակ իջնելով, որպէս ուրոյն քաղաքական կուսակցութիւն, չենք կարող անտարբեր մնալ զէպի սոցիալական ինդիրը, մի խընդիր, որին պատկանում է աղքանի, գուցէ եւ մօտակայ դարը: Ու մեր, ինչպէս եւ ամէն մի քաղաքական մարմնի զիրքը, պէտք է լինի որոշ սոցիալիզմի վերաբերմածք՝ թեր կամ զէմ, մանաւանդ որ սոցիալիզմը հանրամարգկային մի այնպիսի մեծ ինդիր է, որի նըմանները պատմութեան մէջ երեւան են գալիս միայն մի քանի անդամ, եւ ամէն անդամ յեղացնելով աղգերի հանրակացութեան բուլոր կերպերն ընդհանուր առմամբ: Սոցիալիստական հարցը իր մէջ ամփոփում է քաղաքակիրթաշխարհի զիրկայ վերին աստիճանի բարդ հանրակացութեան բուլոր այլ երեւյթների որոշչէ իմաստը, լուծման ձեւն ու եղանակը: Սոցիալիստական հարցը ամէն բան է հասարակութեան տեսակէտից: անտեսական եւ քաղաքական կեանք, նիստ ու կաց, աշխատանքի ու կապիտալի փոխադարձ յարաբերութիւն, զրականութիւն եւ մամուլ, զեղարեւու, կանանց հարց, ամուսնական ինդիր, պատերազմ, գիտութիւն, գպրոց: մի խօսքով, ամէն հասարակական յարաբերութիւնների հետազայ զարգացման ու առաջդիմութեան ձգումներն ու պահանջներն իր մէջ է ամփոփում սոցիալական ինդիրը: Եւ ահա այդ ինդիրը այսօր եկել կանգնել է մարդկութեան առջեւ սպառնական, ամէն բան կլանող, ահաւոր կեր-

պարանքով, պահանջելով շուտափոյթ լուծում։ Քաղաքակիրթ աղղերի հետագայ առաջդիմութեան կարելիութեան միակ պայմանն է այլ եւս հանդիսանում սոցիալական խնդրի լուծումը։ բայց դա բանւորական խնդիր է. այսինքն՝ բանուր, աշխատաւոր ընդհանրութեան դասակարգային պատմական ձգտումներն ու պահանջներն են, որ առաջացրել են սոցիալիստական խնդիրը։ Ծագած լինելով արդիւնաբերութեան ներկայ ձևերի պայմաններից, սոցիալական խնդրդիրն իր հիմքով տնտեսական խնդիր է եւ, հետեւարար, պրոլետարիատի ներկայում ունեցած տնտեսական անմիջական պահանջների ու ձգտումների արդիւնք։ Ահա պրոլետարիատի այդ պատմական ձգտումների եւ պահանջների տեսական արտայայտութիւնն ու ամփոփումն է, որ կոչւում է զիտական սոցիալիզմ կամ մարքսիզմ։ Իրեւ այդպիսին՝ զիտական սոցիալիզմը յայտնուում է միակ միջոցը, որ կարող է լուծում տալ բանւորական - սոցիալական խնդրին, որն այսօր դարձել է հանրամարդկային յառաջդիմութեան խնդրի։ Եւ որովհետեւ այդ լուծումը կարող է տեղի ունենալ միայն ներկայ հասարակական կազմակերպութեան հիմնական յեղաշրջումով, գիտական սոցիալիզմն իր էութեամբ հանդիսանում է յեղափոխական հզօր գաղափար։

« Ու մեր նպատակն է հայութեան մէջ ընդարձակ ծաւալով ուժ տալ գիտական սոցիալիզմի պրոպագանիզմն ու սոցիալիստական աշխատաւթեան. առաջինը սկսելով հայերիս մէջ. ահա երեք տարի շարունակ մենք անում ենք «Հնչակ»-ի միջոցով։ Այս օրենս մենք կը ձեռնարկենք սոցիալիստական բրոշիւրների հրատարակման եւ արդիստով մեր զուտ աղջային յեղափոխական գործունէութեան կաշխատենք տալ հայ յեղափոխականին եւ աշխատաւոր ընդհանրութեան այն զիտական գաղափարը, որ ճշմարտութեան խօսքն է եւ աշխատաւոր գաղափարի շահերի պաշտպան ու նրա համար զործող զինքն է յօդուտ առհասարակ մարդկութեան։ Այդ զիտական գաղափարը նրա ձեռքին միշտ կը հանդիսանայ ամենազօրաւոր զինքն իր պատմական կուռու ընդդեմ ամեն տեսակ բռնուրիների, հարստահարութիւնների, շահագործութիւնների եւ միշտ կը լինի բացարող ու լուսառու գաղափարը բոլոր հարցերի ու երեւոյթների վերաբերմամբ։ Մենք հաւատացած ենք, որ մեր ցանած սոցիալիստական սերմերը չեն ընկնելու մերկ եւ ապառաժ քարերի վրա, այլ մտածման նիւթ, գաղափար ու հասարակական ուղղութիւն կը տան հայ յեղափոխականին, աշխատաւորին, որուիս եւ աղտո մորի, բարի կամքի տէր ու անկողմնակալ հայերին...»։

Ու յետոյ, զիմելով սրահի այն կողմը, որտեղ նստած էինք Յ.

Դաւթեանը, Ա. Աթարէկեանը, Երւանդ Լալայեանը, և եւ, կարծեմ, Վրթանէս Փափաղեանը՝ Նազարբէկը աւելացնում է. «Եթէ այս բացատրութիւնները բաւարար չեն ձեզ համար եւ զուք կը կամենայիք հարցնել, թէ՝ «չի՞ կարելի արդեօք, որ նախ Հայոստանի անկախութիւնը ձեռք բերի ու ապա հետագայում զրադենք սոցիալիստական հարցով», ես կը պատասխանեմ. «Չի՞», ու նախ եւ առաջ՝ որովհետեւ հայ յեղափոխականին համար աւելի պարզ կը լինի նրա քաղաքական եւ ընդհանուր իդէալների նպատակը եւ իմաստը. ապա՝ եւ այն դիտակցութեան անհրաժեշտութիւնը նրա համար, որ հայ ժողովրդին բաւարար չէ քաղաքական ազատութիւնը, եթէ երաշխաւորւած չէ նրա տնտեսական կեանքի զարգացումն ու ապահովութիւնը. զուք էլ ինձ պէս ամէն օր կարգում էք, թէ ո՛ր աստիճան իտալացի ժողովուրդը, որ քառորդ գար է ինչ ձեռք է բերել քաղաքական ազատութիւն ու այսօր աղքատ է ու թշւառ, եւ զաղթում է իր հայրենիքց ու անիշխանութեան գիրկն է ընկնում (լուսում է Ա. Աթարէկեանի բացականնչութիւնը՝ «կեցցէ՛ անիշխանութիւնը»— Ռ. Բ.) *։ Նոյնը եւ բուղարը ու սերբ զիւղացիների եւ աշխատաւորների շահագործւած տնտեսական զրութիւնը.. Այս, հարցը մեղ ամենքիս ծանօթ բուղարացի ուսանող Ռակովստինն. նա ձեզ կը պատմէ, թէ ինչովէս Բուղարիայի յետ ընկած գիւղում բուղարը զիւղացին ծախում է հարեւան զիւղի թիւրքին իր սեփական աղջիկը, կամ փոխարինում է նրան մի ջուխտ եղների հետ, ստանց որոնց անկարուղ է մշակել սեփական հողը։ Եթէ մենք նախօրոք չկը թիւնք սոցիալիստական գաղափարներով ու չպատրաստենք հայ յեղափոխականի աշխարհահայեցքը, նա կը բաւականանայ վարչական ոչֆորմներով հայ ժողովրդի վերաբերմամբ եւ կը մոռանայ Էականը հայ ժողովրդի համար՝ տնտեսական կեանքի բարւոքում։ Մենք, յուսով եմ եւ զուք ամենքդ (եւ զո՞ւ Աթարէկեան, որ առաջին, զուցէ եւ վերջին, անարխիստն ես հայերի մէջ), չեթե կամենայ, որ այն կիւլիզարը, որ իր գեղեցկութեան համար, բռնութիւնն ենթարկեց Մուսա Բէկի կողմից, վաղը, իր աղքատ

*) Աղ. Աթարէկեանը պատկանում էր Միջազգային Անշխանական Ընկերութեան. ամէն անզամ եւ ամէն սեղ նա հականուում էր ընկերվարականներին, հեզիում էր ընկերվարական վարդապետութեան նախատեսած ապագայ հասարակարգը՝ իմեւած «արուեստարիատի դիկտատորիայի» վրա։ Աղեք. Աթարէկեանը իրատակում էր մի փոքրիկ ամսաթերթ՝ «Համայնք». շատ համարելի, իիստ գաղափարական եւ միամիտ երիտասարդ էր. երբեք հայ ուսանողութեան շարքերում ըլ զատ կողմնակիցներ, բայց մինչեւ վերջ էլ չեր վիառում...։ Ռ. Բ.


Եւ սոված ծնողների ձեռքով ծախւի նոյն քիւրդին մի ջուխտ եղներ ձեռք բերելու համար...» :

Եթէ ես Նազարբէկի երկար, ինքնավասահ, կալուկ եւ առարկութիւններ չհանդուրժող զեկոյցի ամփափումը մէջ բերի, նպատակս այն է, որ ցոյց տամ «Հնչակ»-ի, այսպէս ասած, յեղափոխականութեան փիլիսոփայութիւնը։ Մըր՝ երիտասարդներիս համար մի քիչ միամիտ եւ մեծ չափով անփորձ մտայնութեան համար այդ զուտ գաղափարախօսական գեկոյցի, զուտ տեսական ելակետներից ցրւած մտքերի խուրձը թւում էր եւ արամարանական եւ, ի հարկէ, ճշշմարտութեան վերջին խոռքը։ Եւ ի՞նչ կար 1890 - 1891 թւականներին հայ երիտասարդութեան համար աւելի բարձր, աւելի հմայիչ, քան այն միտքը, այն հմայիչ հողեկան դրութիւնը, որ ազդային տենչերի իրազործումը մի հանդրւան է սոսկ, բայց անհրաժեշտ հանդրւան, համամարդկային իդէալներին հասնելու համար։ Ոչինչ այնքան դիւրին չէ, որքան տեսականօրէն դրւած քաղաքական մտքերից անել տրամարանական եղբակացութիւններ, մանաւանդ, երբ այդ մտքերը ձեւաւորւած են գեղեցիկ ճառերի մէջ ու լրագրական սպատաշունչ յօդւածներով, եւ ոչ թէ ամենօրեայ կեանքի բազմազան երանդների ու իրական երեւոյթների վրա են յենւած։

Երբ մի քանի տարի յետոյ յեղափոխական նպատակներով ինձ պէտք եղաւ չփել Փարիզի, Լոնդոնի եւ Բերլինի «միջազգայնական» միջավայրի հետ ու անձամբ ասպրել Աթէնքում (որտեղ տեղափոխած էր «Հնչակ»-ի կեզրոնը), այլ եւ այցելել Պոլիս, ինձ համար արգէն պարզ էր, որ ամենագեղեցիկ ու վսեմ ծրագիրների տրամարանական եղբակացութիւնները՝ զարնելով փոթորկայոյց յեղափոխութեան կոչտ իրականութեան՝ կորցնում են իրենց հաւասարակշուութիւնը, ապա եւ ծնունդ են տալիս փոխադարձ հակասութիւնների։ Զէ՞ որ յեղափոխութեան հիմնական պայմանը նախ եւ առաջ դրւած արտաքին խնդրի ու ներքին կարեւորութիւնների համապատասխանութեան մէջ է։

Բայց նախ անցնենք 1890 - 91 թ. յեղափոխութեան հետ կաստած դէպքերին ու գէմքերին։

(Շարունակիլի)



ՎԱՀԱՆ ՄԻՒՆԱԽՈՐԵԱՆ

ԱՐՅԱՀԻՒՐՔԻ ՕՐԵՐ

X

ՀԱՅՈՒՆԹԵԱՆ ԲԵԿԱՐՆԵՐ

Աշուն էր, Սամանի մեղմ աշունը։ Լոյսը բացւելուն պէս, բղըկտած ամպերը գեղերում էին երկնքում։ Ապա շարքերը խապացնելով, թանձրանում ու նստում էին թուամանի բլուրներին, լանջերին։ Բայց երբ արեւը բարձրանում էր, հաւաքում էին փէշերը եւ չըում։ Եւ սկսում էր մի պայքար։ արեւը հետապնդում էր ամպերի զանգաղարի կարաւանները, անցնում նրանց թիկունքը, ցրիւ տալիս, իր սլաքներով ծակծկում ու որ եւ է ճեղքից նորից զուրս գալով՝ անվրդով շարունակում էր յաղթական ընթացքը։ Օրը յիշեցնում էր դեռ երէկ անցած գարունը։

Այդ օրերին հիւանդանոցի կեանքը անցնում էր քաղաքական մեծ գէպքերի աղղօցութեան տակ։ Առաւօտեան, ինչ որ ձեւով, օրւայ լուրերը համնում էին զրամեղից անցնում մեծ ուրաչը, ուր պառկած էին մօտ քառասուն թիւրք հիւանդներ։ Նրանց ստուար մտար պատկանում էր քաղաքի ունեւոր դասերին։ Բայց կային նաեւ յօդացաւով տառապով մի քանի խեղճ ու կրակ նաւալարներ։ Մէծ մասամբ երիտասարդ, զանազան հովանաւորութիւնների շնորհիւ հիւանդանոց ընկած, «թիկունքային» գործերի հակամէտ այդ մարդիկ գլուխ էին պահում պատերազմի օրերին։ Բայց անկեղծօրէն խանդակառում էին պատերազմի յաջող լուրերով եւ օրը օրին աւելի ու աւելի ողեւորում ճականներում արին թափող հայրենակիցների յաջողութիւններով։ Եւ առիթն էլ անպակաս էր։ Հեռագրական գործակալութիւնը ամէն օր հաղորդում էր մեծ յաղթութիւնների մասին, որոնք ոչ մի ճեւով չէին ներգանակում երկու ամէն առաջ Գաւախում շրջան անող լուրերին։ «Կայսերական բանակ» այժմ հրաշքներ էր գործում։ Եւ աշխարհ հեծում էր թուրք - գերմանական բանակների յաղթական հարւածների տակ։ Գերմանացիները ամէն օր հողեր, քաղաքներ, բերդեր էին զրաւում։ Կովոյի, Կրողնոյի պէս առաջնակարգ բերդերը ջարդում, փշրում, նւաճում էին զիւրութեամբ։ Վարչաւան պարպւում էր։ Գերիների թիւր հաս-

նում էր առանեակ, հարիւր հազարների: Հրդեհով բանւած անտառի պէս, թուսաստանը ճարձառում էր... Մակենդէնի, Հինդէնրուրդի անունները ըրջան էին անում թիւրք հիւանդների մէջ՝ հիացման, հրձւանքի բացականչութիւններով: Հաղորդագրութիւնների մէջ սովորաբար մէկ - երկու խօսք էր լինում նաև անդեւ Փրանսական ուժերի շարժումների մասին, որոնք ինչ որ տեղ մէկ կիւսմեար առաջ էին գնում, աղա, մէծ զահեր տալով՝ երկու կիւսմեար յետ դառնում: Գրւում էր նաև խալացիների մասին, բայց գաւեշտի ձեցոյում, որից մէկ քայլ ոչ յետ, ոչ առաջ էին գնում: Իդոնցօն և իտալացիները հոմանիշ հասկացողութիւններ էին դարձել: Եւ ամէն արտիստների նիւթ էր այդ արդահատելի «Թորիոն»:

— Օլա՛ն, իգնիսո մի՞ օլտըն պաշըմըզա... Մահճակալին գամւած հիւանդին անւանում էին «Իգնիո»: Երբ Շիւքրի էֆէնդին կարդում էր հաղորդագրութիւնը, հասնելով խալացիներին՝ կանդ էր առանում ու նայում. այն ժամանակ բալորը միասին գոչում էին՝ «Իգնիո», և Շիւքրի էֆէնդին, իրօք որ, կարդում էր իդոնսոյի մասին:

Հաղորդագրութիւնների մէջ մէծ տեղ էին բանում Գելիպոլուի հերոսամարտի դրապները: Կում - Կալէ, Կաղա - Թէփէ, Սէէտ - Էլ - Բար մի - մի «Եւարայրի գաշտեր» էին դարձել: Նեղուցներէն ներս անցնել փորձող ամէն մի սազմանաւ անմիջապէս խորտակում էր: Անդէւ Փրանսական ուժերի գոհերը ամէն օր հաշում էին տասնեակ հաղարներով: Յատուկ պարձանքի նիւթ էր կազմում Զանաք - Կարլի հերոսամարտը, որի առթիւ յօրինւած «Զանաք - Գալէ իշխուէ վուրտուլար պէնի» նոր երգը արդէն ըրջան էր անում թիւրք հիւանդների մէջ:

Աղա հասնում էին լուրեր հեռաւոր Սուէդից, ուր հերոսական կոխներ էր մզում Զէմալ փաշայի բանակը և ուր եղիստացիները այսօր կամ վազր պէտք է միանային թրքական ուժերին՝ անդիւցիներին դուրս քշելու համար:

Սեպտեմբերի վերջերին բարձր տրամադրութիւնները նոր թափ ստացան, բուլղարացիների պատերազմին մասնակցելու առթիւ: Գերմանական յաղթական բանակին Պոլիս մտնելլ օրերի հարց դարձաւ: Աղա սկսեցին հանդէս դալ յաղթութեան նոր դափնիներ՝ իւսուր, նիշ, Բելլրադ: Ու Զերնոգորիայի, Ալբանիայի բարձունքներից սկսեցին ծովը թափւել սերբերը... Միաժամանակ հրաշքներ էր

գործում թրքական բանակը Միջագետքում. աղջային հերոս Նուր - կղդինը ջախչախում էր անդլիական ուժերը կուտ - էլ - Ամարայի տակ: Նոյն օրերին թշնամին, նեղուցների եղերքներին, անկարող դիմագրաւելու թրքական գրոհները՝ դանւում էր ծովը թափւելու դառն ամկատագրի առաջ: Բայց այստեղ էլ նրան սպասում էին գերմանական անհաշխ ընդհանովեաները եւ փրկութիւն չկար...

Յայտնի չէր միայն, թէ ինչ է կատարւում կովկասեան ճակատում: Իրականին մէջ այդպիսի մի ճակատ, կարծես, գոյութիւն էլ չունէր: Ինչ որ կոխներ կային Ռուսաստանին սահմանակից պարսկական հողերում, ուր ազգակից ժողովուրդը պատրաստուում էր միանալու թիւրք յաղթական բանակին ու նրա հետ միասին մտնելու Բագու, նւաճելու Աֆղանիստանը եւ ուրքի հանելու Հնդկաստանը...:



Մմքել ու բարոյալքւել էինք իսպառ եւ բախտը մեղ վիճակել էր լսողի եւ դիտողի գրութեան մէջ լինել:

Աղիկ աղան, որ իր հին բարեկամութիւնը նոր պայմաններում էլ քաջութիւն ունեցաւ անխախտ պահելու, դեռ իմ գալուց առաջ մըտերմացել էր Քրիստոսառուրի հետ եւ «Ասր» նամազը մեր սենհեակումն էր կատարում: Արեւը Թոսամանին չոքելուն պէս, նա ներս էր մտնում, իր քառակուսի փոքրիկ խալին պատի տակ փոռում, ծընրագրում, անկիւնաձեւ կանդնում, երկարում ու ձեռքերը ոտքերին, ծնկներին, ականջներին գնելով՝ խոնարհումներ ուղղում բութ պատին: Այնուհետեւ էկմքը յառում էր առաստաղին եւ երգաձայն մըրմնջում

— Ալահ էկրէր: Էլիկտէօ՝ էն լա իլահէ իլլալա՛հ: Էլիկտէօ՝ էն նէ Մուհամմէտ բախտլիլա՛հ: Հայեա ալասպահ: Հայեա ալալիպալահ: Կատկամէդիս սպահ: Ալահ էկրէ՛ր, լա իլահէ իլլալա՛հ...

Ամէն նամազից առաջ, նա հոգեակս սաստիկ ճնշած էր լինում՝ անհաշխ մեղքերի, սայթագումների ծանր դիտակցութեան տակ: Բայց նամազը կատարելուց յետոյ, բոլոր մեղքերը միանգամից ըըքանում էին, և Աղիկ աղան կայտառ տեսք էր ստանում: Այն ժամանակ նա նստում էր իր փոքրիկ խալիի վրա, ծունկի մէկը ծալսւմ եւ միւսով անկիւն կազմելով, պատմում «Ակ - փաշայրի» դէմ Պլեւնայի տակ մզւած կոխների մասին: Միայն Օսման փաշան մէկ կուի մէջ եաթաղնով յիսուն սուս զօրք էր սպանել: Եւ Աղիկ աղան իր սեփական աչքերով էր տեսել, թէ ինչպէս ամէն մի այդպիսի կուից յետոյ, քարտէղի վրա զնդասեղներ էր ցցում Շեւկէտ փաշան...

— Օ՛, եթէ հիմիկւան փաշաներն էլ նրա պէս լինէին, պատերազմը վաղուց վերջացած կը լինէր...

— Եւ, վերջապէս, ի՞նչ համեմատութիւն կարող է լինել այժմեան եւ առաջւայ կուխների մէջ. այն ժամանակ ասկէրները, եաթաղանները քաշելով, նետուում էին հրապարակ ու գոռում՝ «է՛յ, մոռկ'վ, եթէ տղամարդ ես, առաջ եկ»։ ոռուներն էլ հեռւից գոռում էին՝ «կարաշօ», «կարաշօ» ու վրա տալիս։ Եւ սկսում էր կոխը, շրախկ - շրախկ - շրուխկ, տուր թէ կը տաս՝ գլխին, փորին, կողերին, մինչեւ որ կամ այս կողմն էր սաղ մնում, կամ այն...

— Իսկ հիմա՞ մտնում են ծակերի մէջ եւ այնտեղից գողի նման երար վրա կրակ տալիս...

Այո՛, այդպիսի բացձակատ մի մեծ կուի մէջ էր, որ Ազիզ աղան թեւէն վերաւորեց.

— Կոխը տեղի ունեցաւ մոռչչուկում, Արար - թէվէր տակ եւ այն էլ ի՞նչ կոխւ...

Բայց Ազիզ աղան, մէկ վէրքի պատճառով կուից չքաշւեց. ընդհակառակը, իր մարդկանցով միացաւ Սիւլէրման փաշայի զօրքերին, մինչեւ որ այս քաջարի փաշան Շիպկայի տակ անյաջողութեան հանդիպեց...

— Զասե՞ս, թէ ի՞նչո՞ւ...

— Է, հարկաւ առանց խոչոր պատճառի այդպիսի բան չի լինիր, դէմքին ցաւակից հետաքրքրութիւն ձեւացնելով ասում է Քրիստոսութը, որին քաղաքական դրութեան այդ խանդավառ շրջանում իր բախտին էին թողել:

— Այո՛, այն ժամանակւայ սուսն էլ քաջ էր... Հէյ դիտի գոջանուկով, հէ՛յ, ասում է Ազիզ աղան՝ հատ - հատ դարձնելով համբեչը... :

**

Հոկտեմբերի կէսերին ոտքի ելայ։ Ապա Քէմալ բէյի խորհրդովքիչ - քիչ սկսեցի ինձ քաշքել անթացուպերի օդնութեամբ։ Բայ Քէմալ բէյի ոտքերիս միակ թէկութիւնը այդ էր եւ դուրս եկաւ, որ ճիշտ էր։

Հիւանդանոցը, պատշգամբում, տախտակի պատով բաժանւած էր երկու մասի՝ կանանց եւ տղամարդկանց բաժինների։ Վերջինը բաղկացած էր չորս լինդամբական սեղաններից եւ մի մեծ սրահից։

Մեր ձախ կողմի սենեակում պառկած էր կողից վիրաւոր մի յոյն, որի գրութիւնը ծանր էր։ Յաջորդում կային երկու յոյներ, որոնցից մէկի ստքերը անդամահատել էին հիւանդանոցում, իսկ միւսի կոնքը վշրել էր արձիճի գնդակը։ Բոլոր այդ գէպքերը տեղի էին ունեցել շրջակայ զիւղերում, մուհանիրների հետ եղած ընդհարութների ժամանակ։ Աջ կողմի սենեակում կար մի թիկնեղ, բարձրահասակ յոյն երիտասարդ, որի անունը Պանայեռու էր։ Նա հիւանդանոցի դլաւուր բժշկի՝ ծործի բէյի պատականն էր ու, երեւի, վաղուց արդէն ապաքինած էր, եթէ որ եւ է հիւանդութիւն էր ունեցել։ Պանայեռու պատային տրամադրութիւններով օժտւած մէկն էր եւ սատիկ ասում էր թիւրքերին, զիւղերում եղած գժւարութիւնների պատճառով։ Հիւանդանոցի վերի յարկը փոքր էր. այնտեղ էր ապրում ֆանին եւ այնտեղ էր պառկած նաև եսայի Մուղալեանը։

Պաշտօնէութեան մէջ ընդհամենը երեք թիւրքեր կային՝ Աղիզ աղան, Քէմալ բէյը եւ հիւանդանոցի վարիչը։ Վերջինը աւելի նման էր իւղաներկ պատկերի, քան մարդու։ Բարակ շուրթերը պրկւած էին, դիմագծերը անշարժ։ բարձրահասակ, թաւ, ճերմակ մօրուքով, զուսպ, ցից ու հանդիսաւոր, կարմրաթուշ մի ծերունի։ Նա ոչ ոքի չէր բարեւում եւ չէր պատասխանում բարեւի։ Բնաւ չէր զգացւում այս մարդու կարեւորութիւնը հիւանդանոցում։ Եւ միայն Քրիստոսառուն էր, որ ամէն առաւօտ լեզապատառ ասում էր՝ «Եկաւ» եւ կէսօրից յետոյ ժպտալով, թէ՝ «գնաց»։

Քէմալ բէյը պարզ, հասարակ եւ շատ համակրելի մի մարդ էր։ Թուխ, բարի գէմքին ժպիտը միշտ անպակաս։ Քրիստոսառութիւն հետ այժմ միշտ կատակում էր, բայց երբեք չէր յիշեցնում «վէրքը»։ միայն երբեմն շինծու լրջութեամբ ականջին ասում էր, թէ՝ «ինչ շալլահ, էյի օլուր»...

Ծործի բէյին մի անդամ միայն տեսայ, երբ գրութիւնս շատ ծանր էր, եւ ֆանին նրան կանչել էր։ Նա աշխատում էր հիւանդանոցի երկու բաժինների մէջտեղը կառուցւած վիրաբուժարանում, ուր այցելում էր միայն այն գէպքում, երբ գործողութեան կարիք էր լինում։ Հիւանդանոցում, դլաւուր բժշկի հանգամանքով, հատատւել էր Պոլսում ունեցած աղդեցիկ կապերի շնորհիւ։ Բայց լաւ թէկի համբաւ ունէր։

Հիւանդանոցի քոյրերը, թուզ վեց - եօթ հոգի, նոյնպէս յոյներ էին եւ փաստօքն նրանք էին, որ, ֆանիի դլաւուրութեամբ, վարում էին բոլոր գործերը։ Վերջինը խոհուն, իր գործին գիտակ, տարիքն առած մի աղջիկ էր։ Մանկութիւնը անցրել էր Պոլսու Հայերի շրջանում եւ առանց գժւարութեան խօսում էր հայերէն։ Նա

էր հսկում հիւանդների բժշկութեան վրա եւ վարում հիւանդանոցի ընթացիկ վարչական աշխատանքները :

Քոյլերից երկրորդը, թանձրամարմին Կիրեակին, որի մէջ մի անմաքուր դեղեցկութիւն կար, գեռ երիտասարդ որբեւայրի էր : Ասում էին, որ նախապէս շատ հարուստ է եղել, բայց ամուսնու մահից յետոյ հարստութիւնը վատնել է զանազան քաղաքներում գնումներ կատարելով եւ ընկնելով Սամսոն՝ դարձել է քոյլը : Նա միշտ երազեկ էր հիւանդանոցում, դրասենեակում, խոհանոցում, դուրս տեղի ունեցող դէպքերին ու զրոյցներին : Եւ եթէ մի բան յանկարծ նրան յայտնի չէր, տարակուսանքով վեր էր հանում յօնքերը, այսինքն թէ՝ «այդ ինչպէս է որ չգիտեմ» :

Երրորդ քոյլը, ծաղկափթիթ էլին, մի հեղահամբոյր աղջիկ էր : Ամէն առաւոտ նրա աչքերը մեծ, վտիտ ու կենսուրախ էին . կէսօրին փոքրանում էին . իրիկնամուտին դրեթէ քնած էին : Զեռքերը միշտ թոյլ ու ծոյլ էին, բայց կատարում էին իրենց վիճակած դործերը այնպիսի ձկուն ձեւով, որ, կարծես, թէ աշխատանք չէին, այլ շարժուձեւի վարժութիւն :

Մնացած քոյլերը աշխատում էին կանանց բաժնում, խոհանոցում եւ լւացարանում :

Հոկտեմբերի վերջերին պաշտօնական հաղորդադրութեան լուրերը նւազելով՝ յանկարծ զադարեցին : Ապա յոյն հիւանդների մէջ սկսեցին շշուկներ լսել կովկասի ճակատում թիւրքերի կրած մի խոշոր պարտութեան մասին : Արդոււլ - Քէրիմ փաշայի բանակները ջարդ ու փշուր էին եղել Գլիճ - Գեղուկի տակ եւ ոսւսները դրաւել էին Մանադկերտը, Վա՛նը . . . Ուրեմն, ճիշտ էին Գաւախի բժշկի առածները : Եւ սակայն այդ օրից մինչեւ հիմա անցել էին չորս երկար ամիսներ . . .

Միաժամանակ սկսեցին շրջան անել լուրեր անհաշիւ յոյն փախստականների մասին, որոնք ասպատակում էին ծովեղերքի թիւրունքներում : Իրակլի տւած հատ ու կտոր տեղեկութիւններից այս լուրերը տարբերում էին նրանով, որ այժմ խօսւում էր նաեւ հայ փախստականների մասին, որոնք իջել էին ներքին դաւանութիւններից :

— Վեզիրքէոփրեկից մինչեւ նիկասր այժմ լիքն են յոյն - հայ փախստականներ : Եւ ընդամենը մի շաբաթ առաջ արիւնահեղ ընդհարումներ են եղել ժանդարմների հետ Ալաշտի շրջանում, ասում էր Պանայեռտը, որ, ըստ երեւոյթին, քոյլերի միջոցով յարաբերութեան մէջ էր դրսի հետ :

Թիւրք հիւանդների տրամադրութիւնը գնալով ընկաւ :

Մէկ - երկու օր յետոյ յունաց թաղում զանդւածային խուզարկութիւններ սկսեցին, որոնք թէեւ ոչ մի արդիւնք չտւին, բայց պարզեց, որ յոյների մօտ բաւական թւով հայ երեխաններ կան : Եւ մի ծանուցում ելաւ, որի համաձայն յոյները պարաւորուում էին երեք օրւայ ընթացքում արձանագրութեան յանձնել իրենց մօտ պահարած երեխաններին : Յոյները ենթարկեցին, թէեւ ոչ բոլորը : Կիրեակիի ունեցած տեղեկութիւններով, յանձնւել էին երեքից վեց տարեկան երեխաններ, որոնց թիւը բաւական մեծ էր՝ 60 - 70 մանչ, աղջիկ : Ոստիկանութիւնը նրանց տեղաւորեց քաղաքապետարանում եւ սկսեց բաժանել թիւրք բարեւարների մէջ : Ամէն մի թիւրք, որ ցանկանում էր այդ որբերից մէկն ունենալ, կարող էր դիմել քաղաքապետարան եւ նրանց միջից ընտրելով հաւանած մանշը կամ աղջիկը՝ իր հետ տանել : Ո՞ւմ էր տրում, որի՞ երեխան, ի՞նչ պայմաններով՝ յայտնի չէր : Մի քանի օր յետոյ այդ փոքրիկների մնացորդները, մէծ մասամբ հիւանդ, բերին հիւանդանոց եւ տեղաւորեցին կանանց բաժնում . . .

Մենք այդ օրերին իրար էինք անցել այդ դէպքի զատճառով եւ ի զուր աշխատում էինք հասկանալ, թէ ովքեր են : Բայդ հիւանդանոցի թիւրքերի համար բոլորովին աննկատելի անցաւ : Այժմ նըրանք օրն ի բուն խմբում էին իրար մօտ եւ փափսուկով ինչ որ զբոյցներ էին անում :

Ամէն գրութեան եւ միջավայրի յարմարւելու իր արտակարգ ընդունակութիւնների շնորհիւ, Քրիստոսառութիւն երեմն յաջողուում էր նրանց մէջ մտնել եւ այդ փափսուկները հասկանալ : Բանից դուրս եկաւ, որ մի մէծ յարձակում է սպասուում, Սեւ Ծովի ոռւսական բովանդակ եղերքների վրա : Իրը թէ, ցամաքահանման մեծ պատրաստութիւններ էին տեսնուում : Իրը թէ, ամէն օր դերմանական բնդովեաններ ներս են անցնում նեղուցներից եւ թրքական ընդծովեանների հիասին ցանցերով պատում ոռւսական ծովեղերքը՝ նրա ծովային բոլոր ուժերը միանգամից խորտակելու համար : Իրը թէ, միաժամանակ եւ միանդամից պիտի մաքրէին թրքական եղերքները ամէն կարգի փախստականներից, աւաղակներից :

Քիչ - քիչ այս զբոյցները դադանիք լինելուց զադարեցին եւ ստեղծւեց մի դրութիւն, երբ ամէն վայրկեան կարելի էր սպասել յարձակման : Երբեմն ենթարկութիւնը իրողութեան բնոյթ էր ստանում եւ ծովի մակերեսին յայտնած որ եւ է ամպի կտոր կարծւում էր թրքական զրահառորների ծուխ : Այդպիսի դէպքերում ընկած տըրամադրութիւնները բարձրանում էին, բայց նորից ստեղծւում էր

Հոգեկան հիւանդագին տրամադրութիւնը, որ հիւծում է մարդուն:

Մի իրիկնամուտ ընկած էի մահճակալիս, երբ յանկարծ հիւանդանոցի համը լոռութիւնը աղմկւեց.

— Թախտէլպահա՛ր... Թախտէլպահա՛ր...

Քրիստոսուրը չկար: Անթացուպերիս օգնութեամբ՝ մօտեցայ արակի չէմքին. աղմուկը անսակելի էր.

— Եաշասը՞ն... Եաշասը՞ն... Թախտէլպահա՛ր:

Բոլոր հիւանդները խմբած էին վերջին երկու պատուհանների մօտ, որտեղից պարզ երեւում էր ծովը: Մէկը հարցմանս սիրավեր պատասխանեց, որ թրքական մի ընդծովեայ է եկել եւ խարիսխ նետել ծոցում: Առաջ անցայ: Պատուհաններից անվերջ լսում էին բացականչութիւններ.

— Պա՛գ, պա՛գ, պագ...

— Ֆա՛հ...

— Բո՛ւ եանա պագ...

— Կէօրտի՞ն մի...

— Օլա՛ն, էկօր սըն, նէ՛ սըն...

Բայց հազիւ մօտեցել էի պատուհանին, երբ խորունկ հիւսթափութեամբ մէկը դոչեց.

— Օլա՛ն, էօրտէֆ տըր, պէ՛...

Պարզւեց, որ ընդծովեայ կարծւածը բաղ է...

Անկարեւոր այս դէպքը մի տեսակ շրջադարձ եղաւ. թիւրքերի տրամադրութիւնը վերջնականապէս ընկաւ:

**

Նոյեմբեր ամիսն էր: Մեղմ, անվրդով օրն ի բուն մազւում էր հազիւ նշմարելի անձեւեւ: Առաւօտը մի պահ արեւի ցոլքեր խաղում էին պատուհանի վեղկերին: Ապա յանկարծ մթագնում էր սենեակը ու ժամեր յետոյ լսում չէնքի տանիքից թափւող անձրեւի թանձրացած կաթիլների համաչափ շփշփոցը:

Հիւանդանոցը այժմ բոլորովին լուռ էր, իսկ լոռութիւնը այդ օրերին միշտ չարազուշակ էր: Յոյն - թրքական յարաբերութիւնները գնալով վատանում, բարդանում էին: Գլխաւոր հիմքը Յունաստանի երկդիմի ընթացքն էր, բայց կային եւ տեղական պատճառներ: Թիւրքերի շառկներից կարելի էր գալ այն եղբակացութեան, որ բուն ններքին թշնամիները» յոյներն են եւ բոլորովին ի զուր են ոչնչացւել հայերը: Բայց քանի որ անմեղը արդէն մեռել էր, «մեղաւորի» դոյութիւնն էլ անհանդուրժելի էր:

Ամառուայ սկզբներին տեղահանւեց յունական Գատը - Քէօյի բընակչութիւնը եւ մեծ մասամբ ջարդւեց. զիւղը յոյն փախստականների բոյն էր նկատել: Իրականի մէջ վիախստականնութիւնը տիրող դըրութեան հետեւանքն էր եւ թիւրք փախստականների թիւը նտաղ չէր յոյներից: Դէպքը սաստիկ աղղել էր յոյների վրա. քոյրերը, յոյն հիւանդները խիստ մտահոգւած էին. համարում էին այդ զանգւածային տեղահաննութեան սկիզբը:

Անցաւ երկու - երեք օր եւ յանկարծ լուր տարածւեց, թէ Ունիայի շրջանում, ինչ որ գիւղում մեծ կոփւ է տեղի ունեցել հայ - յոյն փախստականների եւ ժանդարմների միջեւ, որի ընթացքում սպանուել է յայտնի հայակեր Աղիզ - օնպաշին եւ մի քանի ժանդարմներ: Յաջորդ օը, Պանայիոտը, որից իմանում էինք այդ տեղեկութիւնները, Քրիստոսուրի բացակայութեամբ ներս մտաւ եւ չըուկոյ հարցրեց, թէ ճանաչում եմ արդեօք իստիլին: Անակնկալի գալով՝ հարցման հարցումով պատասխաննեցի:

— Ի՞նչ կայ որ...

— Հարցրել է ձեր մասին՝ ինդրելով, որ յայտնեմ, թէ ի վեճակի՞ էք արդեօք քայլելու:

Ես, որ վաղուց արդէն դադարել էի ինձ մարդ արարած զգալու, չափաղանց զարմացայ:

— Իստիլը իմ մասին հարցրե՞լ է...

— Այո՛:

— Ո՞վ ասաց այդ...

— Այդ չեմ կարող ասել եւ պէտք էլ չկայ, որովհետեւ հարցման արդէն պատասխաննել եմ եւ ուղեցի միայն ձեղ լուր տալ:

— Ի՞նչ էք պատասխաննել:

— Որ չէք կարող քայլել...

Օրւան դէպքերին կառչած՝ մտքերս զեղերումների մէջ ընկան... Որտեղից - որտե՞ղ եւ ի՞նչ առիթով...

Երեւի անցել էր մէկ - երկու ժամ, երբ դիւահարի պէս ներս ընկաւ Քրիստոսուրը եւ աչքերը չուած՝ չչնչաց.

— Միւսիւ վահա՞ն... Գիտես ի՞նչ կըսեն... Աղիզ - օնպաշին սպանողը, հայերու, յոյներու կոփւը փարողը Սվաղցի Մուրա՞տն է եղեր... Կըսեն իստիլը անոր օդնականն է...

Բոլորովին չւարեցի:

— Կըսեն ուժ կը համախմբէ Սամսոնի վրա քալելու...

— Ո՞վ ասաց...

— Շիւքը է Փէնդին...

Ու բոլորովին շնչայեղձ յարեց.

— Բայց կըսէ թէ դէմը զօրք է հանւած եւ շուտով պատիժը կը ստանայ...

Նոր տարակուսանքների, հաղարումի ևնթաղրութիւնների դուռ բացեց այս լուրը

— Հիմա մենք ալ, այս գործին վրա, քանիքանայի պիտի երթանք, տրտմաթախիծ ասաց Քրիստոսառուրը...

Բայց ինձ չէր զբաղեցնում այդ: Ո՞ղջ էութեամբ համակւած էի յոյզերի, վերյիշումների տարափով եւ մի անզուսալ ու անսոոյդ ուրախութիւն թունդ էր հանել սիրաս...

Գիշերը հիւանդանոցին պաշարել էր խեղդամահ եղած մի համրութիւն, բայց աչք վակել չկարողացայ... Վերջին անգամ Մուրատին տեսել էի երկու տարի առաջ. վերադառնում էր Պոլսից, գայնակցական պատասխանատու մի ժողովից: Սամսոնում Հ. Յ. Դաշ. Կոմիտէին տւած իր զեկուցման կանչել էր եւ ինձ: Այժմ յիշելով իր արտայայտած կարծիքները, չէի զարմանում, որ ճողովրել է մահից: Բայց որտեղից - որտեղ եւ ի՞նչպէս էր ընկել այստեղ, այս էր ինդիրը...

Լուսաբացին, հարեւան սենեակից հասնում էին երգի ձայներ, որ ընդմիջնում էին խրլգալից հառաջանքներով: Կողից վիրաւոր յոյշնի գրութիւնը ծանր էր ու մերթ ընդ մերթ լսող կանչերից պարզ էր, որ օգնութեան պէտք ունի: Մտածեցի, որ պէտք է Քրիստոսառուրին արթնացնել, որպէսզի լուր տայ քոյրերին: Բայց հաղիւ թեւս երկարել էի դէպի նրա գլուխը, երբ աչքերը ձեռքիս յառած այնպէս ընդուստ վեր ցցւեց, որ կարծես կոյւ պիտի անէր ինձ հետ: Միաժամանակ ձայներն էլ մարեցին: Լուսութիւնս մօտալուտ վտանգ կարծելով՝ Քրիստոսառուրն էլ համակ լսողութիւն դարձաւ... Բայց այլեւս ձայն չկար:

Առաւորը անկողնուց ելայ անհամեմատ աւելի կայտառ, քան երբ եւ իցէ: Ինչ որ արտակարգ դէպքեր էի սպասում. առպատամութիւն, յարձակում, իրարանցում, յեղափոխութիւն...

Ոչինչ չկար: Հարեւան յոյնը մեռել էր...

*

**

Այդ օրը ֆանին, հակառակ սովորութեան, բառ անգամ չասաց. ըստ երեւոյթին քնատ էր կամ հիւանդ: Գլխիս վիրակապերը քակե-

լով՝ նորից չկապեց. վէրքը գոցւել էր: Թէթեւ հաղը զապէլով՝ պատմերեց կիրեակուն կիսօրից յետոյ ինձ առաջնորդել բաղնիք ու շարժական գեղարանը դարձնելով դիմեց դէպի դուռ: Կիրեակիի դէմքից երեւում էր, որ ուզում է ինչ որ ցնցող լուր յայտնել, բայց ֆանիից զգուշանում էր: Յանկարծ, նա յետ զարձաւ չէմքից եւ աւելի շուտ շրթունքների շարժումներով, քան ձայնով, յայտնեց Քրիստոսուրին, որ միւլիրը կարգադրել է, Քէմալ բէյը գալուն պէս, հիւանդանոցից դուրս զրել նրան: Կարծես աւետիք էր յայտնում: Քրիստոսուրը, որ կանգնած բերանաբաց լսում էր, նստեց...

Ու մուացութեան մատնւած Քրիստոսուրի «հարցը» նորից մէջտեղ ընկաւ: Խօնչ անել: Այսքան ժամանակ անցնելուց յետոյ «վէրքը» նորից բորբոքելու մասին մտածելն անգամ աւելորդ էր:

Մուղալեան է Փէնդին, որ վաղուց արդէն խուսափում էր հիւանդանոցում նկատել, այնուամենայնիւ, Քրիստոսուրի խնդրով վարիջաւ: Երկրորդ անգամն էի տեսնում նրան: Առաջին անգամ, մի զիշեր, երբ սաստիկ տաքութիւն ունէի եւ ձորձի բէյն էլ եկել էր, նրան տեսայ Քրիստոսուրի հետ մահճակալիս մօտ: Այժմ նոր էի տարբերում նրա մէջ կատարւած աւերը: Գեղեցիկ դէմքը ծուել էր ու գաղաղած արտայայտութիւն ստացել: Պարթեւ կազմը կքել էր: Խօսում էր ատամների միջից, հաղիւ շարժելով ծնօտը: Ամէն մի խօսքից յետոյ բթամատով ու ցուցամատով հպում էր աչքերին, կարծես վար պիտի թափւէին: Սաւանի մէծութեամբ վիրակապերով վաթաթւած էր վաղուց արդէն ապաքինած ձախ թեւը:

Միակ ելքը Քէմալ բէյի խոզին ու մարդկութեան ապաւինելն էր: Ես էլ համամիտ էի զրա հետ:

Քրիստոսուրը խիստ յուզւած կազմում, փոփոխում, բերանացի խմբագրում էր Քէմալ բէյին ասելիքը: Բայց ի զուր անցան աշխատանքները. Քէմալ բէյը այդ օրը չեկաւ:

Իրինապահին ինձ առաջնորդեցին բաղնիք, որ գտնում էր մէծ սրահի ծայրին: Թիւրք հիւանդները լուռ նայում էին եւ այնքա՞ն նըման էին իրար, որ կարծես համազգեստ էին հաղել...

Երբ գարձայ, իրիկուն էր: Աղիղ աղան, պատի տակ ծալապատիկ, անսովոր բորբոքումով խօսում էր Քրիստոսուրի հետ.

— Հայերիդ մէծագոյն դժբախտութիւնը այն է, որ դուք չէք հասկանում Ալլահի էութիւնը: Դուք բախում էք պատը՝ կարծելով, թէ դուռ է եւ զարմանում էք, որ չի բացւում: Ալլահը մէկ է, նա օրբաներ չունի: Այնինչ դուք ընդունում էք նրան երեւմն «հօր», եր-

րեմն «մօր», երբեմն էլ «ողջու» ձեւով, ասաց Աղիկ աղան վեր, վարդարձնելով բթամատը.

— Հիմա, մի ասա՞ տեսնեմ, թէ գրանից որի՞ն են ուզդւած քո ազօթքները...

Քրիստոսառուրը նայում էր նրան, ու զլուխը թօթւում մի ձեւով, որ կարող էր թէ՛ համաձայնութեան, թէ՛ արդահատանքի նշան լինել: Մտածում էի, թէ արդեօք ինչ առիթով է սկսել այդ տարօրինակ զրոյցը.

— Զեր երկրորդ գայթակղութիւնն էլ այն է, որ գուք Մարիամի որդուն ընդունում էք Ալլահի տեղ. այնինչ նա միայն վեց մարդարէներից մէկն է, որ առաքւած է բոլոր ժամանակների մի շարք ժողովուրդներին քարոզելու համար, ասաց Աղիկ աղան՝ վէճի մարտահրաւէր կարդալու ձեւով նայելով ինձ...

— Բայց արի՛ ու տե՛ս, որ այդ մեծ ժարդարէի պատէրն անդամ չեն կատարում քրիստոնեաները... «Մի՛ սպանիր», ասել է Մարիամի որդին: Բայց տես, թէ ինչե՛ր են կատարում աշխարհում. տե՛ս, թէ ինչպէս են իրար կոտորում քրիստոնեաները...

— Եւ ի՞նչ ես կարծում — զարձաւ նա Քրիստոսառուրին — Ալլահը, որ տեսնում է ծովի յատակի զմբուխաները, միթէ՞ չի տեսնում ծովի վրա եղած զրիխները. նա, որ լսում է մըջիւնի մըմունջը, միթէ՞ չի լսում Զանագ - Գալէում կոտորւող իսլամների հառաջանքները...

— Իսկ մէ՞ր հառաջանքները... անլստահ շնչաց Քրիստոսառուրը:

Աղիկ աղան զլուխը կախեց, մի պահ մտածեց ու զսպւած ասաց.

— Մի կարծիր, օղլում, թէ մեղաղը եմ հայերին. խօսքս քրիստոնեայ մեծ աղքերի մասին է, որ բարի օրինակ պիտի լինէին աշխարհին: Հայերդ... է՛հ, ի՞նչ ասեմ. մի քանի խինզիլների պատճառով երկիրը կործանւեց. հայերը փչացան, մուհաճիրները փերուշան եղան, ժողովուրդը աղքատացաւ, անրարոյականութիւնը շատացաւ: Եւ ի՞նչ, կարծում ես փեյզամպէրին յայտնի չէր այդ...

Աղիկ աղայի աչքերը ճրագի տակ տրտմաթախիծ մի շրջան արին, եւ երկարաշունչ հառաջանքներով նա ասաց.

— « Աշխարհի մէջ կը տարածւի ընդհանուր անրարոյականութիւն — ասել է փեյզամպէրը — եւ ա՛յնպիսի չափերի կը հասնի, որ գէրվիչները, Փակիրները, մուէզինները, իմամները, վահինները,

միւթաւելլիները, չէյլսերը եւ բոլո՞ր հոգեւոր պետերը կը մոռանան Կորանի կանոնները: Կաղիները, ամէն կարգի իշխանաւորները զանց կառնեն Շարիաթը: Կանայք կը նետեն չարսաֆները եւ խումբ - խումբ անցուղարձ կանեն փողոցներում: Խոլամները որոշ ժամանակ կը տիրեն աշխարհին: Բայց կը գան հիւսիսի բնակիչները ու կը նըւածեն իստամբուլը, Շամն ու Կահիրէն: Հիւսիսի բնակիչներին օդնութեան կը հասնեն զեղին մարդիկ: Ապա նրանց գէմ գուրս կը գայ Մէհամին, որը կը համակի ժողովուրդի սիրաը զգայական հաճոյքներով... » :

Ցանկարծ, Աղիկ աղայի մարած աչքերը կենդանացան ու փայլատակեցին: Նա ոտքի մէկը դուրս քաշեց եւ անկիւնածեւ տնկելով՝ յարեց.

— Բայց, եթէ աշխարհի վրա քրիստոնեայ, խալամ հաւասարապէս մեղաւոր են, բոլորովի՞ն այլ է մեր զբութիւնը Ալլահի առաջ: Ահեղ դատաստանի ժամանակ քրիստոնեաներից ե՛ւ ոչ մէկը չի փրկւի ու բոլո՞րն էլ կը լինեն դժոխվում...

Այժմ, գէրվիչի պէս, նա ինքնամուացութեան մէջ էր.

— Եւ այն ժամանակ, երբ նրանցից իւրաքանչիւրը գոչի, թէ՝ « Օ՛, Մալե՛կ, Մալե՛կ, խնդրիր Ալլահին, որ վերջ տայ մեր տանձանքներին» — նրանք Մալեկից կը լսեն միշտ միեւնոյն պատասխանը. «Ոչ, գուք այսուեղ պիտի մնաք, յաւիտեանս յաւիտենից»...

Նրա տեսքը այժմ զարհուրելի էր: Աղմկարար, խոր շունչ առաւ ու հառաջանքների ձեւով շարունակեց.

— Ու նրանց վրա կիշնեն թանձր ծուխի երեք շերտեր... Ու գըժուքի հրդեհից նրանք չեն կարող պաշտպանել... Ու ծուխը բուրգերից էլ բարձր կայծեր կարձակի նրանց վրա... Եւ ուղարից էլ զեղին կը տեղայ նրանց զլիխին... Եւ շղթաների շառաչից, մըտրակների սուլոցից, նրանց վզնոցների զրնդոցից, կուպրի եռման ձայներից, նրանց կաշիների ճարճատումներից՝ կը ստեղծւի անասելի ժխոր... Ամենահեռաւոր ժամանակներում անդամ, նրանք չեն կարող աղատւել Մալեկի իշխանութիւնից... Եւ ի զուր պիտի անցնեն այն աղերսանքները, թէ՝ «Տե՛ս, մենք տառապում ենք, Ալլահ, Ալլահ, խղճա՛ մեղ, չէ՞ որ մենք բարի էինք»... Մալեկը, իր օգնական չէյլթանների միջոցով, նրանց աղերսանքները կը խացնի ու կը պոռուայ՝ «Դո՞ւք... զուք անհաւասներ էք եւ չկայ ու չի կարող լինել ձեղ համար փրկութիւն»...

Եւ մէկէն լոեց ու ձեռքը տանելով գէպի բերանը, մէկ - երկու անդամ ցնցւեց: Ապա յանկարծ պոռթկաց մի աղմկարար հազ: Մար-

դու թոքերը կարծես դուրս պիտի թափւէին։ Հազը քանի գնում սաստկանում էր։ Սզիդ աղան կարմրել, կծկւել էր։ Վերջապէս, քիչ քիչ մեղմացաւ հազը։ Նա դուրս քաշեց զօտուց կախւած դունաւոր թաշկինակը եւ սկսեց կարգի բերել իրեն։ Նոր նկատեցի, որ Սզիդ աղան բեխերը խուզել է բաւական խոր, որի հետեւանքով բացւել են չրթունքների անկիւնները, դէմքին տալով երիտասարդ արտայայտութիւն եւ խորշոմների հետ սուզեծելով զարմանալի հակասութիւն։ Մրկի պէս նրան քիչ առաջ համակած խանդն ու աւիւնը չքացել էին արդէն, եւ կարծես նա չէր, որ խօսեց։ Քնից արթնացածի պէս նա դէմքը շփեց, ելաւ ու մեղմ ու պարտահատուց ձեւով զարձաւ Քրիստոսութիւն։

— Հիմա, օվլում, ես քեզ ամէն բան բացառեցի. հաստատ իմացիր, որ փրկութեան միակ ճանապարհը խոլամն է։ Յետոյ չառսես, թէ քեզ ոչ ոք շիտակ խօսք չասաց։ Մնացածը դու գիտես...
— Ողբամ զքե՛ղ... հառաչելով գոչեց Քրիստոսութիւնը, երբ Ավել աղայի ոտնաձայնը մարեց։
Ի՞նչ առիթով սկսեց...

— Հէ՛չ. Սաի, թէ միւլերը դուրս ընել կուզէ զիս հիւանդանոցէն։ Ան ալ ըստ, թէ զաւակներդ մեղք են, կաքսորեն, կը փշանան. աղէկ կընես, որ ընտանիքով մէկտեղ խոլամութիւն ընդունես։ Ես ալ ըսի, թէ աղէկ, ընդունեմ, բայց զաւակներս ի՞նչ մեղք ունեն, որ անոնք ալ թիւրք ըլլան։ Ասոր վրա սաստիկ զայլացաւ ու սկսեց...

Համբ եւ խոռվքներով լի մի դիշեր էր, որ անցուցինք երկուսով։ Վերջապէս, լուսացաւ։ Ու, յանկարծ, պարզ երկնքից իջած կայժակի պէս հիւանդանոցում թնդաց մի լուր. Մուրատը, մի խումբ հայ, յոյն փախստականներով, Սամսոնի եղերքներում բանագրաւել էր մի առաջաստանաւ եւ բացւել զէպի Բաթում։ Յետեւից մակոյիներով զօրք էր ճամբւել։ Տենդով բոնւած մի նաւալար էր եկել հիւանդանոց, որը, իբր թէ, փախել էր նաւը բոնագրաւելու պահին։

— Սվազցի Մուրատը բարձրահասակ, մինչեւ զօտին կրծքին փըսւած՝ սեւ մօրուքով, թանձրամարմին մի մարդ էր... զնդզնզալով ասել էր նա։

իրինապահին Քրիստոսութիւն եւ Պահայեսութիւն հիւանդանոցից դուրս արին...

**

Ժամերով պառկած, դրսից խաղառ կղզիացած, անխմաստ մի կեանք էի վարում այժմ, որի վախճանը յայտնի չէր։ Միայն երբեմն,

անթացուպերիս կառչած, մնում էի կանգնած ապակեպատ պատըշ-զամբի եղբին, որտեղից պարզ երեւում էին իմ խուլ ու համբ բարեկամ թոռամանի բլուրները, լանջերը։ Հազար ու մի մանրամասնութիւններ էի վերյիշում դեռ շատ թարմ անցեալից։ Ու գրեթէ միշտ, այդ պահերին, մի շուն, որ զեղերում էր հիւանդանոցի բակում, զալիս կանգնում էր դիմացը ու նայում այնպէս, որ կարծես հարցնում էր թէ ի՞նչ նորութիւն կայ։

Այդ տարտամ օրերին յաջող միտք ունեցայ օրակիր պահելու։ Բայց քիչ յետոյ տեղի ունեցաւ մի դէպք, որից յետոյ այլեւս չիմացայ, թէ ինչպէս են լուսանում մթնած օրերս։ Նոյեմբերի վերջերի մի անձրեւային օր կծկտած ընկած էի մահակալիս, երբ յանկարծներս մտաւ հազիւ հինգ տարեկան մի մանչ եւ բուռն յուզումով դուչեց։

— Միւսիւ Վահա՞ն...

Հազիւ կարողացայ յիշել Կապտանեան Արամի, Հրանտի խաղընկեր Տիրանին, երբ նկատեցի մի խումբ երեխաններ, որոնք դրան մօտ իրար հրելով, զարմացած նայում էին ինձ։ Այդ պահին յայտնեց քոյլ էլին եւ, տեսնելով ինձ մօտ Տիրանին, դրան մօտ խմբածներին, իր հետ տարաւ։ Տիրանի անհամբեր «միւսիւ»-ներին յաջորդեցին հարեւան սենեակից լուսով երեխանների ձայները։

Կանանց բաժնում եղած որբերին տեղափոխեցին մէկ մօտ։ Աշքաբաց Տիրանը, որ ինչ որ միջոցով դեռ այնակ իմացել էր իմ մասին, այժմ անհամբեր էր պատմելու ինձ իր «արկածները»։

— Մայրիկը զիս իզմինի հանումին քով ձգելով՝ ըսաւ.

— Տղա՛ն, ըսէ նայիմ, սլիտի լա՞ս։ Բաի չպիտի լամ։ Այն ատեն համոզւեցաւ ու գնաց...

Ու Տիրանը պատմում է ինձ մօր վերադարձի իր սպասումները։ Ապա այն, թէ ինչպէս հարեւան յոյն երեխաններից իմացաւ, որ յետ չի գալու իր մայրը։ Այնուհետեւ զարմանալի ուշիմութեամբ նկարագրում է իր կեանքը՝ մինչեւ անակնկալ «Ճերբակալութիւնը»։

— Երբ ճանտարմանները խուզարկեցին Իզմինի հանումի տունը, փոլիսը ըսաւ.

— Խամին նիշ՝ տիր։

— Անաստափոս, ըսի։

— Պապանըն իսմի՞ :

— Կոստանդինոս :

— Տումբա պիլիյորմիսի՞ն :

— Եռ'ք :

— Վա՛յ, կեաւուր օղու, կեաւուր, ութանմիյորսը՞ն, եալան սոյլիյորսըն, էրմէնի՛ սըն...

Ահա՛, թէ ինչպէս տեղի ունեցաւ իր «ձերբակալութիւնը» :

— Պէտքիյէին մէջ Խաչիկը մեռաւ, ասում է նա կարճ վզի վրա նստած խոշոր գլուխը ցաւակցարար շարժելով...

Պէտք չպղացի հասկանալու թէ Խաչիկը ո՞վ է :

— Օննիկին, Արսէնին, Աշխէնին, Նշանիկին, Զաւէնին, Յողիկին, Պերճիկին, Պարոյրին, Մովսէսին, Սաթիկին, Սիրանին, Վաղարշին, ուրիշ շատերո՞ւն հետ մէկտեղ թուրքերը տարին...

Այս կարեւոր էր, որովհետեւ յայտնի չէր, թէ ինչպէս են մնացել իրենք:

— Մե՞նք...

Եւ Տիրանը մեծ մարդու պէս արհամարհանքով ինդում է.

— Ես, պարոն Պետրոսը, Բարիկը սուտէն հիւանդ եղանք...

— Պարոն Պետրոսը ո՞վ է :

— Զէ՞ք յիշեր, Զօռ Օղլիի տղան... Ան, որ մանկապարտէզէն փախաւ...

Ու ես թօթւում եմ գլուխս, որ, իրը թէ յիշեցի :

— Պարոն Պետրոսը ըսաւ՝ թուրքի քով չերթաք հա՛, ետքը սէւֆիար կընեն, կը ջարդեն...

Օ՛, Տիրանը ա՛յնքան բան դիտէր, որ կէս մարդ էր արդէն...

Էլին եկաւ նրան տարաւ: Բայց քիչ յետոյ ես նրանց մօտ էի: Բնի մէջ անակնկալի մատնւած ձագուկների պէս նրանք յանկարծ սմքեցին: Սևնեակի մէջ, ուր մեռաւ կողից վիրաւոր յոյնը, մէկ մահճակալ կար միայն: Նրա մէջ պառկած էր մի հրեշտականման աղջնակ, որ անշարժ, բերանաբաց նայում էր: Մահճակալի դէմ ու դէմ, պատի տակ, խոիրների, քիլիմների վրա նստած էին ևս երեք աղջնակներ, որոնք, երբ ներս մտայ, ինչ որ քուրջեր էին ծալծլում ու ձեռքերով հարթում: Մանչերը չէմքի մօտ քարէ գնդիկներ էին դարձնում: Բոլորն էլ հինգ - վեց տարեկան հազիւ կային: ոմանք աւելի փոքր էին: Կասկած չկար, որ մանկապարտէզի սաներից էին, բայց այնքան վերապահ մի դիրք ունէին, որ կարծես առաջին անգամն են

տեսնում ինձ: Բացառութիւն էր Տիրանը. նա էր ներկայացնում բոլորին եւ բոլորի փոխարէն պատասխանում հարցումներիս: Նա տեղեակ էր, թէ իւրաքանչիւրը, ո՛ր յոյնի մօտ է ապրել եւ ամէն մէկի մասին այնքան բան գիտէր, որ մնացել էի զարմացած: Յիշում, պատմում էր այդ ամենը անդիր արած դասի պէս: Տիրանը պարզապէս հրաշք էր...

Ամենից մեծը Նազիկն էր, մահճակալին պառկած կապոյտաշեայ աղջիկը: Բոլորից փոքրը՝ նրա ոտքերի մօտ նստած թմբլիկ աղջնակը: Տիրանի ասելով, նա իր անունը մոռացել էր: Եւ այժմ բոլորն էլ նրան Տատիկ էին կոչում: Անունը լսելով՝ Տատիկը սաստիկ կարմրեց: Ապա լիաթոք շունչ առնելով՝ հանգարտեց: Մի պահ Տիրանը լսեց, կարծես, յանկարծ սպառեց: Այժմ բոլորն էլ նայում էին ինձ այնպէս, որ կարծես, թէ հանդէս է եւ բան պիտի ասեմ... Իրիկունը ուշ, երբ արդէն հիւանդանոցի կեանքը մարել էր, նորից մտայ նրանց սենեակը: Էլին մեկնելու վրա էր: Զապւած յորանջումից արտասուքներ դոյցացան նրա փոքրացած աչքերում: Բոլորն էլ քնած էին, զանազան ուղղութեամբ տարածւած: Տատիկը քնել էր անխոսով լրջութեամբ ու քնի մէջ շարժում էր վարդագոյն մատները: Մանչերից մէկը կողքից կողք էր դառնում անհանդիստ...

* *

Օրը - օրին երեխաները ինձ, ես նրանց այնքան վարժւեցինք, որ մեր ընկերակցութիւնն անհրաժեշտութիւն դարձաւ: Արդէն յաջորդ օրն իսկ, Տատիկից բացի, բոլորն էլ ինձ հետ մտերմացան: Մանչերից ինձնից հեռու էր պահում միայն մէկը, որին երեխաները «Պարոն Պետրոս» էին կոչում: Ֆանիի խորհրդով նրանց այցելում էի կէսօրից յետոյ, երբ մեկնում էր միւղիրը:

Առաջին մէկ օրից ինձ դարմացրեց մանչերի և աղջիկների միջեւ եղած նկատելի տարբերութիւնը: Որքան առաջինները կոշտ ու աղատ էին, այնքան աղջիկները գիւրազգած ու կծկած: Մանչերը հարցաւէր, իսկ աղջիկները ամփոփւած եւ ինքնաղբաղ էին: Գրեթէ բոլորն էլ երազներ էին տեսնում, բայց եթէ աղջիկների երազները մեծ մասամբ դառնում էին անցեալի շուրջը, մանչերի երազների մէջ դրա չետքն անզամ չկար: Մանչերի համար ոչ երազը, ոչ իրականութիւնը, ոչ մի արժէք չունէր, այնինչ աղջիկները խիստ աղդում էին մէն հասարակ բանից:

Մի օր տեսայ, որ նազիկը պատուհանի մօտ կանգնած ծածուկ լալիս է: Դժւարութեամբ կարողացայ պատճառը հասկանալ.

- Հէջ, կը նայիմ, թէ ամպը եկեր՝ թաղի սրտին նստեր է...
 — է, լալու ւի՞նչ կայ որ, չե՞ս գիտեր, որ Սամսոնի ձմեռը ամպոտ է:
 — Գիտե՛մ, բայց դէշ երազ մը տեսայ... Եւ ասանկ ամպոտ էր...
 — Աղէկ, մի՛ լար, պատմէ նայիմ երազդ:
 — Տնտես աղբարը կ'ըսէր, թէ գասերէն միշտ կը բացակայիմ: Ու հիմա ալ կըսէ ժամը ինն է, իսկ գուն նո՛ր կուզաս գոլրոց: «ԶԵ՞ս տեսներ, կասէ, դուքսը մէկը չկայ, նե՛րս անցիր, թէ չէ զանդակը կը դարնեմ»: Ու գրպանէն հանելով զանդակը՝ բուռին մէջ սեղմած կը շարժէ ու կըսէ. «Ծի՛մ - ծի՛մ - ծի՛մ - ծի՛մ - ծի՛մ, ծի՛մ»... Հէմէն կը վազեմ, ներս կանցնիմ: Դուռին մօտ կը կենամ, որ օրիորդ Ընծան հրաման տայ նստելու: Կը սպասեմ. ձայն չկայ: Գլուխս կամացուկ վեր կառնեմ ու կը նայիմ, որ գասարանին մէջ մէկը չկայ, միւսի՛ւ...
 Ուշադրաւ էր, որ աղջիների մէջ, Լուսիկից բացի, ոչ ոք չէր խօսում ծնողների մասին: Այս բացառիկ երեւոյթը պարզ եղաւ ինձ համար մի տհաճ դէպքից յիտոյ. մօտեցայ Սիրանին, որ միշտ լուսու հանդարտ անկիւնում նստած զբաղւած էր լինում լաթերով՝ փաթաթւած երկու փայտի կտորներով, որոնք, իրր թէ, տիկնիկներ էին, ու հարցրի մօր անունը: Քնից արթնացածի պէս աչքերը թարթեց ու ասաց.
 — Արմիկ...
 — Իսկ հայրիկի անո՞ւնը...
 — Հաղիւ կարողացաւ շշնջալ «Կարապետ էֆէնդի» ու լաց եղաւ: Մեծ ջանքի պէտք եղաւ նրան հանդարտեցնելու համար: Ու այլեւս ոչ ոքի իրենց ծնողների մասին չհարցրի:
 Համեմատաբար կայուն հոգեկան վիճակ ունէր սեւաչեայ, ժիր Լուսիկը, որին յաճախ կարելի էր տեսնել մանչերի հետ խաղալիս: Ոչինչ նրա համար տեւական արժէք չէր ներկայացնում և հիւմնդանոցի կեանքն էլ միւսներից աւելի թեթեւ էր անցնում: Մտածումները ցաք ու ցրիւ բնոյթ ունէին և հաւասարապէս վերաբերում էին մօրը, կատուին, տատին, բակին, շանը, մօրաքրոջ, մանկապարտէղին եւ այլն: Միակ բացառութիւնը հայրն էր, որի հետ եւ կապւած էին Լուսիկի անցեալ կեանքի ապրումները: Լուսիկը յաճախ մի երդ էր երգում, որ բառեր չունէին. նա ասում էր՝
 — Ա՛, դի - դի - լի, ա՛, դի - դի - լի, դի - դի - լի... Ա՛լս, դի - դի - լի, վա՛լս, դի - դի - լի, դի - դի - լի...

Մի օր կանչեցի մօսս ու կամացուկ հարցրի, թէ ինչ են նշանակում այդ «դի - դի»ները: Մինչեւ ականջները կարմրեց եւ հիւանդանոցի շապիկիս թուլացած կոճակլով՝ շշնջաց.

— Չեմ գիտեր, միւսի՛ւ...

Այսուհետեւ երբեք առիթ չունեցայ նրա այդ «երգը» լսելու:

Տրամագծօրէն հակառակ դիմագծութեան տէր էր մելամաղձոտ Արաքսին: Իր պղնձագոյն դէմքը զարդարող արտայայտիչ աչքերը տարիքից աւելի տեսք էին տալիս նրան: Շատ զդայուն երեխայ էր: Միակ զրաղումը իր թիթեղի տուփիկն էր. նա ունէր պսպղուն թղթի կտորներ և մէկ - երկու կոճակներ, որոնք հանում, զնում էր տուփի մէջ: Խօսում էր հազլագիւտ դէպքերում: Անդամ այնպիսի դէսլքեր, որոնք մանուկներին սովորաբար զւարթացնում են, նրան թախիծ էին պատճառում: Մի անդամ միայն նրան լաւ տրամադրութեան մէջ տեսայ, երբ ինքնարերաբար ասաց զւարթութեամբ, բայց թախիծով աւարտեց.

— Առտուն հազիւ լոյսը բացւած արթնցայ. ճնդուկ մը եկեր, լուսամուտին եղերքը կայներ է. չէր փախեր, կը նայէր ու «նիկ - նիկ» կընէր... Ետ դարձայ, որ հացի փշուր մը գտնեմ. կը նայիմ՝ թըռու, զնա՞ց...

Մանչէրի մէջ, Տիրանից զատ, յատուկ ուշադրութիւն էր գրաւում «Պարոն Պետրոսը»: Անունը պարզապէս Պետրոս էր ու ե՞րբ եւ ի՞նչ առիթով էին վրան փակցրել «պարոնը»՝ չգիտեմ: Առհասարակ մանչէրը վատ սովորութիւն ունէին մէկ մէկու ծաղրական անուններ տալու: Բայց զրանք անցողակի բաներ էին: «Պարոն Պետրոսի» մէջ նախ ոչ մի ծաղր չկար, առաջ բաղաքացիութեան իրաւունք ստացած անուն էր և ինքն էլ հաշտուել էր զրա հետ: Հաղիւ վեց տարեկան այս մանչը արդէն ապրած և կեանք տեսած մարդու նման էր: Միշտ լուս, անշահախնդիր, կղզիացած վարք ու բարք ունէր: Բարկացած դէպքերում աչքերից կրակ էր թափւում: Բայց երբեք ոչ ոքի չէր վշտացնում: Զղուտ, մկանուտ և տարիքից աւելի փարթամ կազմ ունէր: Զեռքերը կոշտ էին, ուռնդները լայն, կլոր, զունատ դէմքի դիմագծերը կանոնաւոր, աչքերը խոշոր ու տաքրութեամբ տառապողի պէս փայլվելուն, անհանդիս: Օր չէր անցնում, որ այս մանչի մասին որ եւ է բան չիմանայի. իրր թէ, նա անձրեւաշըրի խողովակները մաղլցելով՝ բարձրացել է Զթթեանների տան կտուըը. իրր թէ, մի սայլի տակ պառկել է այնպէս, որ ձիերն ու անիւները անցել են կողքերով, առանց մաղաչափ դպչելու իրեն: Ինքը, «Պա-

բոն Պետրոսը» սովորաբար չէր խօսում : Միայն երբեմն նրան կարելի էր տեսնել Բաթիկի հետ կամացուկ զրուցելիս : Այդպիսի գէպքերում նրա գէմքին ծածուկ ժպիտ էր երեւում, ինչ որ հիմնաւորապէս փոխում էր այդ մոռայլ մանչու ողջ էութիւնը :

«Պարոն Պետրոսի» հակապատկերն էր չորս - հինգ տարեկան Սուրբիկը, որ վտիտ, ճմլւած, անքնութեամբ տառապող մի երեխայ էր : Նրա թոշնած գէմքից քունը թափուում էր ու երբեմն լաւ նայելու համար, կոպերի հետ միասին վեր էր հանում եւ յօնքերը : Յաճախ կարծես աչքերը բաց քնած էր : Մի անգամ ասաց .

- Առտուն այնքան կանուխ կարթննամ, որ գիշեր կըլլայ . կը շրջիմ մէկ կողիս, միւս կողիս, երրորդ կողիս, չորրորդ կողիս՝ չեմ կրնար քնանաւլ .

Երկու օր յետոյ, որի նախօրեակին ֆանին նրան քնաբեր դեղ էր տեսել, հարցրի .

- Սուրբիկ, քնացա՞ր .
- Այո՛, միւսիւ, քիչիկ մը քնացայ .
- Է, երազ տեսա՞ր, կատակեցի ես :
- Չտեսայ, միւսիւ, ասանկ մութին մէջ մարդ կրնայ՝ բան մը տեսնել .

Մնացածներից Ժիրայրը յոռետես ու պրզտող մի մանչ էր : Մի օր հրացրեց .

- Միւսի՛ւ, մեռած մարդիկ ի՞նչ կըլլան .
Ոչինչ չգտայ ասելու :
Մի ուրիշ օր, երբ աւելի քան տիսուր կծկտած նստած էր, այդ առթիւ արած հարցմանս պատասխանեց .
- Եթէ գիտնայի, թէ վերջս ասանկ պիտի ըլլար, հէջ չէի ծընւիր .

Հոգեպէս առողջ եւ գրաւիչ մի մանչ էր Հայկը : Խաղի անսպառ կարիք ունէր այս մանչը եւ առիթը բաց չէր թողնում սենեակից դուրս գալու եւ ձիու պէս մէկ - երկու անգամ պատշգամբում անցնելու : Բայց սա էլ մի օր ասաց .

- Միւսիւ, ի՞նչ կըլլայ, որ սէլքիաքը խաղ ըլլար ու ամէնն ալ նորէն Սամսոն գառնային .

Մանչերից մէկը գրեթէ զրկւել էր յիշելու կարողութիւնից : Առունը լեւոնիկ էր : Բայց հարցաէր երեխայ էր : Նախապէս կարծում էր, թէ հարցումներին գոհացում տալով՝ կարելի է նրան հո-

դեպէս քիչ - շատ կազդուրել : Բայց յետոյ հասկացայ, որ պատասխաններս նրան է՛լ գոհացում չեն տալիս : Մի օր նա հարցրեց .

- Զգիտէ՞ք, թէ ո՞ւր էի առաջ, միւսի՛ւ .
- Կանանց բաժինը :
- Առա՞ջ .
- Պէլէտիէին մէջ :
- Առա՞ջ, առա՞ջ .
- Յոյներուն քով :
- Առաջ, է՛, առաջ .
- Առա՞ջ, չդիտեմ - ասացի .

Մի ուրիշ օր հարց տւեց .
- Միւսիւ, ամէն մարդ ալ կը մեռնի՞ .
- Այո՛ :
- Մենք ալ պիտի մեռնի՞նք .
- Այո՛, երբ ծերանաք, կը մեռնիք :
- Է, մենք ալ որ մեռնինք, ալ ո՞վ կը մնայ .
- Ուրիշները .

Չհամողւեց :
Զւարթ, գործնական հակումներով մի մանչ էր Բաթիկը : Սա միակն էր, որի հետ մտերիմ էր «Պարոն Պետրոսը» : Իր հարցումները մեծ մասամբ դառնում էին ուտելիքների շուրջը : Բայց մի օր հարցրեց .

- Միւսի՛ւ, Աստւած աղիքներ ունի՞ :
- ... Չունի :
- Բերան ունի՞ .
- Չունի .
- Անանկ է նէ՝ ինտո՞ր հաց կուտէ .

Մի ուրիշ օր հարցրեց .
- Միւսի՛ւ, մարդ մը կրնայ՝ հարիւր զրուշով սատկած չունի միս ուտել .

- Չի կրնար :
- Պարոն Պետրոսը կըսէ, թէ մէկ զրուշով ալ կուտէ .

Մանչերից ամենափրը Գարիկն էր : Հաղիւ չորս տարեկան այս երեխան միակն էր, որ հիւանդանոց էր ընկել մանկապատէզի արդէն մաշւած հաղուստներով : Մտքերը չփոթ, ցատկուուն էին : Բայց շատ յաճախ գառնում էին անցեալի շուրջը : Մի օր հարցրեց . Բայց շատ յաճախ գառնում էին անցեալի շուրջը :

— Միւսի՛ւ, ի՞նչ եղան նւազի դործիքները...
 Մի ուրիշ օր հարցը եց.
 — Միւսի՛ւ, եթէ բարի առիւծը անտառին մէջ տեսնէ ծանօթ ոչ
 խար մը, կուտէ՞...
 — Զի ուտեր:
 Գոհ էր: Բայց որա էլ այն հարցման, թէ՝ «Ե՞րբ պէտք է լմըն-
 նայ մեր հիւանդութիւնը», ինչ ասելս չիմացայ...
 Բոլորովին բացառիկ մի երեխայ էր Գարիկից էլ փոքր Տատիկը:
 Միշտ կայուն, անայլայլ մի դրութեան մէջ էի տեսնում նրան: Բայտ
 էութեան Տատիկը խոչոր տիկնիկից տարբերում էր մի բանով. իր
 անհատնում, բերանաբաց հետաքրքրութեամբ: Հոդեկան վիճակնե-
 րից նրան, թերեւս, մատչելի էր միայն զարմանքը, որ արտայայ-
 տում էր յօնքերի մեքենական շարժումներով: Նաղիկից բացի, որի
 մահճակալի մի անկիւնում քնում էր, նա ոչ ոքի հետ չէր խօսում: Եւ
 ինձ էլ չէր յաջողւում նրան խօսեցնել: Շիտակ եւ մինչեւ իսկ հա-
 մարձակ նայում էր աչքերիս մէջ, բայց հարցումներիս չէր պատաս-
 խանում:

Սակայն մի օր հրաշք պատահեց: Իրիկնապահ էր. ընկած էի
 մահճակալիս, երբ յանկարծ երեխաների սենեակից ոուր լացի ձայն
 առի.
 — Տա' - տա' - տա' - տա' - ա'... տի՛ւ-տի՛ւ-տի՛ւ-տի՛ւ-ո՛ւ...
 ճչում էր մէկը:

Անթացուպերս առի ու ներս անցայ շտապով: Տատիկը վարը նըս-
 տած՝ սրտապատառ լալիս էր: Մօտը ծունկի եկած Նազիկը ի զուր
 աշխատում էր հանգստացնել: «Պարոն Պետրոս»ից բացի, որ ծուն-
 կերը ցից պատի տակ անտարբեր նստած էր, միւսները ոտքի վրա
 էին: Տատիկին առի դրի մահճակալին: Պայմելու ձափ լացը զսպեց,
 կարմրեց, կարկամեց, կապաց: Բոլորվին շիոթւեցի.

— Տատիկ ջա՛ն, լոէ՛, ի՞նչ եղաւ...
 Յանկարծ, բոլոր թափով լացը նորից պոռթկաց...
 — Ինչո՛ւ կուլաս, աղուրս, ըսէ՛, չուտ լոէ՛...
 Աներեւակայելի ուժով իրեն զսպեց ու մրմունջներից հասկա-
 ցայ, թէ՝
 — Տիրանը ինձի կըսէ՛ մերեր ես...
 — Մեռե՞ր ես...

— Միւսի՛ւ...
 Տիրանին արդիեցի խօսելու:
 — Ինչո՞ւ պիտի մեռնիս, Տատիկս...
 — Ինձի կը զարնէ, կըսէ՛ մի՛ շարժիր, մերե՛ր ես...
 — Թաթիկի տուր նայիմ... Ա՛, տեսա՞ր, կը շարժիս, կը շար-
 ժի՛ս, չես մեռեր, կը շարժի՛ս...
 Բոլորն էլ խնդացին: Տատիկը մէկ - երկու անգամ էլ ցնցւեց ու
 հանդարտւեց: Դարձայ Տիրանին.
 — Հիմա ըսէ նայիմ՝ աս ի՞նչ է...
 — Միւսի՛ւ, կը խաղայինք, հէ՛չ, հէ՛չ չզարկի. սանկ քիչիկ մը
 կացինիս ծայրով գլխուն զպայ ու կըսեմ՝ մեռիր, իսկ անիկա կը շար-
 ժէ: Ես նորէն կացինս գլխուն կիջեցնեմ ու կըսեմ — մի՛ շարժիր, ը-
 սէ՛ «ա՛խ, այն կացինը զարկաւ, կողերս կոտրտեց» ու մեռի՛ր. ան
 կելլէ ու փախի՛լ կուղէ...
 Տատիկը իր նախկին անվրդով հետաքրքրութեամբ լսում էր
 Տիրանին այնպէս, որ կարծես խնդիրը ոչ մի կատ չունէր իր հետ:
 Տիրանի ձեռքին մի փայտ կար, որի ծայրին, կացնի ձեռով, յարմա-
 րեցրել էր թիթեղի տուփի մի կլոր կափարէչ.
 — Լա՛ւ, Տիրան, ասանկ ալ խաղ կըլլա՞յ...

— Միւսի՛ւ, ջարդ կը խաղայինք, ջա՛րդ... իրեն հարցուցի, թէ
 կուզէ՞ մեղ հետ ջարդ խաղալ. ըստ՝ հա՛ն. է՛, որ խաղալ կուզէ,
 ինչու մեռնելու ատեն կենէ ու կը փախի՛:

**

Դեկտեմբերի վերջերին, քոյր էլին, որին արդէն շատ լնտե-
 լացել էին երեխաները, քաղաքից իր հետ բերել էր մանկական մի
 քանի նկարներ: Այդ գէպքը արտակարդ կինդանութիւն մացրեց նը-
 րանց միապաղապ կեանքի մէջ. օրը անցաւ կաղանդի, տօնածառի
 վերյիշումներով, որոնք սակայն աննախընթաց խոռվքների նիւթ
 զարձան ինձ համար:

Գունաւոր նկարներից լաւագոյնը բաժին էր ընկել Տատիկին:
 Այնաեղ նկարւած էին ծառս ելած, զարմացած երկու նապաստակ-
 ներ եւ մի չնիկ, որ նայում էր նրանց ահաբեկւած: Տատիկը բե-
 րանաբաց զննում, զարձնում էր նկարը ու խորը շնչելով՝ շուրթները
 կծկում: Ես մէկ - մէկ ցոյց տոի նրան նահեւ բոլոր միւս նկարները՝

բացատրելով իմաստը։ Նոյն լարւած կենորոնացած հետաքրքրութիւնը։ Բայց միայն յօնքերի շարժումներից կարելի էր հասկանալ նրա տպաւորութիւնները։ Մէջքի վրա ընկած եւ տիրոջ մտրակի հարւածների տակ սրինդ նւազող արջի նկարը նրան դուր չեկաւ։ Աւելի վատ տպաւորութիւն ունեցաւ նրա վրա մի նկար, որի մէջ հայրը գանակոծում էր անհնապանդ որդուն։ Հանդամանօրէն դիտեց մի նըկար, որի մէջ հաւկիթավաճառ մի նապաստակ եկել էր թառ ելած հաւերից հաւկիթ գնելու։ Զիւնի գնդակ խաղացող երեխաների նկարը, ինչպէս նաեւ տօնածառը նրա վրա ոչ մի ազգեցութիւն չունեցաւ։ Ծովի մի նկար, առաջաստանաւերով, նրան կենդանութիւն պատճառեց։ Շատ դուր եկաւ մի նկար, որի մէջ մի հաւ, ճուտիկների հետ միասին, խուսափում էր, լեզուն քովնափի դուրս հանած մի չնիկի հետապնդումից վախեցած։ Երկու առիւծների նկարը, որոնք պիճնած հիւր էին գնում, բայց հանդիպել էին փոթորկի եւ մէկի գլխարկն էլ թուլ, միւսի հովանոցը դարձել՝ նրա վրա ոչ մի ազգեցութիւն չունեցաւ։ Բայց լալու պէս եղաւ մի նկար դիտելով, որի իմաստը բացատրելս ինքնին անմտութիւն էր։ ծառի կոճղին նստած էին երկու հրահեր սատանաներ. կոտոշներից, աչքերից, հազուստներից կրակ էր թափում. ուրիշ երկու ծառայ սատանաներ բերուա էին նրանց դատաստանին յանձնելու մարդու վրա ընկած մի ազդչնակ։

Էլլին բերել էր նւազ քանակութեամբ նկարներ, որով երեք հոգու բաժին չէր ընկել։ Դրանցից «Պարոն Պետրոսն» ու Տիրանը ոչ մի դըդութիւն չունէին։ Մնում էր Հայկը, որին էլլին խոստացաւ մի լաւ նկար բերել եւ ինդիբը փակեց։

Բայց Հայկը իր նկարը չստացաւ, որովհետեւ յաջորդ օրը երեխաների բախտը որոշեց։ Կէօրին մօտ էր։ Ընկած էի մահճակալիս, երբ յանկարծ ներս ընկած Տիրանը եւ սարսափահար շշնջաց։

— Միւսի՛ւ... թուրքերը եկեր են մեզ տանելո՛ւ...

Հաղիւ կարողացայ ինձ հաշիւ տալ, երբ նա կայծակի արագութեամբ սլքաց մահճակալիս տակ։ Դուրսը ինչ որ միապաղաղ ձայն ներ կային... նշանակում է շատուր են։ Հաղիւ ուղեցի վեր կենալ, երբ փոքրիկների սենեակից իրարանցման ձայներ լսելով՝ գամւած մնացի տեղու։ Ապա, յանկարծ, հասաւ ականջներիս Տատիկի աղաղակից լացը... Ելայ, բայց ոտքերս, շիւղերի պէս, մարմնիս ծանրութեն տակ ծալծլում էին ու գրեթէ նորից ընկայ մահճակալիս եղրին։ Յանկարծ, ոտքերիս արանքից դուրս ընկած Տիրանի մեծ գըլուխը։

— Ի՞նչ կա... ա'...

— Նե՛րս...

Զքացաւ։ Անթացուալերիս օգնութեամբ ելայ։ Երեխաների սենեակում իրարանցումը սաստկացաւ... Երեք - չորս դողդոջիւն քայլերով հասայ զրան ու քիչ բաց արի։ Պատշգամբում, դիմաց գունատ, պրկւած կանգնած էր ֆանին. գլխով բացասական շարժում արաւ ու ցցւեց. արդէն ի՞նչ պիտի անէի որ... Նրանից քիչ վեր ձըդւած կանգնած էր միւղիւը։ Շուրջը կային թիւրք կանայք, տղամարդիկ։ Երեխաների սենեակում ձայները, լացը, ճիչերը, թիւրքերի յորդորները իրար էին խառնւել... Յանկարծ մի փաթթոցաւոր նազիկի թաթից բռնած անցաւ. զարհուրեցի՛... Կարծես, մըդաւանջային երազ էի տեսնում... Ապա պատշգամբը լեցւեց աղաղակներով եւ իրար յետեւից գուրս տարան Սիրանին, Լուսիկին, Արաքսին, Սուրբիկին, Ֆիրայրին, Բարիկին, Հայկին, Լեւոնիկին, Գարբիկին... Մարգկային մեծագոյն աղէտ էր. տեսարանը, բոլոր նախորդ պատուհաններից անհամեմա՛տ զերազանց էր... Դրսի, ներսի ժխորի վրա անվե՛րջ թագաւորում էին Տատիկի ընդհատող ու նոր թափով տարածւող աղաղակները... Յանկարծ երեւաց «Փարոն Պետրոսը»։ Կրակի միջից գուրս ընկածի տեսք ունէր. գլխաբաց, մազերը ցրիւ, շապիկը կլիսով չափ գուրս ընկած... Մի թիկնեղ թիւրք նրա երկու թաթերը մէկ ձեռքի մէջ առած, գլուխն օրովելով, «Ալլահ», «Ալլահ» գոչելով, քաշքում էր նրան. «Պարոն Պետրոսը» վագրի պէս պայքարում էր. նա անմռունչ աջ ու ձախ նետելով, պոկւելու գերմարդկային ճիզեր անելով՝ քայլ առ քայլ տեղի էր տալիս. աննախընթա՛ց, զիւցազնակա՞ն մի պայքար էր այդ, որ անկարի է մոռանալ... Ու յանկարծ երեւաց Տատիկը.

— Տա՛ - տա՛ - տա՛ - տա՛ - ա'... տի՛ւ-տի՛ւ-տի՛ւ-տի՛ւ-ո՛ւ...

Նա ընկած էր մի ծառայի թեւերին, որի հետ կար մի չքեղ թըրքուհի... Աչքերս ընկան միւղիւրին, որ չեշտակի նայում էր ինձ... Ծնոտը յանկարծ չոքեց կրծքին, կարծես վիզը կոտրեց. միաժամանակ մանին զուռը վրա քաշեց... Կայծակնահար աղբումներ մէկը միւսին յաջորդելով մէջս ամայութիւն... Ու, յանկարծ, միւսին յաջորդեցին՝ ստեղծելով մէջս ամայութիւն... Մի ակնթարթ այնպէս թւաց, թէ ոչինչ չի ենձաները մարեցին... Մի ակնթարթ Տատիկի աղաղակները լսեցին զել։ Բայց յանկարծ բոլոր թափով Տատիկի աղաղակները զատացաւ. Երբ կարողացայ հասնել պատուհանին, արդէն ուշ էր... Պրուից... Երբ կարողացայ հասնել պատուհանին, արդէն տաշ էր հանում Տատիկի բոլորովին առաջ էր ընկել. մարդու բաղուկներին տարածւած, նա ոտքերն ու գլուխը դեռ ճօճում, վեր, վար էր հանում անընդհատ... Ապա տեսայ, թէ ինչպիսի՛ յամառութեամբ դեռ շա-

բուհակում էր իր անհաւասար պայքարը «Պարսն Պետրոսը»... Մը-նացածներից կարողացայ տարբերել բարձրահասակ նազիկին, որ նորահարսի պէս գլուխը կախ գնում էր... Քիչ չանցած ձմբան մի ամայութիւն էր տիրում դաշտի մէջ...

Որքան մնացի պատուհանի եղբին կառչած՝ չգիտեմ: Բայց երբ ուղեցի յետ գառնալ, մահճակալիս տակից յանկարծ դուրս ցցւեց Տիրանի խոշոր գլուխը: Բոլորովին մոռացել էի նրա զոյսութեան մասին: Տիրանը մկան պէս չեշտակի նայում էր... «Խե՞նթ է, ինչ է».


— Ելի՛ր:

— Գա... ա՛... ա՛... ցի՞ն:

— Ելի՛ր, Ելի՛ր, գնացին...

Բելգրադ

(Շարունակելի)



ՏՈՒԲԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԴՈՄԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Բ Ե Ս

Ե.

Ա. Ահարոնեան երկրորդ անգամ կ. Պոլիս գալուն, հազիւ ինը օր կրցաւ մնալ, ու մեկնեցաւ զէպի ֆրանսա, թէ ոչ՝ ինքը՝ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչի իր հանգամանքովը, եւ իրեւ նախագահ Հայկական Պատուիրակութեան (որ պիտի մասնակցէր Խաղաղութեան Վեհաժողովին), կարող կ'ըլլար՝ Ղարաբաղի Հայութեան կեանքին սպառնացող վտանգներուն դէմ, գեսպանական մալմիններու աղքեցութեամբ, աւելի զրական ապահովութիւն ձեռք բերել, ինչպէս 1918-ին, երբ Զամալեան, Բարաղանեանէ (Լէօ) շատ առաջ՝ Ղարաբաղի հայ բնակչութեան մասին կը հնչեցնէր ահազանգ, Ահարոնեան նախագահին ուղղած իր այն հեռագրովը, զոր նոյնութեամբ ներկայացուցի արդէն:

Բայց որովհետեւ Լէօի նամակը Ահարոնեանի կ. Պոլիսը թողնելէն երեքուկէս ամիս վերջն էր՝ որ իմ ձեռքս կը հասնէր, ուստի պարտականութիւն ինձ համարեցի անոր մէկ օրինակը անմիջապէս յղել Փարիզ:

Թէպէտեւ խոր աղղւած էինք մենք Լէօի տիրագրեցիկ գրութենէն, այսու ամենայնիւ՝ չկասեցանք ու անայլայլ պահեցինք նորածին Հայաստանի օգտակար ըլլալու մեր ջերմ իղձն ու եռանդը, որ Ահարոնեանի ինհորեայ ներկայութեամբը աւելի մեծ թափ ու ոգեւորութիւն ստացած:

Ինչպէս նախագէս նշանակած եմ, Պ. Ահարոնեանի Հայաստանէն կ. Պոլիս երկրորդ գալը եղաւ՝ 1919 Յունար 13-ի երկուշաբթի օրը:

Այս անգամ իր շուրջ բոլորը մակարոյծ ստոր արարածներու գարշելի լրտեսութիւն չկար, *) որով ամէն հայ աղատ - Համարձակ ժուտ կը գտար քովը:

*) Նախորդ յօդւածիս հրատարակութեմէն յետոյ, արժանահաւատ անձ մը կը գրէր իմձ, վատահացմելով զիս, թէ Զաւէն Պատրիարքի կողմէ 1915 Հոկտեմբեր 1-ին, իմ միջոցաւ իշխան Ապտ - իւլ - Մէնիտի ուղղւած շնորհակալութեան Գիրին

իջած էր՝ իր տիկնոջն ու քարտուղար Տիգրան Միրզայեանցի եւ խորհրդական Փիրալեանի հետ, թերա թռքաթլեան պանդոկը, որ հետզհետէ տեսակ մը ուխտատեղի գարձաւ, վասն զի առաւօտէն մինչեւ երեկոյ, երբեմն ալ զիշերներ, ամէն դասակարգի ազգայիններ զերթային Ահարոնեանի ձեռքը սեղմելու եւ պահ մը լսելու անոր բերնէն Հայոստանի յուրերը:

Հակառակ ճամբորգութենէ կրած յոզնածութիւններուն, Տէր եւ Տիկին Ահարոնեան իրենց առաջին այցելութիւնը մեղի ընել հաճացան, եւ երեկոյին մէր Համեստ սեղանը բաժնեցին, հետ ունենալով Տիգրան Միրզայեանցը եւ Ֆէրտինանոտ թախտածեանը (երկուքն աւ ալժմ մեռած) :

Ճաշէ վերջ տունս և կան ուրիշ բարեկամներ, որոնց ներկայութեանը Ահարոնեան իր բնատուր պերճախօսութեամբը պատմեց ու պատմեց Հայաստանի մէջ մղւած վերջին ահաւոր պատերազմները եւ նկարագրեց՝ թէ ի՞նչ գերադայն ճիգով, գերմարդկային հերոսութեամբ եւ եռանդալից հայրենասիրութեամբ հայ զինւորներ կուած էին՝ Հայաստանի հողին գուրս վանելու համար օտար թշնամիները, եւ ի՞նչ արտասովոր անձնւիրութեամբ ալեւորներ իսկ զէնք շալարկած ու ընկերացած էին հայ քաջարի բանակներուն, որոնց հրամանատար էին՝ անւանին Նաղարապէկով եւ ուրիշ նշանաւոր զօրավարներ :

Տիղբան Միլրզայեանց կ'երկրորդքէր Ահարոնեանի խօսքերը եւ
ունկնդիրներուս աչքերէն կը հոսէին ուրախութեան արցունքներ, եւ
միթէ կարելի՞ էր չյուրգլիլ, անտարբեր՝ անզգայ մնալ ի լուր այս
պատմութիւններուն, որոնք Հայաստանի վերածնունդը կ'աւետէին
եւ կը կարծէինք թէ կ'արգիլէին անմահն Բաֆֆիի՛ ա՛յլեւս չերդել
ամ անձուկո, թէ՝

Առաջին գույքը է մի օր ժամանակ

Տեսնել լրասիսին գլխին մի դրօշակ :

本
卷

գաղտնապահութիւնը պղծողը, ո՞չ թէ Պատրիարքանի այն տիեզի Գործակատարը եղած է, այլ՝ այն քարեծաղիկ Յարութիւն Մ'ըստիչեան անուն, շահսամակ ոսկաննւած համբաւառը լրտեսը, որ մուկի պէս ամեն ծակ ու ծուկ կը մտնար - կ'ելլար, եւ կը յաջողէր կատարեալ նարպիկութեամբ շորքել ամեն տիսակ գաղտնիք ու հառոսուի խառալարութեան :

Այս առքին շնորհակալ կ'ըլլամ ինձ տեղեկագրող այն ազնիւ անձին, որ փութասած է ապօպի աւա իւլոր : Տ. Վ. Յ. Թ.

S. V. B. P.

Ահարոնեան նոյն խանսդ ու հռանդով ժամէն աւելի տեսող հրապարակախօսութիւն մ'ալ ըրաւ այդ մասին, Յերա Հայկական կլիւպին եւ Հայ Կարմիք Խաչի սրահին մէջ, ուր Երկսեռ հոծ բազմութիւն ու գինքը ծափահարեց ջերմապէս՝ ուխտելով քարողել միշտ՝ զի,

Ամէն կողմից պանդուխտ Հայազգիք
Դիմեն դէպ իւրեաց սիրուն Հայրենիք :

Այս բանախօսութեան առթիւ էր, որ ևս, իրեւ նախադահ Հայ կարմիր Խաչի, թարգման եղայ ունկնդիբներու գերազնիւ զգացում-ներուն, անոնց Հայրենասիրական իղձերուն, ու գնահատեցի Ահարոննեանի եւ իր բոլոր ընկերներուն ազգանւէր մեծ ծառայութիւնները: Ամբողջ սրահը յատնկայս ինձ ձայնակցեցաւ ծափերով, եւ աշները:

Կը փափաքէինք՝ որ Ահարոնեան իր բնկերներով երկար մնար մեր
մէջ. բայց կարելի չէր, ուստի վազօրօք թողուց կ. Պոլիսը 1919
Յունաստան 20-ին :

Հայ ժողովուրդը այդ օրը զարձեալ երամովին խուռն հաւաք-
ւած էր Ղալաթիոյ քարափը ողջեցի մաղթելու, և երբ շոգենաւը
սկսաւ շարժիլ, ահա «կեցչէ»-ներ, «երթաք բարեաւ»-ներ բարձրա-
գաղակ կը մեկնէին ամէն կուրծքէ ու կը շարունակեին անվերջ,
մինչեւ որ շոգենաւը անաւո կը ծածկէր Մարմարայի հանդարտիկ
ջուրերուն գիրիկը:

Տեսաբանը շա՞տ յուղիչ էր արդարեւ, եւ վեհ, որուն տպաւորութեանը տակ, կը վերադառնայինք Բերտ մեր սկսած գործերը շառունակելու:

Աւելորդ չըլլայ սակայն հոս յիշելու, թէ Ահարոնեան պատգա-
մաւորութեան մեկնելէն յետոյ, հետզհետէ Կ. Պոլիս թափւեցան զա-
նազան տեղերէ հայ ուրիշ պատգամաւորներ, մին քան զմիւսը՝ ար-
դարեւ հայրենասէր, ազնիւ ու ազգասէր, բայց ամենքն ալ գերա-
զանցապէս լարւած՝ կուսակցականներու դէմ, ո'չ թէ Հայրենիքի նը-
ւիրական սկզբունքով, այլ, դժբախտաբար, զուտ անձնական միա-
կողմանի խնդիրներու պատճառաւ:

Այս եկողները, որոնց անօւնները չեմ ուզեր գրել, բաւական օրեւ մնալէ, եւ հոս - հոն իրենց հակակուսակցական մաղձը թափելէ յետոյ, զնացին Փարիզ, Պողոս Նուապար վաշայի նախազահութեամբ դումարւած համագումարին մէջ զրաւելու իրենց աթունները եւ հոն սփինքսեան լուսթեամբ վայելէ վերջ՝ վերադասնալ իրենց երկրը մէծ։ Հերոսի։ Հովեր առած։

Յո՞յժ, յո՞յժ ցաւալի է՝ որ այդ պատգամաւողներէն ո՞չ մէկը, կրցաւ իր անկեղծ համարաւութիւնը ներկայացնել՝ ո՞չ թէ հմանուր աղգին, այլ գոնէ ա'յն համայնքին որ զինքը լնարած էր եւ ճամբորդութեանը ծախքերը լիուլի հողացած . . . : Ա՛հ, դրա՞մ, հարստութիւն, զուն ի՞նչ բաներու կարող չես, ի՞նչ բերաններ չես կրնար լուցնել, ի՞նչ կեղծաւորութիւններ ծածկել, որքա՞ն անիրաւ եղելութիւններ իրեւ արդար գատաստանի արդիւնք ներկայացնել . . . Դրա՞մ . . . անիծւած նիւթ, որ աշխարհի ես տիրող, եւ մայր ես մարդու կրած անորակելի դժբախտութիւններու . . . Բայց թողունք որ այս խիստ կարեւոր հարցին առթիւ մէր ապագայ պատմազրութիւնը ճշմարտապէս լուսաբանող ըլլայ, ու ես դառնամ թափառիլ Յուշատերիս մէջ։

**

Յայտնած եմ արդէն, թէ «Լիկա»-ն կարողացած էր աղգին մէջ համերաշի խորհրդակցական կարեւոր ժողովներու հեղինակ ըլլալ, եւ իր այս ձեռնարկով պատճառ եղած էր, որ հետզհետէ՝ Համազգային եւ Ազգային Երևսիոխանական ժողովները կանոնաւոր նիստեր ունենային, եւ ծնունդ առնէին՝ «Աշխատաքի Տուն», Գրական, Թատերական Միութիւններ, Հրատարակչական եւ այլ՝ Հայրենակցական Ընկերութիւններ. բայց ամենէն աւելի՝ զոյսութեան արժանի կերպով, յաջողած էր՝ կազմել, ՀԱՅ - ՅՈՒՆ - ՀՅԵՍ. ԽՈՐՀԱԿԱՑԱԿԱՆ ԺՈՂՋԱՎ, կ արդ մը միջազգային կենսական հարցերու համար։

Եւ այս գործին նախաձեռնարկ՝ բուն հեղինակը եղաւ՝ տեղն իսկ է յայտնել, իմ սիրելի բարեկամ՝ Տիար ՀՄԱՅԵԱԿ ԽՈՍՐԱՎԵԱՆ, որուն անունը հարեւանցի իմն յիշած եմ յառաջադոյն։

Այդ առաջանաւոր իրաւագէտը (նշանաւոր զասախոս կ. Պոլսոյ թուրք իրաւագիտական Համալսարանին), կը սիրել ծածկւիլ միշտ համեստութեան քողով, մինչ իր գործունէութիւնը, պերճախօսութիւնը եւ ըրած նիւթական եւ բարոյական մէծ զոհողութիւնները զինքը յայտնելով կը յայտնէին։

Նա եղաւ հոգին վերոյիշեալ ժողովներուն, եւ հակառակ որ՝ դատական խիստ փափուկ գործեր ալ զրաւած էին իր ժամերը, մանաւանդ արդար զատերու պաշտպանութիւնը (որոնց մասին յետոյ), ինքը կատարեալ անձներութեամբ զլուխ կեցաւ ամէն կերպ հաւաքոյիներու։

Համերաշխական այս ժողովներուն տեսակ մը ներկագործում տալու համար, Յոյն Պատրիարքարանի Վարչութիւնը 1919 Յունեար օկտոբերի Այս - Թոփատա մէծ եկեղեցիին մէջ կատարեց Հայ նահատակներու յիշատակին համար մէծահանդէս պատարագ եւ հոգեհանդիստ, որու միջոցին Գերմանիա կրթւած յոյն Մետրապոլիտներ հայ ապէին կրած անլուր տառապանքներու թւումն մասնացն ըրին, եւ այս առթիւ խիստ յուղումնալից ու պերճախօս դամբանական - քարոզներ արտասանեցին։ Եկեղեցական արարողութեան աւարտումէն յիտոյ, մասնաւոր սրահի մը մէջ յատուկ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ, երկուստեք հայերէն եւ յունարէն ճառեր արտասանեցան, եւ Հմայեակ Խոսրովիան Փրանսերէն լեզւաւ խիստ զեղեցիկ բանախօսութիւն մը ընելով՝ շնորհակալութիւն յայտնեց Յոյն Աղգին ջերմ հայասիրութեան համար բիւղանդական ժամանական ժամանակի հայ կայսրերու ծառայութիւնը թւեց, եւ ի վեր հանեց հայ եւ յոյն եղբայրակցութեան վաղնջական գոյութիւնը, որ արժանացաւ հոն նեկայ յոյն պաշտօնական անձներու սմէնամէծ գնահատութեան։

Յոյներու այս ցոյցը փոխանակւեցաւ Ահարոնեան Պատւիրակութեան ժամանումի նախօրեակին՝ 1919 Յունեար 12-ի կիրակի առաւտօտ, Բերեյի Ս. ԵՐԻՈՐԴՈՒԹԻՒՆ եկեղեցիին մէջ՝ արտակարգ հանդիսութեամբ, եւ ուր հրաւիրւեցան յոյն Մետրապոլիտներ եւ յոյն հասարակութեան պաշտօնական մարմինները, Ֆէնէրի Յոյն Պատրիարքարանի ներկայացուցիչներով։

Կոմիտաս վարդապետին պատարագը սքանչելի կերպով երգւեցաւ զարգական զասին կողմէ եւ յոյն նահատակներու համար կատարեցաւ մէծահանդէս հոգեհանդիստ։ Այդ օրը յոյն Մետրապոլիտներ եկեղեցւոյ սեղանը բարձրանալով, յաջորդաբար արտասանեցին զրաւոր ճառեր եւ անիծւեցին այն ձեռքերը, որոնք յոյն ե հայ արիւնակեղութիւններու պատճառ եղած էին զաղանային անդժութեամբ։

Սակայն, այս արարողութիւններու միջոցին, ես ինքոյնքէս ելած, աչքիս առաջ կը կարծէի տեսնալ յա՞նկարծ թուրք Սահմանադրութեան վերաբարակութեան վաղորդայինին կնքւած թուրքեւ հայ, հայեւթուրք եղբայրակցութիւնները եւ այդ առթիւ կատարւած մէծամասս հանդէսները Մայր եկեղեցիին մէջ։ միտքս կուղար 1908

տարիին այն օրը, երբ նոյն այս Երրորդութեան Եկեղեցիին մէջ Տեղապահ Դուռը եան Եղիչէ Սրբազնին նախազահութեամբ հոգեհանդսութեան մեծաշուք հանդէս մը տեղի ունեցաւ նահատակ թուրք զինուրներու յիշատակին, ի ներկայութեան թուրք պետական բարձր պաշտօնեաներու, իմամներու, փաթթուցաւոր մոլլաներու, որոնցմէս ոմանք երեսնին դէպի հարաւ կամ դրան կողմը դարձուցած էին «կեալուռութենէ» չպլչկւելու համար . . .

Այսուհետեւ միաքանչ ակաւ թաղումիմի պարտէցին մէջ տեղի ունեցած հայ-թուրք սիրալիր ցոյցը եւ այն հոգեհանգիստի հանդէսը, զոր կար-գաղթեց Բերայի թաղական խորհուրդը ու մեր եկեղեցական դասը, գլխաւորութեամբ Արքատակէս Եպու. Վանքեանի՝ հագւած - շքած խաչերով խաչելէմներով, ընկերակցութեամբ երգեցիկ դպիրներու, ուղղեցաւ Շիշլիի ափայտոյ շինւած Հուրբիյէր քէփէսի (ազատու-թեան բլրակ) ըստած վայրը, եւ երգեց՝ «Ի Վերին երրինակն»՝ «ՔԱՆԶԻ ԶՔԵԶ ՕՐՀՆԵՄՔ», ՀՈԳԻՈՅՆ ՀԱՆԴՈՒՑԵԼՈՅ» եւ այլ ա-զօթքները, այնտեղ նոր թաղուած Մուխթար - պէտ անուն զինւորա-կանին վրայ, որ Սելանիկէն Կ. Պոլիս արշաւող Ազատարար կոչւած բանակին՝ համիսեան արիւնաբրու զինւորներու հետ ունեցած ընդ-հարումներու միջոցին սպաննւած էր եւ «շէփիտ» (մարտիրոս) հը-չակւած :

Միտքս եկան այս բոլորը, նաեւ այն խանգալառ ընդունելու-
թիւնը, զոր Հայերը ըրին Սապահէտաթին իշխանին, եւ Հայ Յեղա-
փոխական Դաշնակցութիւնը յատկապէս վարձեց ոռոմանական
Քառոլ Ա. Հոկայ շոգենաւը ու ամբողջ դիշեր մը ճամբորգեցինք մին-
չեւ Տարտանէլ ընդ առաջ այդ իշխանին, որ իր հօրը դպաղը հե-
տը կը ընթէր Թրանսայէն : *) Այս շոգենաւին ճամբորգներն էին բա-
ւական թւով Հայեր, որոնց մէջ՝ Յարութիւն Շահրիկեան, Վարդգէս,
Գրիգոր Զօհրապ, Ռուբէն Զարդարեան, և Ակնունի, Հմայեակ Խոս-
քական, Պետրոս Հալածեան, ևս, Տոքթ. Բաշաեան, Միհրդատ Հայ-
կադն եւ ուրիշ շատեր, որոնց անունները չեմ յիշեր :

Միտքս եկաւ այս բոլորը եւ կարծեցի թէ դեռ ականջիս կը հընչէր «ԱՆԴՐԻԱՆԻԿԱՐ ՔԱԶ» աղօւ երդը, զոր այդ միջոցին Սուլթան Համիլտոնի ուրբաթի Սկլամլըքի ազօթքին ի պատիւ գացող թուրք երաժշական բանակը նւադելով կը նւազէր Բերայի մեծ պողոսայէն

*) Սապահետուին իշխանը Սուլքան Համբարձուի ժեռորդին էր եւ իր հօրը հետ, Սուլքանին վտանգաւոր համարւած ըլլալով, կ'ապրեին Փարիզ:

անցած պահուն եւ փողոցներուն իրկայնքը խռնւած ամենալդի ժողովուրդի բազմութեան անվերջ ծափահարութիւններուն կ'արժանարնար...

Հապկ' իզմիրեան Սրբազնին Սաղիմեան աքսորէն դարձին կատարւած աղջային չերմ ընդունելութեան թուրք մասնակցութի՞նը — ո՛ր մէկը բաեմ . . .

Աւա՞զ փառացն անցաւորի . . . Այս փառաւորութիւններուն չէր ուշանաբ յաջորդել՝ Համբոսի հրամանով Փէօն Թիւրքերու կողմէ սարգւած Ատանայի Կիլիկեան մեծ հայաջարդը, որու վրա խօսելու քաջութիւնը կը պակսի ինձ, եւ կը թողում որ բարձրաբարբառ խօսին այդ առթիւ հրատարակուած խիստ վաւերական տեղեկատու - հատորները, Ատանա դացած Քննիչ Յանձնախումբին տեղեկութիւննը, մանաւանդ ողբացեալ Յովհաննէ Զայեանի սպառապտած մանրամասն ձեռագիրը, որ չդիտեմ թէ ո՞ւր պահւած կը մնայ այժմ :

Անցեալ պատմութիւններ ասոնք՝ խարեզատի՛ր, որոնց նման չէին բարեբախտաբար 1919-ի հայայցին եւ եւ յունահայ հանդիսութիւնները, որոնք պսակեցան կատարեալ եղբայրակցութեամբ եւ ամենաանկեղծ սիրու:

Այս հանդէներու վաղայացջորդ օրը, յոյն գեսպանատան Բարձը Քոմիսէր Հայասէր Պ. Գանէլորուլօն շնորհակալութեան այցելութիւն մը ըստ Բերտյի թաղական խորհուրդին եւ յետոյ թէ՛ Խոսքովեանին եւ թէ իմ տունս անձամբ եկաւ կրկնելու իր շնորհակալութիւնները՝ տեղի ունեցած փառաւոր հանդիսութիւններուն եւ այդ առթիւ Հայ ժողովուրդին դէպի յոյն ազգը արտայայտած սիրալիր դպացումներուն համար :

Քանի մը որ յետոյ, Հելլէն կարմիր Խաչը մեծաքանակ դեղեր եւ այլ ամենայն ինչ որ հարկաւոր էր վիրաւոր եւ հիւանդ գարմանելու, մեր Հայ Կարմիր Խաչի Կեզբոնը կ'ուզարկէր, եւ ես՝ Խոսրովկեանի հետ կը փութայի մեր խորին չորրահակարութիւնները անձամբ եւ զբաւոր յայտնել Հելլէն Կարմիր Խաչի Վարչութեան, եւ բոլոր զրկւածները մենք գէպի Հայաստան շուտով ճամբայ կը հանինք, որովհետեւ Հոն կարիքը արագարդ կերպով լոյժ զդալի էր, ինչպէս կ'իմանացինք ճամբոռներէ եւ Հասած նամակներէ :

Հմայեակ Խոսրովեան առանց այլեւայիլ՝ առաքումներու ծախ-
քերը կը հոգար Ընկեայն եւ ես ա՛յն աստիճան կը յուզէի իր այս

աղքասիրական վարժունքէն, որ՝ իր անւան տօնին օրը յոյժ զգածւած ըլլալով՝ իրեն ուղղեցի հետեւեալ տողերը քարթիս վրա.

ՄՐՑԻ ԶԱՅՆ

(Տօն Վարդանանց Զօրավարաց)

Ո՞վ, Վարդանանց քաջամարտիկ
Հերոսներու արժանաւոր,
Դուք զաւակներ, աղէ՛ զարթի՛ք
Ծափել տօնը, մեր Հըմայեակ
Խոսրովեանին, ժողովներու
Այն որ դիւթիչ է հըմայեակ:

Մաղթենք իրեն ապրիլ երկար,
Ապրիլ դւարթ, վերածնւած
Հայաստանին օդտին համար:

Բերա, 10 Փետրւար 1919

**

Այս ամէն անցուդարձերու վրա ամփոփ գաղափար մը տալու համար, հոս ներեխ ինձ նոր վակագիծ մը բանալ, եւ կրկնել, ինչպէս ըսած եմ յառաջադոյն, թէ աջ ու ձախ կարեւորագոյն անձերու կը դրէ՛ տեսակ մը համարատութեան ձեւի տակ, երկար նամակներ, ինչպէս Ամենայն Հայոց Հայրապետին, Գարրիէլ Նորատունկեանի, Ա. Ահարոնեանի եւ Արշակ Զօպանեանի:

Գրածներէս կը ներկայացնեմ հոս Արշակ Զօպանեանի ուղղածս, որուն նման էին եւ միւս դրածներս:

Ահաւասիկ այն.

Բերա, 17 Մարտ, 1919

Աղնիւ եւ սիրելի բարեկամս,

Պ. Արշակ Զօպանեան,

Պարիս.

Զեր ապահովագրեալ նամակը (անթւական) ընդունած էի արդէն եւ պատասխանն ալ գրած ու ձեզի յլած Յունաց պատրիարքական Տեղապահին ընկերացութեամբ հոդ եկող Տոքթ. Բարս բարեկամիս հետ, որ ամսոյս 4-ին մեկնեցաւ հոսկէ. յուսամ թէ ստացած էք զայն: Սոյն նամակէս քանի մը օր վերջն էր՝ որ Մ. Ledoux-ն ինձ

յանձնեց ձեր՝ դարձեալ անթւական մի ուրիշ նամակը, որուն կը պատասխանեմ այսօր:

Զեր երկրորդ նամակը թէ եւ կրկնութիւնը առաջինին, շա՞տ դոհ զիս թողուց, տեղեկացնելով՝ որ Պ. Պօղոս Նուպարի հետ ձեր յարաբերութիւնները վերահաստատւած են. դուք անոր միշտ աջ բազուկը եղաք ցարդ. կարծեմ անոր լաւ գործերը հրապարակաւ գովարանեցիք. բնական էր՝ որ հարկ եղած ատենն ալ պիտի քննադատէիք, քանի՛ որ խնդիրը զուտ ազդային է, մանաւանդ՝ աղդային կեանքի եւ մահու խնդիրը: Ես ալ կը ձայնակցիմ ձեզի, թէ քիչ մը թոյլ ու ուշ վարւեցանք. Կովկասի հերոսամարտի սկիզբները գո՞նէ արթնալու էինք... Բայց մէնք հոս՝ ամէն յարաբերութիւններէ զըրկած, ջարդի, թալանի, տարագրութեան գժբախտ լուրերէն զատ ո՛չ մէկ բանի տեղեակ չէինք: Բարեբախոսաբար՝ որ Հայկական նորակաղմ Հանրապետութեան պատւիրակները Պոլիս եկան, եւ մէնք անոնց չնորհեւ կրցանք քիչ մը տեղեկութիւն առնել անցած - դարձաներէն, այն ալ ի՞նչ դողունի կերպով. Պ. Ահարոնեան կրնայ ձեղ ողատմել:

Թոքաթլեան պանդոկին մէջ խեղճերը պաշարւած էին լրտեսներով. այժմ պղպասիրութիւն եւայլն քարոզող կարդ մը չքոտի պարոններով, *) որոնք անոր ասոր խորհուրդ կուտային չմերձենալ երբեք այդ վտանգաւոր Հայերուն... Բայց ո՞վ մտիկ կ'ընէր շան հաշիւններուն... Կը տեսնէինք իրենց հետ եւ կը տեսնէինք երկար ու դու կ'ըլլայինք...

Մեր ցաւալող վիճակին մէջ, մեր ամենէն դառն ու սաստիկ վայրկեաններուն իսկ, մէնք վստահ էինք՝ թէ պիտի փրկւէինք. կ'ըսէինք՝ թէ մեր փրկութեան ուահվիրանները Պարիս են ու կը հսկեն հայկական զատին՝ արգոսեան աչքերով... Այո՛, մեր յոյսը մեծ էր վաղո՞ւց եւ մեծ է դարձեալ Պօղոս Նուպարի նախազահութեամբը կազմւած ժողովին վրա, որուն կուգայ միանալ հայկական նորածին Հանրապետութեան ներկայացուցութիւնը, միայն թէ՝ ես մեծապէս կը ցաւիմ, որ մինչեւ հիմա ձեզմէ կարգացյց մը դեռ չեկաւ հոս. ձեզմէ ըսելովս՝ անշո՞ւշտ հայկական հարցի վարիչ մարմինը ըսել կ'ուղեմ. եւ ցաւալի է՝ որ Դուրեան Սրբազն՝ ինքն ալ դեռ չմտածեց այդ կարգացյցը կամ կարգախօսը, ինչպէս որ կ'ուղէք, ես Լին կանւանեմ:

*) Ասոնց զիլսաւորմ էր Յարուբիւն Մկրտիչեան անուն անձը, որ իր քշնամիներէն սպաննեցաւ իր բնակարանին մէջ՝ զիշերով:

Կ'ԵՐԵՒԻ՝ թէ Սրբաղանը աչքէ հեռու, միտքէ ու սիրտէ ալ հեռու կը համարի մեր կ. Պոլիսը. հոգ չէ, հարկաւ պիտի դառնայ օրմը... կը տեսնեինք. այդպիսի կարդացոյց մը մեծ ուղեցոյց մը պիտի ըլլար կ. Պոլսոյ Հայութեան... : Հոգինիս ելաւ, տակաւին չը կրցանք հայկական համագումար ժողով մը կազմել, մեր «Լիլան» (որ ա'լ գոյութիւն չունի) եւ խորհրդակցական ժողովը (զոր թաղեցին), այդ համահայկական ժողովին նախաձեռնարկն ըլլալ սկսած էր: Հակառակողները դարձեալ սկսան կուսակցական ուրականը տեսնալ ատոր մէջ. Պատրիարքարքարաններու գերիշխանութեան հարւած համարել այդ ձեռնարկը, նոյնիսկ կրօնական սրբապղծում տեսնալ մէջը, եւ գործին հետամուտ եղողները խոհեմութիւն համարեցին չպայքարիլ եւ համերաշխութեան ճամբէն չեղիլ, երբ ահա հաստէն Պատրիարքը:

Պատրիարքը անմիջապէս կրցաւ համաձայնիլ կաթոլիկ ու բողոքական Հայերու կրօնապետներու հետ, եւ կարող եղաւ կազմել Համագույին (կամ չ. Մէնէվիչի բառով՝ Համահայկական) ժողով մը, որունկ 'անդամակցին՝ մեր Պատրիարքը, կաթոլիկ Հայերու Տեղապահը եւ բողոքականներու Աղջապետը, եւ նաեւ Հայոց Ազգ. Վարչութեաններէն չորս, եւ միւսներու Վարչութիւններէն ալ երկուքական անդամներ: Այս Համագույին ժողովը պիտի վարէ Որբախնամը եւ տարագրեալներու գործը եւ կարմիր Խաչի հսկողութիւնը պիտի ըրեւ կենսական խնդիրներու համար:

Մեր ուղածը այս չէր անշուշտ. բայց աս ալ (որ չեմ կարծեր թէ չառ կեանք ունենայ)՝ բաւական բան մ'է, եւ կրնայ գէպի աղջային ԲՈՒՆ ժողովի մը կազմութեանը առաջնորդ ըլլալ:

Կարդացի, որ Դուրեւան Սրբաղան իր Ընկերներով հասած է արդէն Պարիս, ուրեմն պատգամաւորական ժողովի գումարումն ալ արդէն իսկ սկսած պէտք է ըլլայ. բոլոր սրտովս յաջողութիւն կը մաղթեմ եւ կը սպասենք որ չուտով յուղարկէք մեղի՝ Անկախ, Միացեալ (Կիլիկիան ալ մէջն ըլլալով) Հայաստանի հոչակման մե՛ծ, մե՛ծ աւետիսը... :

Մեր Աղջային Վարչութիւնը Պատրիարքին գալուն վրա, հրաժարականը տւաւ, թէեւ վաղուց պաշտօնապէս հրաժարած ու գործ քաշւած էր, եւ դէպքերու բերմամբ միայն նորինորոյ պաշտօնի գլուխ անցած էր: Պատրիարքը երկու օր առաջ աղջային ժողով գումարեց. գացի ես ալ. ի՞նչ տիսուր տեսարան... Սրահին աջակողմը լի, իսկ ձախակողմը հազիւ 10 կամ 12 երեսիսան. բացականներէն

Ճիշտ 30 հատը նահաստակւած...) . մահաստանի մը երեւոյթն ունէր ժողովատեղին, որուն մէջտեղը Պատրիարքը կանգնած, յուղած շեշտով մը արտասանեց «Հոգւցն Հանգուցելոց»-ը. յետոյ իր տարագրութեան ու վերադարձի մասին Հակիմ խօսքեր մը ընելով, լսաւ թէ՝ Վարչութիւնը հրաժարած է, բայց անոր տեղը նոր մը ընտրելու համար, ո'չ մեծամասնութիւն ունի Ազգ. ժողովը եւ ո'չ ալ կարելիութիւն պակած երեսփոխաններուն տեղը լրացնելու. ուստի՝ արտօնութիւն խնդրեց ներկայ ժողովին, որպէսզի Պատրիարքը ինքը իր կողմէն անւանէ Կրօնական, քաղաքական ժողովներու ատենապետները միայն, եւ ասոնք ալ որոշեն իրենց ընկերերը: Պատրիարքը կըսէր նաեւ, թէ առամենակեալ հանգամանքով, մէկ - երկու ամսւան համար է որկ 'ուղիքը այս կարգադրութիւնը, զի ընդհուպ թերեւս Մայր Հայրենիքի կառավարութիւնը տնօրինէր ամէն բան եւ կ. Պոլիսը Հայութեան կեղրոն մը ըլլալէ այլեւս դադրելով, պարզ գաղթափայր մը մնար... Բայց Պատրիարքին պատասխանեւ պէտք էր, եւ ահա պէրճախօս շրթունքներ բացւեցան՝ բարբառեցան, Հակասահմանադրական համարեցին Պատրիարքին առաջարկը: Բայց ես, Գարաեան Ստեփան եւ ուրիշներ հակասահմանադրական ոչինչ չգտանք եւ պահանջեցինք Պատրիարքին վրա վստահութիւն ունենալ եւ թողուլ՝ որ աղատօրէն գործէ, ինչպէս 1878-ին ալ ներսէս Պատրիարք ըրած էր այդպիսի մի բան, զոր այն ատենի երեսփոխանական ժողովը հակասահմանադրական բնա՛ւ չէր համարած եւ արտօնած էր Պատրիարքին անկաշկանդ գործունէութիւն:

Ժողովականները վիճարանութիւններէն գոհ, ուղեցին որ Պատրիարքը իր Ընտրելիներուն անունները գո՞նէ տար նախապէս, եւ ժողովն ալ միաձայնութեամբ ընդունի զանոնք, ու այս ձեւակերպութեամբ անոնք ժողովին ընտրւածի պէս նկատւին: Ես այս ձեւին հակառակ արտայատեցայ եւ պահանջեցի՝ որ Պատրիարքը իր Ընտրելիներուն անունները չտայ. բայց եղած ստիպումներուն վրա թուլացաւ Պատրիարքը եւ տւաւ իր Ընտրելիներուն անունները՝ Կրօնական ժողովի ատենապետ հոչակելով ծերունի Վահրամ Արքեպիսկոպոս Մանկունին՝ հոն նրկայ, եւ Քաղաքական ժողովի ատենապետ՝ Տոքթ. Գր. Դաւիթեանը, որ հրաժարական տւող Քաղաքական ժողովին ատենապետն էր արդէն:

Եւ ժողովը վերջացաւ այս նորօրինակ ընտրութեամբ, որ Պատրիարքի մը պատրիարքական պաշտօնին վեհութեան համապատասխան չեղաւ բնա՛ւ ըստ իս. ի՞նչ եւ իցէ, եղած եղած է, սակայն՝ այս բոլոր եղածներուն մէջ, մենք միշտ կը սպասենք, որ հոտկէ հոս

հրահանդ մը որոտայ, իսկական ժղովով մը Ազգային, այսինքն բոլոր Հայութիւնը ներկայացնող Մի և ՄիԱԼՈՅԾ՝ Վերին ԺՌՂՈՎ ՄԼ ԷՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ. պայմանաւ սակայն՝ որ Ազգային Պատկերակութենէն գալիք այդ հրահանդը հոս գաղտնի չպահւի, ինչպէս եղաւ ուզւած պատղամաւորներու համար եկածը, եւ երկու - երեք հոգի որոշումով կատարւեցաւ ընտրութիւնը:

Երէկ՝ մեր «Հայ Կարմիր Խաչը», որ Ազգ. Վարչութենէն նախապէս վաւերացւելէ յետոյ, օր մ'ալ, յանկա՛րծ, նոյն Վարչութենէն հրապարակաւ բանադրւեցաւ, իւր սարքած Թé - Concert -ը տաւ, հովանաւորութեամբ Պ. Ֆանչէ Տէսրէսէի. ներկայ էր ծովակալ Պ. Ամէ, նաեւ անդղիական, իտալական, ամերիկեան, հելլէն եւ պարմիկ կառավարութիւններու ներկայացուցիչները. այսպիսի փառաւոր բան տեղի ունեցած չէր. Փրանսական նաւագածու զինուրիներու սուտար խումբ մը հանդէսը բացաւ Բամ. Փորոտանը հնչեցնելով, յետոյ La Marseillaise -ը, ամբողջ սրահին որոտլնդուստ ծափերովը խառն; Սահափ միայն ըսեմ, որ այդ հալածւած Հայ Կարմիր Խաչը կրցաւ երէկ մայրաքաղաքի հայ եւ օտար ընտրւած դասակարգին հոծ բաղմութիւնը հաւաքել, եւ 5000 ոսկի արդիւնք մը ձեռք բերել:

Զեղի լուր տամ, թէ կաթոլիկ Հայերն ալ նախանձելով՝ որ Պարիս մեկնող պատկիրակները առանց իրենց հաւանութեանը ընտրւած են, մանաւանդ՝ նախկին Պատրիարքնիս ալ հետ զրկւած, ամէն բան ըրին Փրանսական Haut - Commissaire -ի մօտ եւ յաջողեցան հըրաման բերել տալ, ու ժողով գումարելով ընտրեցին իրենք ալ երկու հոգի՝ Գրիգոր Սինապեանը եւ Պողոս Մըսլըլըն, որոնք այսօր կամ վաղը կը մեկնին հոսկէ, հոդ գալու իրբեւ կ. Պոլսոյ Հայ - Կաթոլիկ հասարակութեան կողմէ պատկամաւոր. ասոնցմէ առաջ մեկնեցաւ արդէն թերգեան հրաժարեցւած Պատրիարքնին, որ զնաց Հըսոմ, եւ հոնկէ ալ Պարիս պիտի զայ, կ'ըսեն, եւ այս՝ գիտէ՞ք, ինչո՞ւ համար. որպէսզի կիլիկիոյ Կաթոլիկոսութիւնը ինք ձեռք անցընէ բոլորովին, որովհետեւ տափ իրեն իրաւունք է եղեր եւ ո՛չ թէ Հայերուս. շա՛տ ու շա՛տ ցաւալի է ըսել, որ Ֆրանսացիներն ալ իսխտ քաղցը հայեացքով մը կը վերաբերին այս կաթոլիկական ամենաձգիմ հարցին հանդէպ...

Պատճառը սակայն մենք եղանք. եթէ Պարիս զրկւած պատղամաւորները կաթոլիկ եւ բողոքական Հայերու հետ ընդհանուր ժողով մը գումարելով ընտրէինք՝ այս բաժանումը պիտի չծագէր: Գուցէ բողոքական Հայերն ալ ուզեն վաղը պատղամաւորներ զրկել եւ արդէն բողոքի ձայն մ'ալ բարձրացուցին, բայց անհետեանք մնաց:

Ես կը կրկնեմ դարձեալ, թէ մեր պոլսական սլատղամաւորները, երեքն ալ ընտիր ու գերընտիր անձեր, բայց ընտրւեցան նախ՝ Տոքթ. Դաւիթեանի կամքով, յետոյ՝ խորհրդակցական ժողովին բրոբականտի Յանձնախումբին ու յարաբերականին միալոյժ մէկ նիստին որոշումովը:

Ես այս վերջինին ներկայ եղայ, բայց կատարւած իրողութեան մը հանդէպ գտնուելով, մանաւանդ ընտրւածներու մասին ունեցած մեր անսահման համակրութեանը պատճառաւ, շատ վիճաբանութիւն չըրինք, թէ եւ Դուրեանի համար, այսինքն՝ Դուրեանին եկեղեցական հանդամանքին համար գիտողութիւն ըրի: Զարմանալին այն է, որ երբ ես Դուրեանի եկեղեցականութեանը համար գիտողութիւն կ'ընէի, Պողոս Մըսլըլ՝ որ անդամ էր մեր այդ ժողովին իրեւ հայ - կաթոլիկ՝ ինքը հակառակ խօսեցաւ ինձ, բայց վերջն ալ իրենց ժողովին մէջ նոր ընտրութեան մասնակցեցաւ, գրդւելով անջուշ Պարիս երթալու մարմաջէն:

Առաջին օրէն կարելի էր տարբեր ձեւ տալ այս ընտրութեան եւ չթողուլ որ այս անհաճոյ բանը տեղի ունենար, բայց Դաւիթեանն ալ մեղաւոր չէ՝ Պ. Պողոս Նուլպար - բաշայէն եւ Գարբիէլ Նորատունկեանէն եկած նամակները գաղտնածածուկ պահելովը. վախցեր է որ մի՛ գուցէ թուք կառավարութիւնը ինդիրը իմանալով արգելք յարուցանէր. ինչ եւ է՝ ձեզի այս բոլորը կը պատմեմ, որպէսզի գիտնաքամէն ինչ եւ ըստ այնմ վարւիք հոգ, եւ կը խնդրեմ որ բնա՛ւ Հրատարակութիւն մը ըընէք նամակէս, զի անցած - գացած բան է, այժմ էականը ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ յաջող լուծումի մը յանդիլն է, այն նայինք...

Ես ցաւով կ'իմանամ, թէ Ֆրանսա կ'ուզէ եղեր Protectorat ունենալ ամբողջական Հայաստանի վրա. Protectorat -ու Հայաստան չըլլար, եւ այդ կերպով կազմւած Հայաստանի մը մէջ ՀԱՅԼ ԱՆԿԱՆ չըլլար, այլ՝ շա՛տ շա՛տ Ալֆերիի կամ Թիւնիլի մէջ ապրող Հայու մը պէս, իր կողքին ունենալով իրեն չափ ազատ, արձակ - համարձակ ջարդարար այլադէններ իրենց սարօք. կ'աղաչեմ որ այս կէտին ուշադիր ըլլաք: Մեղի համար անկեղծ բարեկամ, ու մեր գատին համար ամենատաք սիրով աշխատող հելլէն եւ իտալ կառավարութիւնները կը տեսնամ. անցեալ օր Պատրիարքը իտալական Բարձր Քոմիսէրին՝ կոմս ՍՓոոցայի այցելութեան ժամանակ, ուզեց՝ որ ընկերանամ իրեն. զացի, հիանալի էին մարդուն արտայայտած զգացումները. Հայերուս եւ Հայաստանի նկատմամբ. «Անկալս Հայաստանը պիտի շինւի: Վստահ եղէք», ըստւ, ու յարեց՝ թէ, ինքինքը ամենէն

երջանիկը պիտի համարէր, երէ ինքը առաջինը ըլլար իր կառավարութեան շնորհաւորութիւններն ու ողջոյնը նորակազմ Հայաստանին պետին տանելու...

Յոյներու հետ յարաբերութիւններնիս խիստ լաւ է . այդ մասին անհոգ եղէ՛ք . մարդեկը ի՞նչ որ ուղենք պատրաստ են ընելու : բայց մինչեւ որ Հայաստանը անկախ, աղատ եւ ինքնավար չըրատարակւի, եւ ո՛չ մէկերնուաս սիրու հանդիստ պիտի ըլլար : Քանի՛ օրերը կ'անցնին՝ մեր սրտմաշուքը կ'աւելնայ, մանաւանդ՝ տեսնալով որ տակաւ անդղիացի եւ ֆրանսացի պաշտօնատարներ կը սկսին թուրք գաղանները անմեղ՝ ո՛չ - յանցապարտ նկատել, ու Հայերը համարել՝ իրեւ տեղի տւող կատարւած տարագրութիւններուն, ջարդերուն, առեւանդումներուն, թալաններուն, եւայլն, եւայլն . եւ այս ողբալի՛ կատակերգութիւններուն հեղինակ՝ թրքուհիներն են գլխաւորապէս : Ասոնք սկսած են արտօնւիլ՝ իրենց ամրապէս փակ՝ հարեմի դռները լոյն բանալ նորեկ օտար երիտասարդ սպաններուն, ընկալուչ ըլլալ իրենց . եւ ո՞վ է որ հարեմական շայտութիւններուն ծոցին մէջ խելքը գլխէն չթուցներ, ու հարեմա - հուրիխական փաղաքշանքներուն աղդեցութեան տակ ապշահար՝ չընդունիր մեր անտէր՝ անտիրական աղդին նկատմամբ յօրինւած սիսալ ու թիւրք գաղափարները :

Ե՞՞ այս օտարականներէն շատերուն երբ պատահիմ, միշտ կը կրկնեմ նարակէյի անմահ երգը՝ « Benis soient ceux, qui aiment la paix de l'Arménie » եւ կը յայտնեմ՝ թէ այս օրհներգութիւնը իր մէջը ունի նաեւ անձեք անոնց դէմ, որոնք չեն սիրեր խեղճ Հայաստանը իւր արիւնահեղձ տառապանքներուն մէջ : Միամիտները՝ զարմանալի՛ բան, կ'այլային շուտով եւ անմիջապէս կը վստահացնեն մեղ, թէ Հայաստանը պիտի աղատի, այո՛, պիտի աղատի, բայց ե՞րբ, ե՞նչպէս... Ասոր պատասխան տալ չեն գիտեր, գժբախտաբար...

Թաթո յոդնեցաւ գրելով, բայց ձեղի համար գրելու նստած աւտենս զրիչս կը վաղէ՝ կ'երթայ առանց սեթեւեթի . ներողամիտ եղէք ուրեմն իմ անկապ խօսքերուս, անոնց մէջէն առէ՛ք դուք միայն այն կէտերը, որոնք ուղղակի յարաբերութիւն ունին մեր սուրբ հարցին հետ :

Շնորհակալ եմ, որ միշտ կը սրտապնդէք մեղ, ձեզմէ հասած ամէն տեսակ սրտապնդում աւելի վաւերական է, քան ուրիշ ո՛ր եւ է կողմէ եկածները, որովհետեւ ես համոզւած եմ, թէ ձեր մատները չեն որ կը դրեն, այլ ձեր սրտին տրոփիւն մէկ մի թելերը... Ապրի՛ք... շա՛տ ապրիք...

Զեր նամակին մէջ պատւելի Քերոբեանը հարցուցեր էիք . չգետեմ թէ ի՞նչպէս այս պատւական ու սիրելի բարեկամիս մասին ես լուս էի մնացեր նախապէս գրելուս : Խեղճը ինձ հետ Զանդըը աքսորւեցաւ եւ բարեկախտաբար ինձ հետ ալ վերադարձաւ : Մեր տարագրութեան ամբողջ տեսողութեանը միջոցին ստոյիկեան քաջութեամբ խրախոյս եղաւ ամենուս . չպիտի մոռնամ երբեք իւր պահապան հրեշտակի դերը այն սոսկալի գիշերը, երբ ամենքս մէկ Քալէյճիկ կոչւած վայրին աղտոս ու մթին մէկ խանին անկիւնը թըլրմած, մենք իրարու վրա պառկած, ինքը միայն կանգուն՝ ոտքի վըրա կը հսկէր գրանը քով, աղօթելով շարունակ եւ երկնային այցելութիւնը հայցելով մեր գժբախտ վիճակին վրա... : Զինքը շա՛տ անդամ կը տեսնամ, միշտ նոյն ժպտագէմ անձն է, երիտասարդ - ծերուկ մը՝ շա՛տ համակրելի, եւկ ը տեսակցիմ հետը մեծ հաճոյք քով... :

Վաղը կամմ իւս օր մեր Կոմիտաս վարդապետը ճամբայ կը հանենք դէպի այդտեղ . հետը երկու ընկեր ունի . հոդ հասնելուն՝ հարկաւ պէտք եղածը պիտի ընէք չուտող՝ զինքը Բարիզէն դուրս Մaisson de Santé -ի մը մէջ դնելու . պէտք եղած ծախքերը ապահովւած է հոս . 1500 սոկի գրամ կայ, այս տարւան համար կը բաւէ, մը նացեալի մասին ալ կը խորհւի : Երկու տարի է՝ որ ինքը այս վիճակին մէջ է . ամենքս՝ ըստ իրեն, թշնամի ենք, մանաւանդ ես, եւ ինձ հետ բոլոր բժիշկները կամ բժիշկ անունը կրողները . վիճակը դէպի լաւն է թէեւ, բայց գեռ շատ պէտք ունի խնամքի, ինչ որ այս տեղ կարելի չէ : Զինքը ցարդ դարմանել տւինք Շիշլի՛ Հôpital de la Paix -ի մէջ . բայց չզագարի մը համար ինչ որ պէտք է չկայ հոս . պէտք եղբաղել հետը, աշխատիլ զաղափարները յեղաշրջել, պարտէզ հանել, պատյոներ ընել տալ, եւայլն . հիւանդանոցին մէջ յոյն ըլժիշկ մը կար, շա՛տ լաւ, իրեն հետ կը զբաղէր միշտ . բայց հինգ ամիս առաջ typhus հիւանդութենէն բոնւեցաւ խեղճը, յետոյ ջղաղաբեցաւ եւ ցայժմ կը մնայ այդ վիճակին մէջ :

Պիտի ինդըեմ որ վարդապետը Տոքթ . Քօլուին հետ ցոյց տրւի Professeur Gilbert - Ballet -ին եւ ասոնց յարմար դատած հիւանդանոցին մէջ ինամւրի : Չորս օր առաջ խորհրդակցութիւն մը ըրինք, Հôpital de la Paix -ի բժշկականին, Յոյներու եւ Հայոց Հետանդանոցին յիմարաբոյժներուն հետ եւ տեղեկադիր մը ստորագրուեցաւ . այդ տեղեկադիր ես ալ ստորագրած եմ, կ'աղաքմ որ Տոքթ . Քօլուեանը հոդեւին զրադի վարդապետով, ինչպէս զրադեցայ ես :

Կը յիշէք անշուշտ, որ ժամանակին դասատու մը ունեցած էք դուք, պարոն Սըմալիոն Թղթեան, որ այժմ ութսունամեայ, կը գըստ-նեի ամենախեղճ վիճակի մէջ, ձեռքէս եկածը ըրած եմ ցարդ իրեն, բայց բաւական չէ ուստի, քանի մը բարեկամներու հետ խորհեցանք անոր գրական եւ թատերական գործունէութեան վաթսունամեակը տօնել. կ'ուզեմ որ գոնէ 1000 ոսկի մը ժողվուի: Ինքը մասնաւորապէս խնդրեց ինձմէ որ զըսմ ձեզի՝ որպէս զի Պ. Պոլոս Նուպարէն եւ Ա-հարոնեանէն նպաստ մը՝ եթէ կարելի է, առնէք. յաւէտ չնորհակալ պիտի մնայ ձեզի: Թղթեան կը դրէ դեռ եւ երբեմն կուդայ ինձ մօտ:

Թղթեանի հետ պիտի կատարենք նաեւ խեղճ Մըմրեանի գրական քառասնամեակը, որովհետեւ այն ալ՝ անոք, անօդնական եւ աղքատ, զիս միայն ունի բարեկամ: Կը տեսնա՞ք թէ որչա՞փ եմ բեռնաւորւած. աւելցուցէք ասոնց վրա դեռ բժշկական եւ այլ զբաղումներ, եւ կըր-նաք մակարերել, թէ որչա՞փ լնկիչ յոդնութիւններու եմ ենթա-էայ. հանդստի մը մեծապէս ծարաւի եմ, բայց այս երկնքին տակ կարելի չէ. ամառը միտք ունիմ հեռանալու, չդիտեմ սակայն ո՞ւր...

Այստեղ այսօր լսեցինք Տոքթ. Ա. Թիրեաքեանի մահը. մեծ ե-ղաւ ցաւս, կարեւոր կորուստ մ'է այս. իրեն վրա պիտի գրեմ կեն-սակարական մը եւ պիտի կարդամ զայն Հայ Բժշկական Միութեան մէկ ժողովին մէջ:

Այս նամակը կը յդեմ ձեզի յունական գեսալանատունին միջո-ցաւ. կը խնդրեմ որ՝ դուք ալ եթէ ինձ գրելու ըլլաք, նոյն միջոցաւ առաքէք:

Զեղ միշտ համակիր եւ անձնւէր

ՏՕՐԹ. ՎԱՀՐԱՄՄ Յ. ԹՈՐԴՈՄԵԱՆ

Այս նամակիս մէջ գրւած նիւթերը արդէն Յուշատետրիս մէջ տեղ տեղ նշանակւած են, բայց կրկնութիւնը թո՛ղ չմեղադրուի, զի դուրի չէ կարեւորութենէ: Այս տեղեկադիր նամակներուս համար կը ստանայի գնահատական պատասխաններ, որոնցմէ կարեւոր կը հա-մարիմ Ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէ ընդունածս միայն ներ-կայացնել այստեղ, ցոյց տալու համար, թէ ո՞ր աստիճան տարւած էինք ազգային դաստի հարցովը եւ թէ՝ ո՞րքան կարեւորութիւն կ'ըն-ծայէր գրւածին մէր Վեհափառ Հայրապետը՝ որ «ԼՇԱԿԻՐ» տիտ-ղոսը կրելով կնքեց իր կեանքը:

Ծայրադոյն Պատրիարք

Եւ

Կաթուղիկոս

Ամենայն Հայոց

Ա. Էջմիածին, 21 Մարտի (3 Ապրիլի) 1919

Մեծարդոյ բժշկապետ Վահրամ Թորգոմեանին
Հայրապետական ողջոյն եւ օրհնութիւն

Տարիներից ի վեր միանգամայն կտրւած այնպիսի մի մեծ եւ ա-կանաւոր շրջանից ինչպէս Կ. Պոլիսն է, որի եկեղեցական կեանքի եւ եկեղեցական դասի մասին զրեթէ լուր չունեինք, բացի լրագրական ու հեռագրական, շատ անզամ իրար հակասող տեղեկութիւններից, առանձին սիրով ընթերցայ հոգեւոր որդւոյդ Մարտ 3, 1919 թ. առ մեղ ուղղած եւ տեղեկութիւններով լի նամակը:

Մրափ զեղմամբ ընդունեցինք զրեթէ տարագիր որդւոյդ ջերմ դգացումներն առ մեղ, որի մէջ ո՛չ միայն Զեր, այլ եւ տեղւոյդ ամ-բողջ Հայութեան զգացումներն ենք կարդում առ Հայ Եկեղեցւոյ հնդհանրական Հայրապետը եւ առ Մայր Աթոռը:

Ցաւօք սրտի տեղեկացանք Ամենապատիւ Մազաքիա Արքեպիս-կոպոսի մահւան մասին, որ զգալի կորուստ է Հայ Եկեղեցու ար-ժանաւոր պաշտօնեաների շարքի մէջ, սակայն միշտ միիթարական յուսով կամք առ Փրկիչն, որ իւր բարոյական այգու մշակների նոր եւ պիտանի սերունդ պիտի յարուցանէ:

Գոհ պիտի լինենք, եթէ ապագայում եւս կարող լինիք ժամանակ առ ժամանակ լիուլի տեղեկութիւններ հաղորդել մեղ, որպիսին պա-րունակում էր Զեր նամակը, մանաւանդ այսուհետեւ երբ Տեառն յա-ջողութեամբ Դաշնակից Պետութեանց հոգածութեամբ իսաղաղու-թեան օրերը ի մօտոյ պէտք է թագաւորեն եւ կարգը վերականգնեի, թէ այդը եւ թէ աստ՝ առ մեղ մեր վշտերի եւ թշւառութեանց օրքան դարձած Հայրենիքի մէջ,

Որի վերածնութեան յար ակնդէտ եւ Հայութեան Յարութեան ջերմ հաւատով օրհնում ենք մեծարաց զաւակդ մեր հոգեւոր

ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԴԻԿՈՍ

ԱՂօթարար

ԱԺՆ. ՀԱՅՈՅ


21 Մարտի (3 Ապրիլի), 1919

Ա. Էջմիածին

Մեր Կաթողիկոսին գրեցի դեռ շատ զիրեր, որոնց օրինակը չունիմ, եւ անարժանաբար խորհուրդ իսկ տալ համարձակեցայ, որպէս զի Բարիդ գումարւած Համագումարի «Երկութիւնը» Մի ընելու բարեհաճութիւնը ունենար, քանի որ Ահարոնեան հայ կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչն էր, ինչպէս այս գաղափարը ունեցած էր նաև Հայ - Կաթոլիկ պատրիարքական Տեղապահ Գերապահան Նազլեան Յովհաննէս Արքեպիսկոպոսը, որ Թերզեան Պատրիարքին հետ Բարիդ գոնւելէ յետոյ, երբ վերադարձաւ կ. Պոլիս, գացած էի իրեն այցելութեան, Համագումարի գործունէութեան լուրերը առնելու, լուրեր՝ որոնք, գժրախտաբար, գոհացուցիչ չեն...:

Թողունք սակայն այս հարցը, ու դասնանք մեր կ. Պոլսոյ գործերուն :

Բարիդ



Ա. ԱԲԵՂԵԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԹԻՒ 21

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսաստանի խորհրդային կառավարութեան 1917 թ. 2/15 նոյեմբ. Յայտարարադիրը՝ Ռուսաստանի ազգութիւնների իրաւունքների մասին :

Բանւորների եւ գիւղացիների հոկտեմբերեան յեղափոխութիւնը սկիզբ առաւ ազատագրութեան ընդհանուր դրօշակի տակ...

... Մնում են Ռուսաստանի ժողովուրդները միայն, որ ենթակայ են եղել եւ ենթակայ են ճնշումների ու կամայականութեանց, եւ որոնց ազատագրութիւնը հարկ է իրազործել վճռականապէս եւ անվերադարձ կերպով: ... Խորհուրդների Համագումարը այս տարւան յուլիս հոչակեց Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրաւունքը:

Խորհուրդների երկրորդ Համագումարը այս տարւան հոկտեմբեր ամսին հաստատեց Ռուսաստանի ժողովուրդների այս անբոնաբարելի իրաւունքը, աւելի վճռականորէն եւ որոշ:

Այդ Խորհուրդների կամքը ի կատար ածելով՝ Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը որոշեց՝ Ռուսաստանի ազգութեանց հարցի մէջ իր գործունէութեան հիմքում հետեւեալ սկզբունքները դնել.

1. — Ռուսաստանի ժողովուրդների հաւասարութիւնը եւ վեհապետութիւնը:

2. — Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրաւունքը, մինչեւ անջատումն եւ կազմումն ինքնուրոյն պետութեան:

3.— Վերացումն ազգային եւ ազգային - կրօնական ամէն կար-
դի առանձնաշնորհումների ու սահմանափակումների :

4.— Ազատ զարգացումն ազգային փոքրամասնութեանց եւ աղ-
գաղթական խմբակցութեանց, որ ապրում են Ռուսաստանի հողի
վրա :

Այսուղից բխող թանձրացեալ (կոնկրետ) հրամանագիրները կը
մշակին անմիջապէս, երբ կազմւած կը լինի ազգային գործերի
յանձնախումբը :

* *

ԹԻՒ 22

ԽՈՐՀԻԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱԲԱԴ

Ռուսաստանի խորհրդային կառավարութեան գիմումը Ռուսաս-
տանի եւ Արեւելքի բոլոր աշխատառը մահմեդականներին (24 նոյ. —
7 դեկտ. 1917 թ.) :

Հնկերներ, եղբայրներ,

Մեծ դէպքեր են տեղի ունենում Ռուսաստանում : Արիւնոտ պա-
տերազմը մօտենում է իր վախճանին . . .

... Այս սրբազն գործի մէջ մենակ չէ Ռուսաստանը . . . պատե-
րազմից հիւծւած Երրողայի ժողովուրդները արդէն ձեռք են մեկ-
նում մեղ՝ խաղաղութիւն ստեղծելով : Արեւմուտքի բանտորներն ու
զինորները արդէն հաւաքում են ընկերվարութեան դրօշի տակ՝ գը-
րոհ տալով իմպերիալիզմի մարտկոցների վրա : Իսկ հեռաւոր Հընդ-
կատանը, որ դարերով ճնշում էին Երրողայի «լուսաւորեալ» գիշա-
տիչները, արդէն բարձրացը է ապատամքութեան դրօշը՝ կազմելով
իր պատղամատորական խորհուրդները եւ իր ուսերից վար նետելով
առելի ճորտութիւնը՝ Արեւելքի ժողովուրդներին կուի ու ազատա-
զրման կոչ ուղղելով :

Ի տես այս մեծամեծ դէպքը՝ մենք ձե՞զ ենք դիմում, աշխատառ
եւ զրկած մահմեդականներ Ռուսաստանի եւ Արեւելքի :

Դո՛ւք, Ռուսաստանի մահմեդականներ՝ Մերձվոլդայի եւ Ղրի-
մի թաթարներ, Սիրիի ու Թուրքեստանի խրբազներ եւ սարթեր,
Անդրկովկասի թիւրքեր եւ թաթարներ, Կովկասի չեչեններ ու լեռն-

ցիներ, դուք բոլո՛րդ, որոնց մզկիթները եւ աղօթատները կործան-
ւել են, որոնց հաւատալիքները եւ սովորութիւնները ոտքի տակ են
առնել ցարերի եւ Ռուսաստանի հալածիչների կողմից :

Այսօրւանից սկսած՝ ձեր հաւատալիքներն ու սովորութիւննե-
րը, ձեր ազգային եւ մշակութային հիմնարկութիւնները յայտա-
րարւում են ազատ ու անձեռնմխելի : Կառուցէ՛ք ձեր սեփական աղ-
գային կեանքը ազատօրէն եւ անարդել : Դուք ունի՛ք գրա իրաւունքը :
Գիտցէ՛ք, որ ձեր իրաւունքներին, ինչպէս նաեւ Ռուսաստանի բո-
լոր ժողովուրդների իրաւունքներին, իրենց բովանդակ զօրութեամբ
պաշտպան են կեցած Յեղափոխութիւնը եւ իր մարմինները՝ բան-
ուրների, զինուրների եւ զիւղացիների պատգամաւորական խոր-
հուրդները :

Պաշտպանեցէք այդ յեղափոխութիւնը եւ նրա լիազօր կառավա-
րութիւնը :

Մահմեդականներ՝ Արեւելքի՝ պարսիկներ, տաճիկներ, արաբ-
ներ, հնդիկներ, դուք բոլո՛րդ, որոնց գլուխները եւ ստացւածքնե-
րը, որոնց ազատութիւնը եւ հայրենիքը հարիւրաւոր տարիներից ի
վեր առուծախսի առարկայ են գարձել Եւրոպայի գիշատիչները,
դո՛ւք բոլորդ, որոնց երկիրները բաժանել են ուղում պատերազմը
սկսող յափշտակիչները :

Յայտարարում ենք մենք, ահա՛ պատուած եւ ոչնչացւած են
այն գաղտնի գաշնագիրները, որ կնքել է տապալւած ցարը եւ հաս-
տատել տապալւած կերենսկին՝ Կոստանդնուպոլիսի յափշտակման
մասին : Ռուսաստանի հանրապետութիւնը եւ իր կառավարութիւնը,
ժողովրդական կոմիսարների խորհուրդը, դէմ են ուրիշների հողերը
յափշտակելուն, Կոստանդնուպոլիսը հարկ է որ մնայ մահմեդական-
ների՛ ձեռքում :

Մենք յայտարարում ենք, որ պատուա՛ծ ու ոչնչացւա՛ծ է Պարս-
կաստանը բաժանելու գաշնագիրը : Պատերազմական գործողութիւն-
ները վերջանալուն պէս՝ Պարսկաստանից դուրս կը հանեն զօրքերը և
պարսիկներին կապահովւի իրաւունք՝ ազատօրէն որոշելու իրենց
ճակատագիրը :

Մենք յայտարարում ենք, որ պատուած ու ոչնչացւա՛ծ է Տան-
կաստանը բաժանելու ՀԱՅԱՍՏԱՆԸ նրանից խլելու դաշնագիրը :
Պատերազմական գործողութիւնները վերջանալուն պէս Հայերին կա-
պահովւի իրաւունք՝ ազատօրէն որոշելու իրենց քաղաքական ճակա-
տագիրը :

Ո՞չ թէ Ռուսաստանից եւ իր յեղափոխական կառավարութիւնից է սպասում ձեզ ստրկացումն, այլ եւրոպական իմպերիալիզմի գիշատիչներից. նրանցից, որ ձեր հայրենիքը վերածել են յօշուածու կողոպտած «գաղթավայրի» իրենց համար:

Օ՞ն, տապալեցէ՞ք դրանց, որ յօշուածում ու ստրկացնում են ձեր երկիրները... ժամանակ մի՛ կորցնէք ուրեմն... Դուք ինքներդ պէտք է մինիք ձեր երկրի տէրը: Դուք ինքներդ պէտք է կառուցէք ձեր սեփական կեանքը, ձեր պատկերի եւ նմանութեան համեմատ: Դրա իրաւունքը ունիք դուք, քանի որ ձեր բախտը ձեր սեփական ձեռքերի մէջ է գտնուում...

**

ԹԻՒ 23

ԲՐԵՍՏ - ԼԻՏՈՎՍԿԻ ԶԻՆԱԴԱՐԱՐ

Կնքւած 2/15 Դեկտ. 1917 թ. Բրեստ - Լիտովսկում, մի կողմից Ռուսաստանի Սոց. Դաշն. Խորհ. Հանրապետութեան եւ միւս կողմից Գերմանիայի, Աւստրո - Հունգարիայի, Բոլգարիայի եւ Տաճկաստանի միջև:

1.- Զինագաղարը սկսում է 1917 թ. Դեկտ. 17-ի կէսօրին եւ տեւում է մինչեւ 1918 թ. Յունիար 14-ի կէսօրը...

[Հետեւում են յօդ. 2 - 9՝ պարունակելով մանրամասնութիւններ]:

10.- ... Տաճկական եւ ռուսական գլխաւոր զօրահրամանատարութիւնները յայտնում են իրենց պատրաստակամութիւնը՝ յետ կանչելու իրենց զօրքերը [չէղոք] Պարկաստանից...

**

ԹԻՒ 24

ՎԻԼՍԵՆԻ 14 ԿԵՏԵՐԸ

Զինագաղարի պայմանների մասին: 1918 թ. Յունիար 8-ին Կոնդրէսին ուղղած պատգամագրից...

... 6.- Պարումն ռուսական բոլոր հողամասերի...

12.- Օսմանեան կայսրութեան տաճկական մասերը իրենց ժամանակակից կազմով պէտք է ստանան ապահովւած ու հաստատուն վեհապետութիւն: Խոկ ներկայի թիւրքերի իշխանութեան տակ գրտնուղ միւս ազգութիւնները պէտք է ստանան աներկբայ երաշխիք իշխնց գոյութեան համար, այլ եւ բացարձակապէս անխախտելի պայմաններ՝ ինքնօրին (աւտոնոմ) զարգացման: Դարդանէլը շարունակ բաց պիտի մնայ նաւերի ազատ անցքի ու բոլոր ազգերի առեւտուրի համար, միջազգային երաշխիքներով:

**

ԹԻՒ 25

ԲՐԵՍՏ - ԼԻՏՈՎՍԿԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Հաշտութեան դաշն՝ կնքւած 1918 թ. Մարտ 3/17-ին Բրեստ - Լիտովսկում, մի կողմից Ռուսաստանի Սոց. Դաշն. Խորհ. Հանրապետութեան, եւ միւս կողմից Գերմանիայի, Աւստրո - Հունգարիայի, Բոլգարիայի եւ Տաճկաստանի միջեւ:

Լիտովոներ.՝ Ռուսաստանի կողմից՝ Սոկոլնիկով, կարախան, Զիշերին եւ Պետրովսկի. Գերմանիայի՝ Քիւլման, Խոզենբերգ, Հոփման եւ Հորն. Աւստրո - Հունգարիայի՝ Զերմին, Մերէյ Ֆոն Կապու Մերէ եւ Զիշերիչ - Ֆոն - Բաղանի. Բոլգարիայի՝ Տոշեւ, Գանչեւ եւ Անաստաով. Տաճկաստանի՝ Հաֆէի փաշա եւ Զէֆի փաշա:

Յօդ. 4.- ... Ռուսաստանը պիտի անէ իր բոլոր կարելին, ապահովելու համար շուտափոյք պարզումը Արեւելեան Անատոլիայի նահանգների եւ սրանց կանոնաւորեալ վերստին յանձնումը Տաճկաստանին:

Արտահանի, կարսի եւ Բարումի շրջանները նմանապէս անյառաղ պարպւում են ոռւս զօրքերի կողմից: Ռուսաստանը չպիտի խառնի այդ շրջանների պետական - իրաւական եւ միջազգային - իրաւական յարաբերութեանց նոր կազմակերպութեան մէջ, այլ այդ շրջանների ազգաբնակութեանը պիտի վերապահէ սահմանելու նոր կարգ, համաձայնութեամբ դրացի պետութիւնների եւ մասնաւորապէս Տաճկաստանի:

Յօդ. 6.- Ռուսաստանը պարտաւորւում է անմիջապէս հաշտութիւն կնքել Ռւկայնայի ժողովրդական Հանրապետութեան հետ եւ ճանաչել այդ պետութեան եւ Քառեակ Համաձայնութեան երկիր-

ների միջեւ կնքւած համաձայնութիւնը [9 Փետրւար 1918 թ. Բրեստ - Լիտովսկում] :

Ուկրայնայի հողը անյապաղ պիտի պարզեն ոռւս զօրքերը եւ ոռւս կարդիր գլարղիան : Ուուսաստանը գաղարեցնում է ամէն մի քարոզութիւն Ուկրայնայի ժող . Հանրապետութեան կառավարութեան կամ հասարակական հիմնարկութիւնների դէմ :

Էստլանդիան եւ Լիֆլանդիան նմանապէս անյապաղ պարզւում են ոռւս զօրքերի կողմից ...

Ֆինլանդիան եւ Ալանդեան կողիները նմանապէս ...

Յօդ. 7.- Պարսկաստանը եւ Աֆղանիստանը աղատ եւ անկախ պետութիւններ լինելով՝ գաշնազիր կողմերը պարտաւորուում են յարգել նրանց քաղաքական եւ տնտեսական անկախութիւնը ու հողային անձեռնմխելիութիւնը :

ԹԻՒ 26

ԷՐԱՅՈՒՑԻՉ ԴԱՇՆԱԳԻՐ ԲՐԵՍՏ - ԼԻՏՈՎՍԿԻ

Կնքւած 1918 թ. Մարտ 3-ին, Խորհ. Ուուսաստանի եւ Տաճկաստանի միջեւ :

Լիազօրներ - Խորհ. Ուուսաստանի՝ Սոկոլնիկով, կարախան, Զիշերին եւ Պետրովսկի . Տաճկաստանի՝ Հաֆֆի փաշա եւ Զէքի փաշա :

Յօդ. 1.- Ընդունւած են հետեւեալ որոշումները, որ վերաբերում են մանրամասնութեանց այն շրջանների [կարս, Արտահան, Բարում] պարզումը ի կատար ածելուն, որոնց մասին խօսւում է Հաշտութեան հաւաքական գաշնազրի [Բրեստ - Լիտովսկի] յօդւած 4, պարբերութիւն 2-ի մէջ : [Տե՛ս վերը, թիւ 25] :

ա) Այս նպատակի համար Ուուսաստանի Հանրապետութիւնը պարտաւորուում է ներկայ գաշնազիրը ստորագրելուց յետոյ, 6-7 շաբթաւյ ընթացքում հեռացնել պատերազմից առաջ սահմանից այն կողմը գոյութիւն ունեցող եւ վերոյիշեալ շրջաններում գտնուող իր բոլոր ուժերը, այլ եւ պաշտօնատար անձերը, թէ՛ քաղաքացիական եւ թէ զինւորական :

բ) Ուուսաստանի Հանրապետութիւնը սահմանի վրա իւրաքանչիւր 150 կամ աւելի քիլոմետրի համար պահում է մէկ զօրարաժին

(դիւիդիա), ցրում է մնացեալ բանակը եւ ուղարկում երկրի ներսերը :

ի) Ուուսաստանի Հանրապետութիւնը պարտաւորուում է զօրացըրեկ եւ բոլորովին արձակել տաճկահպատակ եւ ուուսահպատակ ՀԱՅ ՀԲՈՍՍԱԽՄԲԵՐԸ, որ դանւում են ոռւս հողի վրա եւ զրաւած տաճկական շրջաններում :

է) Ուուսաստանի Հանրապետութիւնը, յառաջիկայում, մինչեւ լողանուը հաշտութիւն կնքելը, իր սահմանի վրա եւ կամ կովկասում չպիտի կենտրոնացնէ մէկ զօրարաժնից (դիւիդիա) աւելի զօրք, մինչեւ իսկ մարզանքի նպատակներով :

եթէ ներքին աղահովութեան նկատումներով անհրաժեշտ նկատի այդպիսի կենտրոնացում, այդ դէպքում պահանջւում է որ այդ մասին առաջուց նախազգուշացւեն Քառեակ Զինակցութեան պետութիւնները :

Դրան հակառակ, Տաճկաստանը ստիպւած է, մնացեալ ուրիշ թշնամիների գէմ պատերազմը շարունակելու անհրաժեշտութիւնից զրդւած, պատերազմական վիճակի մէջ պահել իր բանակը :

Յօդ. 2.- Դաշնազիր կողմերը ... կազմում են երկու խառն՝ ոռւստաճկական Յանձնախումբեր : (Առաջին Յանձնախումբը վերականգնում է նախապատերազմեան սահմանագիծը՝ պարսկական սահմանազլից սկսած մինչեւ երեք սանձաքների՝ կարսի, Արտահանի եւ Բարումի սահմանը) :

Իսկ երկրորդ Յանձնախումբը պիտի որոշէ սահմանագիծը Ուուսաստանի եւ Ուուսաստանի Հանրապետութեան կողմից պարզելիք սահմանագիծը միջեւ՝ համապատասխան հաշտութեան հաւաքական Դաշնազրի [Բրեստ - Լիտովսկի] յօդ. 4, պարբ. 2-ի [Տե՛ս վերը, թիւ 25] : Սահմանագիծը պիտի վերականգնեւի այն կերպ, ինչպէս որ գոյութիւն ունէր 1877 - 78 թ. ոռւս - տաճկական պատերազմից առաջ :

Յօդ. 8.- [Վերաբերում է ոռւս եւ տաճիկ զօրքերի կողմից պարսկական հողը պարզելուն] :

Յօդ. 11.- Ուուսահպատակ մահմեղականները իրաւունք պիտի ունենան Տաճկաստան ներգաղթելու, հաշւեյարդարի ենթարկելով իրենց ստացւածքը եւ հետերնին տանելով իրենց ունեցածը :

ԹԻՒ 27

ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԱՄԱՉՆԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԻ ԲՐԵՍ - ԼԻՏՈՎՍԿԻ ՄԱՍԻՆ

Յայտարարագիր Համաձայնական երկիրների նախարարապետների եւ արտաքին դործոց նախարարների՝ կապահցութեամբ Բրեստ-Լիտովսկի հաշտութեան դաշնագրի կնքման, Լոնդոն, 19 Մարտի 1918 թ.:

[Բուռն կերպով բողոքում են Համաձայնական Պետութիւնները Բրեստ - Լիտովսկի դաշնագրի դէմ՝ համարելով այն բացառապէս գերմանիայի դործ եւ միայն ու միայն նրա դէմ ուղղելով իրենց սպառնալիքների սլաքները։ Եւ ոչ մի խօսք՝ Տաճկաստանի մասին։ Միւս կողմից՝ խօսում է, օր., «Հերոսական Լեհաստանի» մասին, իսկ անդին եւ ոչ մի բառ՝ իրենց «փոքրիկ դաշնակից» Հայաստանի մասին...].

ԹԻՒ 28

ԱԿՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ

(ԹԻՖԼԻՍ, 26 Մայիս 1918 թ.)

Վրաստանը շատ դարերի ընթացքում գոյութիւն է ունեցել որպէս ազատ եւ անկախ պետութիւն։

18-րդ դարու վերջին, նեղւելով ամէն կողմի թշնամիներից, Վրաստանը կամովին միացաւ Ռուսաստանին, պայմանով որ Ռուսաստանը պարտաւորէի պաշտպանել Վրաստանը արտաքին թշնամիներից։

Ռուսական մեծ յեղափոխութեան տարիներին Ռուսաստանում ստեղծւեցաւ մի այնպիսի կարգ, որի հետեւանքը եղաւ ամբողջ ռազմաճակատի փլուզումը եւ Անդրկովկասի պարզումը ուռւ զօրքերի կողմից։

Թողւած իրենց սեփական ուժերին, Վրաստանը եւ նրա հետ միասին նաեւ ամբողջ Անդրկովկասը իրենց ձեռք առին սեփական ճակատագրը տնօրինելու գործը ու ստեղծեցին Համապատասխան մարմիններ։ Եւ, սակայն, արտաքին ուժերի ճնշումը առաջ բերաւ Անդրկովկասեան երկիրները շաղկապող Միութեան քայլքայումը ու նրա քաղաքական ամբողջութեան լուծումը։

Վրաց ժողովուրդի ներկայ վիճակը հրամայական կերպով թելութում է Վրաստանին անհրաժեշտութիւն՝ ստեղծելու սեփական պետական կազմակերպութիւն, ինքզինքը փրկելու համար ստրկացումից թշնամի ուժերի ձեռքով եւ ամուր հիմեր դնելու սեփական զարդացման համար։

Համաձայն վրա, Վրաստանի Ազգային Խորհուրդը, ընտրւած 1917 թ. Նոյ. 22-ին Վրաստանի Ազգային ժողովի կողմից, ներկայիւս յայտարարում է բովանդակ ժողովուրդին՝

1. - Այժմէն սկսեալ՝ Վրաց ժողովուրդը կրում է վեհապետական իրաւունքներ եւ Վրաստանը ներկայանում է լիազօր իրաւասութիւն ունեցող անկախ պետութիւն։

2. - Անկախ Վրաստանի քաղաքական կազմակերպութեան ձեւն է՝ ղեմովրատական Հանրապետութեան ստեղծումը։

3. - Միջազգային ընդհարումների դէպքերում՝ Վրաստանը մըշտապէս մնում է չէզոք։

4. - Վրացական ժողովրդավար Հանրապետութիւնը ձգտում է ստեղծել բարի դրացիական յարաբերութիւններ միջազգային համակեցութեան բոլոր անդամների եւ մասնաւորապէս սահմանակից ժողովուրդների ու պետութիւնների հետ։

5. - Վրացական ժողովրդավար Հանրապետութիւնը իր սահմաններում երաշխաւորում է քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներ բոլոր քաղաքացիների համար, առանց ազգութեանց դաւանութեանց, ընկերային դիրքի եւ սեփի խորութեան։

6. - Վրացական ժողովրդավար Հանրապետութիւնը ազատ զարգացման լայն հնարաւորութիւն է ընձեռում բոլոր այն ժողովուրդներին, որ ապրում են իր հողի վրա։

7. - Մինչեւ Սահմանադիր ժողով հրաւիրելը՝ բոլանդակ Վրաստանի գլուխը կցած են մնում Ազգային Խորհուրդը, որ լրացում է ազգային փոքրամասնութեանց ներկայացուցիչներով եւ Ազգային Խորհուրդի առջեւ պատասխանատու ժամանակաւոր կառավարութիւնը։

Ելլուչնիկովի եւ Սարանինի ժողովածուն, որ Խորհ. Ռուսաստանի արտաքին գործոց կոմիսարութեան մի տեսակ կիսապաշտօնական հարատարակութիւնն է հանդիսանում, ոչ մի խօսքով յիշատակութիւն չի անում 1918 թ. Մայիս 28-ի Հայաստանի Անկախութեան ակտի մասին, նոյնը նաեւ՝ Ազգային պատասխանատու ժամանակաւոր կառավարութիւնը։

ԹԻՒ 29

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ

Նախնական Համաձայնութիւն՝ կանոնաւորելու համար Գերմանիայի եւ Վրաստանի յարաբերութիւնները՝ կնքւած 1918 թ. Մայիս 28ին, Փոքի:

(Լիազօրներ.՝ Գերմանիայի՝ Լոսով. Վրաստանի՝ ԶԽԵՆԿԵԼԻ):

Գլուխ 1.՝ Վրաստանի կառավարութիւնը ընդունում է 1918 թ. Մարտ 3-ին մի կողմից Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Տաճկաստանի, եւ միւս կողմից Ռուսաստանի միջեւ կնքւած դաշնադրի [Երեսու - Լիտովսկի] որոշումները որպէս կերպելի հիմ՝ մշակելու համար յարաբերութիւնները Գերմանիայի հետ: Հստ այդմ, Գերմանիոյ վերաբերմամբ համարում են ընդունելի՝ ուժաւոր դաշնադրի երկրորդ մասի տրամադրութիւնները, այլ եւ լրացուցիչ համաձայնութեան հիմունքները:

Գլ. 2.՝ Պատերազմի տեւողութեան ողջ ընթացքին Վրաստանի կառավարութիւնը թոյլ է տալիս, որ զինակից պետութիւնները օգտագործեն Վրաստանի սահմաններում գտնուղ երկաթուղային ցանցից, զօրքերի եւ ուազմանիւթի փոխադրութեան համար: Այդ նպատակով՝ Թիֆլիսում հիմնում է զինական Յանձնախումբ գերման զեկավարութեան տակ, որ եւ իր վրա պիտի առնէ, վրաց կառավարութեան հետ համախորհուրդ, կանոնաւորումը երկաթուղային հաղորդակցութեան: Այդ Յանձնախումբի մէջ մտնել կարող են զինակից՝ չորս պետութեանց ներկայացուցիչներ: Երկաթուղու կայարանները, ինչպէս նաև Փոթի նաւահանդիսաց սիմի գրաւեն գերման զօրապահակապետեր (կոմենտանդ) եւ սկաշտպանողական ջոկատներ (պիկէտ):

Գլ. 3.՝ Վրացական կառավարութեան դտնաւած վայրում կը հիմնի գերման դիւանադիտական ներկայացուցչութիւն, այդպէս եւ Վրացական դիւանադիտական ներկայացուցչութիւն՝ Բերլինում:

Գլ. 4.՝ Վրաց կառավարութիւնը թոյլ է տալիս, որ գերման հիւպատոսներ նշանակին վրացական պետութեան այն վայրերում, ուր որ գերման կայսերական կառավարութիւնը ցանկալի կը դտնէ նրանց նշանակումը:

Գերման կառավարութիւնը պարտաւորում է համապատասխան իրաւունքներ վերապահել վրացական հիւպատոսներին:

Գլ. 5.՝ Ներկայ նախնական համաձայնութիւնը, որ ուժի մէջ է մտնում սոորագրութեան օրից սկսած, հնարաւորին չափ ամենա-

85

Միջազգային Դաշնագիրմեր Հայաստանի մասին

կարձ ժամանակամիջոցում պիտի փոխարինուի երկուկ ողմերի պետական համաձայնութեամբ, որ եւ պիտի որոշէ Դերմանիայի եւ Վրաստանի յարաբերութիւնները, որ չափով որ ներկայ դաշնագրի մի քանի մասեր չեն փոխարինուի ընդհանուր համաձայնութեամբ՝ մի կողմից զինակից չորս պետութեանց եւ միւս կողմից Վրաստանի կառավարութեան միջեւ:

**

ԹԻՒ 30

ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ

Հաշտութեան եւ բարեկամութեան դաշն Տաճկաստանի եւ Վրաստանի միջեւ, կնքւած 1918 թ. Յունիս 4-ին Բարումում: *)

(Լիազօրներ.՝ Տաճկաստանի՝ Խալիլ պէյ եւ Վեհիբ փաշա. Վրաստանի՝ Ռամիշվիլի, Օդիշէլիձէ, Գվազաւա եւ Ռցիխլաձէ):

Յօդ. 1.՝ Օսմանեան կառավարութեան եւ վրացական Հանրապետութեան միջեւ պիտի լինի հաստատուն խաղաղութիւն եւ մշտական բարեկամութիւն:

Յօդ. 2.՝ Հետեւեալ սահմանագիծն է բաժանում Օսմանեան կայսրութիւնը Վրաստանի, Հայաստանի, Ալբրէցանի Հանրապետութիւններից: (Ճորոխ գետը Սեւ ծով թափուելու տեղից սկսած, Տաճկաստանի եւ Ռուսաստանի սահմանագիծը նախ քան 1877 թ. պատերազմը մինչեւ Շաւարադ լեռը, Խալիսամ եւ Մելիսկորոյ լեռները, Փիրսահաթ սարը՝ Արասթումանից երկու քիլոմետր հարաւ, Կարխուլաղ լեռը, Կուր գետի վրայով՝ Ածխուրից հարաւ, Ղայաբաշի, Օթթաթաւի եւ Կարակայա լեռնազագաթները, Թափիսխորսա լճի վրայով, Շաւարադ, Կարակուլու, Սամսար լեռնազագաթները եւ Դեւէկըրան սարը, Աճրիփար, Բաշրիբան եւ Նուրբախման լեռները, կըսրում է Սահմանագիծը] Ալեքսանդրապոլ - Թիֆլիս երկաթուղագիծը Աղոստալաղ վայրից 5 քիլոմետր հեռաւորութեան վրա, Խանվալի վայրը, Էջմիածին - Սարգարաբադ ինուղին Էջմիածնից արեւմուտք, զուգահեռ Ալեքսանդրապոլ - Զուլֆա երկաթուղագիծն, Շարաղլու եւ Ղարաղաչ վայրերը, Էլպինչայ, Արփաչայ գետի դաշտը, Շարաղլու բան լեռը, Կարաթուրնա, Արաջի, Կարակլին լեռները, Բելիանչայի ջրաբան գիծը մինչեւ ոռւս - պարսկական սահմանը՝ Ալիջին վայրի մօտ):

*) Զէ վաւերացւած:

Յօդ. 3.- Օսմանեան կառավարութեանը պիտի հաղորդւին այս դաշնագիրները, որ կնքած են վրացական Հանրապետութեան կառավարութեան եւ Ազգբեջանի ու Հայաստանի Հանրապետութիւնների կառավարութեանց հետ, նրանց համապատասխան սահմանադերը որոշելու մասին:

[Կլիւչնիկովի եւ Սաբանինի ժողովածուն չի պարունակում այս վերջին դաշնագիրները]:

Յօդ. 4.- Դաշնագիր երկու կողմերը պարաւորւում են իրապէս արգելք հանդիսանալ իրենց հողամասերի սահմաններում հրոսախմբեր կազմւելուն ու զինւելուն եւ պէտք եղած ժամանակ զինաթափակ անել ու ցըել այսուեղ կազմւած բոլոր հրոսախմբերը:

Յօդ. 5.- (Վրաստանը պարաւորւում է իր նաւահանգիստներում ապագինած վիճակի մէջ պահել, մինչև ընդհանուր հաշտութեան կնքումը, իր տնօրէնութեան ներքոյ գտնուող ոուս ոազմանաւերը եւ Տաճկաստանի ու նրա դաշնակիցների հակառակորդ հանդիսացող պետութեանց նաւերը):

Յօդ. 6.- Պիտի յարգին Վրաստանում ապրող մահմեղականների կրօնական դաւանանքը եւ սովորոյթները: Պիտի երաշխաւորւի նրանց համար խղճի ազտառութիւն եւ կրօնական պաշտամունքի կատարումն:

Նորին Կայսեր. Մեծութիւն Սուլթանի անունը պիտի յիշատակւի մահմեղականների հրապարակային աղօթքների մէջ:

Նրանք պիտի օգտւեն քաղաքացիական եւ քաղաքական նոյնպիսի իրաւունքներով, ինչ որ այլ դաւանանքների պատկանող միւս քառաքայիները :

Նրանք կարող են կրթութիւն ստանալ իրենց մայրենի լեզով եւ իրենց հաւատքի համաձայն:

Կրօնական կարիքները եւ բարեգործական ձեռնարկները պահհովելու նպատակով կարող են կազմւել մահմեղական ընկերակցութիւններ բարոյական դիմագծով, այլ եւ [նշանակել] լիազօրներ՝ կառուցանելու համար մզկիթներ, հիւանդանոցներ, դպրոցներ, կրօնական եւ բարեգործական հիմնարկութիւններ՝ սահմանելով նրանց պահպանութեան համար շարժական եւ անշարժ հասութաբեր կաւածներ, [յատուկ] վարիչների ղեկավարութեան տակ:

Յօդ. 7.- (Կնքումն հիւալուսական համաձայնագրի, առեւտրական դաշնագրի եւ ուրիշ ակտերի, որ անհրաժեշտ են իրաւական ու տնտեսական յարաբերութիւնները կանոնաւորելու համար):

Յօդ. 11.- Բրեստ - Լիտովսկում Օսմանեան կայարութեան ու իր դաշնակիցների եւ Ռուսաստանի միջեւ կնքած հաշտութեան հաւաքական և լրացուցիչ դաշնագիրների որոշումները այն չափով [միայն] կիրարկելի են դաշնագիր կողմերի համար, որ չափով որ նրանք չեն հակասի ներկայ դաշնագրին:

**

Թիի 31

ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ

Լրացուցիչ դաշնագիր, կնիւած նոյն քւին:

Յօդ. 1.- Վրացական Հանրապետութեան կառավարութիւնը անյապաղ պիտի սկսէ իր զօրքերի ցրումը: Օսմանեան կառավարութիւնը եւ վրացական Հանրապետութեան կառավարութիւնը համաձայնութեամբ պիտի որոշն, ընդհանուր պատերազմի ողջ ընթացքին, նրանց քանակական կազմը, այլ եւ զինւորական այն շրջանները, ուր պիտի նշանակւեն նրանք:

Օսմանեան Կայսեր. կառավարութիւնը Վրաստանի սահմանների վրա կը պահէ միմիայն այն քանակութեամբ զօրք, որ անհրաժեշտ է խաղաղութեան ժամանակի պաշտպանելու համար սահմանները:


Յօդ. 2.- (Վրաստանը պարաւորւում է իր հողամասից հեռացնել Տաճկաստանի եւ նրա դաշնակիցների զէմ պատերազմի մէջ զըտնուող երկիրներին պատկանող սպաներին եւ քաղաքացիական պաշտօնեաններին):

Յօդ. 3.- (Վրաստանը համաձայնութիւն է տալիս որ իր գլխաւոր ուազմագիտական երկաթուղագծերով Տաճկաստանը ամէն կարգի ուազմական փոխադրութիւններ կատարէ: Այլ եւ, որ այդ փոխադրութիւնների վրա հսկելու նպատակով տաճիկ սպաներ գտնելն զվասաւոր կայարաններում: Նմանապէս ուրիշ մանրամասնութիւններ՝ վերոյիշեալ փոխադրութիւնները կազմակերպելու մասին):

Յօդ. 4.- Օսմանեան կառավարութիւնը իրաւունքները ունի յօդ. 3-ում վերապահւած իրաւունքները իր դաշնակիցների բանակներին վերապահելու:

Բերդին

(Շարունակելի)



ԴԻՊՔԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

(1914 — 1918)

(Շարունակութիւն)



1918 Փետրիար 24. — Երկար ատենէ ի վեր ոչինչ գրած եմ : Հոգեբանութիւն մը համակեր է զիս : Բնազր մը զիս կը ստիպէ գրել, ըլլայ լրազրական յօդաւած մը կամ նամակ մը եւ կամ երկու տող յիշատակարանիս մէջ : Փետրիար 7ին թուրքերը կը դրաւեն Կարմունջ եւ Ախլաթը, ինչ որ յունքոյն տրամադրութիւններ կառաջացնէ հասարակական կարծիքի մէջ : Երէկ իրիկուն Բերկրիէն հաղորդեցին, որ Պայազիսէն վերադարձող միլիցիոնէրներ յայտնեցին թէ՝ Պայազիս ստացւած է հետեւեալ հեռադիրը «Կարմունջը դրաւեցաւ, 300 դերի առնեցաւ, գործերը լաւ կ'երթան, թուրքերը եւ քիւրդերը կը նահանջն» : Իրիկուն նոյնպէս հաղորդեցին, որ Եկմալէն եւ Ոստանէն կը հաղորդեն, թէ թնդանօթի ձայններ առած են Ախլաթի կողմէն :

— Այս օրեր հինգերորդ գունդի մէջ կը յուզւի գիւրքերը լքելու ստաջարկը :

— Կարնոյ համագումարին պատգամաւորներ ընտրեցան փետր. 19-ին կայացած ժողովին մէջ, ուր կային 94 պատգամաւորներ, Հմ. Մանուկեան, Ա. Մաքսապետեան, Մ. Սոսոեան, Պ. Պանիրեան, Մ. Օվիկեան, Վ. Առաքելեան, Ա. Մեսրոպեան, Ա. Աղաւնեան : Անոնց մէ ես ու Սամւէլ մերժեցինք երթալ, միւսները մեկնեցին ամսոյս 21-ին :

— Զօրահաւաքը առաջ կը տարւի մեծ թափով . մինչեւ 30 տարի քաւրոնները կը հաւաքւին, զէնքի տակ առնեած են 2000 հոգի :

28 Փետրիար. — Երէկ գիշեր հինգերորդ պոլկի մէջ կը սպաննել մէկ բժիշկ եւ կը վիրաւորւի զինուոր մը : Ներքին երկառակութիւններ եւ սպանութիւններ կը չարունակւին : Յունար 26-ին էր, որ 300 վերադարձող զինուորներէն 5 հոգի սպաննեցան, դարանի մտած իրենց զինակիցներուն կողմէ, Գէօլիի մօտ :

— Այս իրիկուն Առնիսէն տեղեկացուցին, որ մեր ուազվետկան գէպի Ալճաւազ երթալով՝ ԱզրաՓի մէջ հանդիպեր է 20 ձիւուր եւ 50 սուաւոր գիւրդերու, որոնք կուտին մէջ կուտան 4-5 սպանւած եւ 7 դերի . վերջինները բերւած : Էն Արձէ :

— Ղարաքիլիսէն լուր ստացւած է, որ Մմբատ 2000 հետեւակ եւ 400 ձիւուր զինուորներով կը պատրաստւի յարձակի Ախլաթի վըրա : Թուրքերը Փրխուսի ճակատին վրա մէծ ուժեր կը հաւաքեն :

— Այսօր հրաժարական տւի ներքին գործերու կոմիսարութենէն, պատճառ բանելով, որ՝ «նկատի ունենալով Վասպուրականի մէջ ստեղծւած ներկայ զրութիւնը եւ գործերու ընթացքը, ես ի վիճակի չեմ անոնց պատասխանատւութիւնը բաժնել ձեզ հետ» :

Մարտ 1. — Այս առաւտ կանայք կը խուժեն պարենաւորման վուսի վրա եւ հացերը կը թալանեն : Թալանող 8 կիներ կը ձերբակալւին եւ կը բանտարկւին : Քիչ ետք, Մամբրէի հարվերեակին զինուորները կուտան, կը կոտրեն գուռը եւ կիները կաղատեն : Զաւէն տանիքէն վար ցատկելով կը փախչի : Յոյցը կազմակերպւած է Աղատի կողմէ, որ ժամանակէ մը ի վեր Շատախցիական փոռթի մը ստեղծեր է : Նոյն Ազատ Լեռնի, Մոկացի Համբարձումի եւ Անտրոյի ներկայութեան ըսած է, որ՝ «ես պիտի քանդեմ զինուորական մարմինը, որուն գլուխը կը գտնաի Պուլկարացի Գրիգորը, որ ոչ մէկ լուրջ միջոցի դիմած է անիշխանութեան վերջ տալու համար : Գրիգոր սկսած է գործել ճիշտ այնպէս, ինչպէս երբեմն Արամ՝ չունենալով վերջինիս առաւելութիւնները : Շարաթէ մը ի վեր է, որ Գրիգորի հետ իր զած եմ յարաբերութիւններս :

Մարտ 4. — Երէկ իրիկուն (մարտ 3) ստացանք Ղարաքիլիսէն պոլկովիկ Գեղամովի մէկ թէլքոնոկրամը, որու համաձայն կարին զրաւեած է, Մանազկերտ պարպւած մերոնց կողմէ եւ հաւանական է ամբողջ Խնուսի նահանգի տեղահանութիւնը . Խոյնը կաւելցնէր որ Վանի զրութիւնը ծանօթ չէ իրեն եւ գաղթել կը թողուր մեղի Խնուսի գծով, որ պիտի պահեն : Սաֆալիէն ստացւած ուրիշ տեղեկութիւններ չափազանց ծանր են : Վէհիպ փաշան ըսած է, որ ինք ազգային զօրագնդեր չի ճանչնար եւ պիտի երթայ այնքան որ հանգիւի ոռուս զօրքի : Գերմանական ամբողջ ճակատին վրա զերժանները կը յառաջանան Ռուսիոյ խորերը եւ մալուսուններ, պելուսուններ եւ լեհեր խումբերով կը միանան գերմանական բանակին : Բոլցեւիկներ սրբազն պատերազմ յայտարարած են : Դրօն իրու թէ իդգիրէն ելած է գէպի Պայազիս եւ մաքրած ճամբու գիւրդերը : Մինչեւ ուշ գիշեր թէլքոնով խօսւեցաւ Սէֆէլուի հետ եւ մարդ զրկե-

ցաւ Պայտագիտ լուրջ՝ ստուգելու եւ որոշ տեղեկութիւններ տալու այսօր։ Խորհրդակցութիւնը, որուն ներկայ էին կ. Համբարձում- եան, Հմ. Մանուկեան, Գրիգոր Պուլպարացի, Լեւոն, Սամվել եւ պոլ- կովնիկ Պողոսեան՝ երեք օֆիցիէրներով, ընելիքի մասին որոշումը թողուց այսօրւան։ Ընդհանուր կարծիք մըն ալ՝ կուել եւ ուժին առ- ջեւ տեղի տալով նահանջելն է դէպի Պարսկաստան։

— Այսօր Կեդր. Կոմիտէի խորհրդակցութիւն մը ունեցանք, ուր դարձեալ վերոյիշեալ եղակացութեան հասանք՝ որոշելով զինքի տակ կանչել ՅՅ տարեկանները եւ ժողովրդական միջոցներ կազմակերպել՝ պատրաստ ըլլալու նահանջի։

— Պարսկաստանէն ստացանք Սիմոն Խանի նամակը. բերողը ը- սաւ, թէ՝ վերջին օրը լսեր է որ անդլիական զօրքեր եկած են Սոուջ- րուլաղ եւ Թաւրիդ։

— Առնիսէն Տիգրան կը հաղորդէր, որ Զիլանի կուլիխան եւ Քեա- միլ բէկ ուղեր են տեսնւիլ իրենց հետ։ Հրահանդւեցաւ, որ զգուշաւո- րութեամբ տեսնւին եւ ջանան բարեկամութեան պէտքը շեշտել։

— Երէկ իրիկուն դարձեալ խորհրդակցութիւն ունեցանք։ Ղարա- քիլսէէն Տ. Միքայէլեան կը թէլիքոնէ, որ Խնուսի գաղթականնե- րու առաջին մասը արդէն հասած է Տիատին. զրութիւնը իրենց հա- մար ալ անորոշ է։ Առջի օր, մեր հրահանդին համաձայն, Սավալիէն Պայտագիտ մեկնողները երէկ մինչեւ ուշ ատեն չվերադարձան։ Երէկ իրիկուն Սարայէն Սիմոնի տւած թէլիքոնոկամի համաձայն, քիւրդ մը եկած է Շէրպէկ եւ պատմած, որ Սմկօն Սալմաստի մէջ կը տես- նեի Մար - Շիմոնի հետ, որու վերադարձին ատեն կը յարձակի ա- նոր վրա։ Մար - Շիմոն կունենայ իրեն հետ 400 - 500 մարդ. կոիւը կը շարունակի, կը սպաննեին տեղացի մէկ քանի հայեր եւ, իրուեւ թէ, Սամսոն օգնութեան կը փութայ Մար - Շիմոնին։

— Կը ձիւնէ այսօր եւ ձմա է օրը. սոսկալի եւ գաժան ազդեցու- թիւն թողած է զաղթի միտքը ժողովորի վրա. ահաւոր բան է այդ նահանջը այս օրերուն. ո՞ւր պիտի երթայ եւ ի՞նչպէս երթայ այս թըշ- ւառ բեկորը, որ հազիւ թէ կը չնչէր մայր երկրի վրա։ Ոչ մէկ նա- խապատրաստութիւն կայ գաղթի համար, սպասողական դրութիւն է, կը սպասեն բոլորը, որպէսզի պարզի Խնուսի, երգումի, Պայտագիտի վիճակը, որպէսզի պարզ և որոշ բան մը իմանանք կամ հրահանդ մը ստանանք։ Երեք ամիս է, որ Վասալուրական մնացեր է ինքն իրեն, ո՛չ կապ եւ ոչ յարաբերութիւն. այդ պայմաններու մէջ հարկաւ դիմա- դրութիւն ցոյց տալ հնարաւոր չէր։

Հայութիւնը չի կրնար կազմակերպւիլ, եւ այդ է իր միակ դըժ-

բախտութիւնը։ Ահա զեկավար շրջան մը Վանի մէջ. ո՛չ մէկ ջանք, միջոց մը, ո՛չ մէկ ձեռնամիութիւն, թէլիքոն տալ եւ առնել՝ ահա բոլորը. Դժբախտ ենք եւ պիտի կոտորւինք։ Ես միշտ ըսած եմ զե- կուցումներու մէջ եւ զասախօսութեանց ընթացքին, որ հայութեան հասած աղէտաներէն աւելիին կրնանք հանդիպիլ եւ կը թւի թէ պիտի հանդիպինք. Կովկասը տակնուվրա, ձակատը՝ բաց եւ թշնամին ա- րագաքայլ կը յառաջանայ. բուռ մը հայութիւն պաշարւած թշնա- միներով եւ դաժան պայմաններով։

— Հանգիստ եմ. միակ մտահոգութիւնս քոյրս է ու մայրս. եթէ գլուխամ որ անոնք ապահով են եւ կուշտ ու պիտի կարողանան խու- սափիլ մեծ վտանգէն, ես մեծ սառնասրութեամբ պիտի նայլիմ դէպ- քերու վրա եւ ընդմիշտ Կովկասէն հարաւ պիտի ձգտիմ երթալ։ Ինչ- քա՞ն կուղէի անգամ մը տեսնել քոյրս ու խեղճ մայրս…

Մարտ 6.— Երէկ իրիկուն Գրիգորենց տունն էինք բոլորս. Սա- վալիէն կոմիսար Լեւոն ընդարձակ տեղեկութիւններ հաղորդեց հա- կատի գրութեան մասին։ Սնդուկի մէկ հաղորդագրութիւնը կ'ըսէ, որ Կարին գրաւած է, ինք կը գտնի Հասան - Գալէ : Պոլկովնիկ Յով- սէփիսէն Կոստիային տեած մէկ հեռագրով, փետր. 26 - 27-ին կը հը- րահանգէ նահանջել Բերկրի եւ ժողովուրդը կանոնաւոր ու հանգիստ կերպով տեղափոխել, անկանոնութեանց պատասխանատուն համարե- լով կոստին։ Մանաղիերատի, Ղարաքիլսէէի, Պայտագիտի շրջաններուն մէջ կատարեալ անիշխանութիւն կը տիրէ, մէկ կառավարիչը միւսին չլսեր։ Ս. Կարապետի պոլկի զինուորները վախեր են տուներնին եւ մնացեր է 150 մարդ։ Մարտի բոլոր զինուորները նոյնպէս առաջին ընդհարումի հետեւանքով վախեր են եւ առաջացեր է ընդհանուր պանիկա եւ խուճապ, որու հետեւանքով ժողովուրդը գաղթի դիմեր պայտիկա եւ աղդ. Խորհուրդները յայտներ են Լե- ւոնին, որ առաջարկէ մեզ Պայտագիտի եւ Տիատինի շրջանը Վանին միացնել։ Քիւրդ Ղազօն չի հպատակւիր նաշալիկ ատրիստին (Ճո- կատի պետին)։ Պայտագիտը մարդ զրկեր է Թէլիքիս եւ Երեւան, առա- ջարկելու համար, որ եթէ Կովկաս օգնութեան համար, իրենք կրնան մնալ, իսկ եթէ ոչ, պիտի նահանջեն։ Իբրեւ թէ Սմբատ եկեր է Տիա- տին եւ գաղթող ժողովուրդը ես կը դարձնէ։

— Ժողովուրդը կազմուի չափազանց արիւնաքամ բոպէներ։ Նա- հանջի տրամադրութիւն չկայ, նկատի ունենալով անկարելիութիւնը։ Շատախցի Պաղիկը ներկայացաւ կոմիսարներու Խորհուրդի նախա- պահին եւ հարցուց, թէ ո՞վ կուղէ նահանջ, ո՞վ կուղէ մնալ. «նա- հանջ մարդկուի՞ն է, նահանջ մեռնել է. երկու տարի ապրեցանք,

բայց ի՞նչպէս. ո՞չ, մենք չենք ուղեր նահանջ, մենք կուզենք մնալ, կուիլ եւ մեռնիլ»:

— Այս գիշեր 1/4 արշին ձիւն եկաւ. օդը ձմերային է եւ իսկառ ցուրտ:

— Այսօր հայկական հինգերորդ պոլկը յանձնումներ կընէ եւ պրիկազ (Հրաման) եկած ըլլալով կը պատրաստի մեկնելու:

Մարտ 7.— Այսօր տրամադրութիւնը աւելի լաւ չէ: Փողովուրդ՝ կին, տղայ, մարդ հաւաքւելով, առաջնորդ եղնիկ վարդապետի գլխաւորութեամբ կերթան 5-րդ պոլկի մուլգովնիկի մօտ եւ կը պահանջեն, որ մնայ եւ չգաւաճանէ: Անիկա կըսէ, որ իրենք չեն երթար Կովկաս, այլ Սաւալի, այլ վտանգւած կէար պաշտպանելու համար: Զինոր մը դաւաճան կանւանէ պոլկովնիկը:

Այս իրիկուն Սավալին Լեւոն Օհաննէսեան կը հաղորդէ, որ նահանջը առաջ եկեր է քոնթը ռազմիքայի պրովկացիայի եւ պոլկովնիկներու ապիկարութեանց եւ ընդէ. դեկավարութեան պակասութենչն:

Դրօն Պայտղիտ կը սպասւի. հայկական մեծ ուժեր կեզրոնացւած են Կարս եւ Կաղզւան, իդգիրէն 15000-ի չափ ուժեր պիտի գան այս ճակատներուն վրա: Անգլիական զօրքերը եկած են Սոսուշ - Բուլազ եւ Թաւրիդ:

Ուլուխանլու - Շահթախթ գծի վերաշինութեան աշխատանքները մեծ թափով առաջ կը տարւին: Պայտղիտէն դեկավար ուղած են Վանի նահանջէն:

— Սարայէն Սիմոն կը յայտնէ, որ Մար - Շիմոն սպանւեր է Տիլմանի մօտ Սմկոյի հետ ունեցած կոխւին մէջ եւ հարիւր հողիէն առատւեր է իր եղբայրը, քանի մը ասորիներով, չնորհիւ հայերու օժանդակութեան:

Մարտ 8.— Այս առաւոտ թուրքերը յարձակում գործեցին Ռստանի վրա: 80 - 100 հոգի յառաջանալով, կը բռնեն Պատակնից մօտ երկու բարձունքներ եւ կը սկսին հրացանաձգութեան, յետոյ մերոնց կրակին տակ կը քաշւին աւելի ետ: Առտուն երբ լուր կը տրւի 5-րդ գունդի պոլկովնիկին, որ Քէորուէն զնդացիրներու խումբը ետ զարձւի, որովհետեւ Ռստան կոխւ սկսեր է եւ Սոսաքելեան պատրաստակամութիւն կը յայտնէ իր խումբովը վերադառնալ, պոլկովնիկ Պօղոսեանը թէլֆոնով կը յայտնէ անոր, որ այդ լուրը տեղացիներու կողմէ պրովոկացիա է եւ իրենք պէտք է շարունակեն իրենց ճամբան: Պաշտօնապէս ալ լուր տրւեցաւ նաշալնիկ ատրիատին Ռստանի վրա կատարւած յարձակման մասին, որպէսզի գունդը ետ մնայ երթալէ: Նկատելի է, որ թուրքերը յարձակման սկսան այն օրը, երբ 5-րդ հայ-

կական գունդը մեկնեցաւ Վանէն: Կէսօրին լուր առնեցաւ, որ թուրքերը մտեր են Ռստանի կոնակը համարուող Հիլի գիւղը: Հոն կային 200 հոգի, երեկ զնաց Շատախիցիներու առաջին հարիւրեակը, այսօր մեկնեցաւ երկրորդը, առտուն կանուխ ժամհարեան, որ 5-րդ գունդի սպան ըլլալով՝ ուրիշներու հետ մնացեր է մէր գնդի մէջ, մեկնեցաւ Ռստան, ուր հայկանուեցաւ գալ նաեւ Մուրատին 50 ձիւորներով: Այսօր կէսօրին զնաց նաեւ Լեւոն, ձիւորներով, Ռստան է գացեր նաեւ Սամւէլ 30 հոգով, այնպէս որ հոն վաղ առաւօտ պատրաստ կըլլան 500 հոգի: Երկու թնդանօթներ կան, բայց գործածող չկայ անտէրութեան պատճառաւ:

Զօրահաւաքը կը շարունակւի մեծ թափով, բայց զէնքը պակասէ: Ռստան փամփուշտի կարիք կայ, բայց Փուռկոնի ձիեր չկան փոխադրելու:

Փոխադրական միջոցներ անկազմակերպ եւ փչացման դատապարտած են: Ժողովրդի մէջ խուճապը կը շարունակւի, թէեւ դէմողներ շատ եղան Ռստան երթալու:

9 Մարտ.— Այս առաւոտ կոխւը շարունակեցաւ ժամը 5.30-ը անց եւ տեւեց մինչեւ ժամը 1:

Յարձակողներու թիւը 200 - 300 է: Այսօրւան կոխւը շատ կատաղի եղած է. թուրքերը առաջացեր են Հիլիի կողմէ, ուր, սակայն, Մուրատ իր ձիւորներով ուռուո՞ կանչելով, կը յարձակի թուրքերուն վրա, որ խուճապով կը սկսին փախչել, թողլով 4 սպանւած, 2 հրացան, 200 քիւչիւք չափի փամփուշտ, պատինկայ, չինէլ եւ այլն: Ժամը 4-էն ետքը մեր սաղմանաւը, ուր նատած էին կ. Համբարձումնան եւ Դանիէլ վարդապետ, կը ոմբակոծէ Աղթամար եւ շրջակայ դիրքերը ու կը վերադառնայ երեկոյեան:

Այսօր լոյս ընծայեցի «Տեղեկատու» անունով թէրթիկը, որ ամէն օր լուրեր պիտի հաղորդէ ժողովրդին, որ մեծ ուրախութեամբ ընդունեց զայն:

Լեւոն տակաւին Ռստան կը սպասէ եւ ուժեր կուղէ: Մեր ունեցած երկու վիրաւորներէն մէկը ծանը է:

10 Մարտ.— Այսօր կոխւ չկայ Ռստանի ճակատին վրա: Արձէչէն իմացանք, որ հոն մեր հետախոյցները Կարմունջի մօտ քիւրդերու հանդիպելով՝ սպաններ են մէկը: Իրիկւան Սավալիէն Տ. Միքայէլ Հաղորդեց, որ Մեսրոպ իր խումբով եկած է Սավալի եւ թէ Ալեւեան հաղորդեց, որ զօրքի հոստ եւ յարդ բերեն քաղաք իրենց միջոցներով: Սկսած են կաղմել նաեւ աշխատաւորներու խումբեր, որոնց կարիք կը զգացւի նաեւ Ռստանի մէջ:

Մարտ 11. — Այսօր կիրակի է . կը ձիւնէ անվերջ, կարծես ձմեռը վերադրձած է . տրամադրութիւնս չի լաւանար, ուրիշներ կը կարծեն, որ նահանջի սարսափն է ազդեր վրաս, առանց մտնելու իմ հոգիս մէջ եւ տեսնելու, որ անիկա քանդեցաւ փետրւար 21-ին երբ կարնոյ պատղամաւորները գացին, իսկ ես մնացի միմիայն մեր լնկերներու եւ, մասնաւորապէս, Գրիգորի այն մտայնութեան հետեւանքով, որու համաձայն մենք մեկնողներս «Կորած ենք» եւ «ոչինչ կրնանք ընել» : Այլեւս չեմ կրնար աշխատիւ, միրտս պաղեր է եւ անպատճառ վանէն վերջնականապէս հեռանալ կ'ուզեմ, յարմար առիթը չի ներկայանար, իսկ ես անհամբեր եմ : Կէսօրին Գրիգորենց տունը լաւ մը խմեցի . կուղեմ խմել եւ մոռնալ ներքին վիշտերս :

Մարտ 12. — Այսօր ուղմածակատը խաղաղ անցաւ : Թուրքերը Ռատանի դէմ խրամատներ կը փորեն : Կէսօրէն ետք Սոուք Մուէն Մեսրոպ Զանօեան յայտնեց, որ իրենք 90 հոդով կը վերադառնան կարեւոր նամակներով : Իրիկւան Գրիգորենց տունը կարդացի Մ . Սօսեանի ծածկաղիր թէլֆոնոկրամը, որով կը յայտնէ թէ գերմանացիք գրաւած են Պետրոգրադը, Մոսկան, Օդեսան, Խարքովը եւ դըրաւելու վրա են նոյնիսկ Բագուն : Միսիսնարները ամբողջապէս հեռացեր են Կովկասէն : Գաղթականութիւնը Մօսուն - Գորանի շրջանէն կանցնի Կովկաս :

Իրիկունը ուշ ատեն Տաճատ Առնիսէն տւած թէլֆոնոկրամով կը յայտնէր, որ իրենց քիւրդ լրտեսը վերադրձեր է . անոր տւած տեղեկութեանց համաձայն, քիւրդերը դացեր են Ախլաթ եւ դէնք բերած են : Թուրքերը ընկերացեր են անոնց մինչեւ Ալջաւադ : Ֆրքա քոմանտանին նամակ գրած է Զիլանի քիւրդ բէկերուն՝ յայտնելով, որ ամէն ուղղութեամբ հայերը քշած ու մեծ պահեստներ գրաւած են, կառաջարկէ մինչեւ իրենց ընդհանուր յարձակումը իրենց յարձակումներով նեղել հայերը, որոնցմէ շատեր, իրը թէ, առաջարկած են իրենց միանալ : Քիւրդերը պատրաստակամութիւն յայտներ եւ նամակներ գրած են Թուրքիա գտնուող իրենց ցեղակիցներուն՝ հարցնելով թէ համաձայն են, որ իրենք թշնամանան հայերուն հետ : Քիւրդ լրտեսը յայտնած է նաեւ, որ հայեր կը գտնեին Թուղար - Սինան : Ասէկ զատ, Զիլանի քիւրդերը, ըստ Տիգրանի պատմածին, Խընուակի եւ միւս նահանգներու ընդհանուր գաղթի առթիւ ըսած են, թէ՝ նուսի եւ միւս նահանգներու ընդհանուր գաղթի առթիւ ըսած են, թէ՝ վանեցիք խալար չունին, տեսնելով որ մենք մեր տեղերը նստած վանեցիք խալար չունին, տեսնելով որ մենք մեր տեղերը նստած ենք : Տիգրան կը պատմէ, որ Կուլիխան բէկ կառաջարկէ Քեամին Երէկին (Զիլանի բէկերն են), որ ժամանակը եկեր է յարձակւելու հարէկին վրա, իրրեւ թէ Քեամիլ բէկ չի համաձայնիր, եւ միասին կանցնին Զիլան :

Մարտ 13. — Այսօր Բէրկրիէն Մուշեղ յայտնեց, «որ Պարսկաստանէն քիւրդ մը եկեր է Խաչան եւ պատմեր, «որ Հայերը եւ ասորիները միանալով ջարդեր են 10 - 12 հազար թշնամի եւ Ուրմին ու Սալմասը իրենց աղղեցութեան տակն առնելով՝ կոիւը կը շարունակէն Խոյի շուրջ :

Մարայէն Սիմոնը կը տեղեկացնէ, «որ Նոշարի քիւրդերն ալ Փրքա քոմանտանէն հրահանդ ստացեր են՝ Հայերու վրա յարձակւելու, բայց իրենք ըսած են, որ միշտ բարեկամ պիտի մնան Հայերուն, եթէ նոյն իսկ թուրքերը գրաւեն Վասպուրականը : Այսօր երեկոյեան Գրիգորենց տունն էի մինչեւ ժամը 10-ը :

Մարտ 14. — Այս առաւօտ կարդին ցուրտ ըրաւ . տարօրինակ եղանակ է . զարուն մտած ենք, բայց կարծես ձմեռը կը վերսկսի . մեղի՞ թէ թշնամիին նպաստաւոր է ասիկա՝ չեմ դիտեր : Տարտամ զդացումներ ունիմ . կարծես թէ զգալու կարողութիւնը կը վերնայ ինձմէ, առանց աղղելու մտքիս վրա, որ բաւական պայծառօրէն կրնայ գատել իրերը, եթէ կողմնակի յաւակնութիւններ չյարձակին վը բան :

Առաւօտ թէյելէն ետք, Զաւէնի հետ քմահաճոյք ունեցայ նարտի խաղալու եւ տանելու . պաշտօնատուն երթալէն ետք միայն խմացայ, որ Արձէշ կոիւ է : Քիւրդերը յարձակեր են, Օրօրան գետի մօտ, մերոնց վրա : Տաճատ իր խմբով ուղղվետկա գացեր է դէսի Ալճաւադ : Մերոնցմէ կայ, ըսին, մէկ սպաննւած եւ մէկ վիրաւոր, որ, կէսօրւայ տեղեկութեան համաձայն, մնացեր է թշնամու ձեռքը : Լուր առնեցաւ նաեւ, որ Տաճատ Աղարափի մօտն է եւ թէլֆոնով կը խօսի մերոնց հետ Արձէշի մէջ : Տեղէս կաճապարեն փամփուշտ զրկել, կարծես թէ առանց կոիւի կարելի չէր իմանալ, թէ փամփուշտ չկայ հոն : Գործերը դանդաղ կերթան եւ օրւայ պահանջած թափը չունին :

Այս առաւօտ Հիրմէն փախան երկու կղլճացի զինւորներ իրենց հրացաններով եւ փամփուշտներով : Լուր արւեցաւ ամէն կողմ, որ Ֆերակալեն : Հոն ուր զինւորական կարգը եւ անոր անժիջական հետեւանքն եղող խիստ պատիժը կը բացակային, նման երեւոյթները պիտի ընդարձակւին անպայման :

Իրիկունը լուր արւեցաւ, որ պոլկովնիկ Պաղտասարեան օրս Պայդիտ հասած պիտի ըլլայ :

(Ծարունակելի)



Հայ - Հայկական Բանակցութիւնները

ՆԻՍՏ ՈՒԹԵՐՈՐԴ

Նիստը կայացաւ Նոյ. 15-ին, առաւտեան ժամը 1-ին:

Ներկայ էին բոլոր անդամները, բացի Ն. Տ. Ստեփանեանից :
Նախագահում էր Պ. Վ. Թէքէեան : Կարդացւեցաւ եւ վաւերաց-
ւեց նախորդ նիստի արձանադրութիւնը :

Նախագահ .— Ես կարծում եմ, որ նախընթաց նիստում մենք ար-
դէն պարզել ենք մեր տեսակէտները բոլոր կարեւոր խնդիրների վե-
րաբերմամբ . ապա զբաւոր ներկայացրել ենք երկու կողմերի վեր-
ջին առաջարկները, եւ այսօրւայ նիստում մենք պէտք է վերջացնենք
մեր բանակցութիւնները մի որ եւ է ձեւով :

Ա. Վրացեան .— Իսկապէս, վերջին նիստում մենք արդէն
պատասխանեցէնք մեզ ներկայացւած զրութեան : Երկու կարեւոր
հարց կայ այդ զրութեան մէջ չօշափւած՝ Խորհրդարանի եւ կառա-
վարութիւնն : Խորհրդարանի վերաբերմամբ՝ Դուք առաջարկում էք
դադար տալ ներկայ խորհրդարանին անորոշ ժամանակով, մինչեւ
լրացուցիչ ընտրութիւնների վերջը, եւ ապա միայն նա հաւաքւի նոր
կազմով : Մենք զբան դէմ ենք . մենք գտնում ենք, որ չի կարելի ա-
նորոշ ժամանակով դադար տալ ներկայ խորհրդարանին, այլ միայն
որոշ ժամանակամիջոցի համար — մի ամիս, կամ երկու ամիս, այն-
պէս, որ խորհրդարանը ինքը իմանայ, որ իր արձակուրդը տեւելու է
մինչեւ այսինչ ժամանակը, որից յետոյ նա կրկին հաւաքւելու է :

Մենք գտնում ենք, որ Եթէ այժմ համաձայնութեան դանք եւ
ձեռնարկենք ընտրութիւններին, մեր տրամադրութեան տակ կունե-
նանք աւելի քան չորս ամիս ընտրութիւնները կայացնելու համար,
որովհետեւ երկու ամսից աւելի կանցնի մինչեւ բիւղջէն խորհրդա-
րան մացնելը եւ խորհրդարանի կողմից քննւելն ու հաստատելը, եւ
ապա՝ երկու ամիս արձակուրդը : Կոալիցիոն կառավարութիւնը անմի-
ջապէս կազմելուց յետոյ, կարող է գործի անցնել, եւ այդ միջոցին
նոր ընտրած խորհրդարանի անդամները հետզհետէ կը դան եւ խոր-
հրդարանը իր արձակուրդից յետոյ կը հրաւիրւի :

Ա. Յարութիւննեան .— Բիւղջէի քննութեան հետ միաժամանակ
պարլամէնտը կը զբաղւի եւ ուրիշ խնդիրներով, ուրեմն, բիւղջէի
քննութիւնը կարող է տեսել առևտազն երեք ամիս, եւ համաձայնու-
թիւնը կարող է իրազործւել միայն մարտի վերջին կամ ապրիլի սկզբ-
րին . այդ պայմաններում համաձայնութիւնը էտպէս կորցնում է իր
նշանակութիւնը : Եթէ հնար մինէր, որ այդ բիւղջէի քննութիւնը
թողնուէր նոր պարլամէնտին, եւ մենք համաձայնէինք, որ կառա-
վարութիւնը զեկավարւէր որ եւ է ձեւի ժամանակաւոր բիւղջէով,
ինչպէս ես առաջարկել էի նախորդ նիստում, այդ դէպում կարելի
կը մինէր աւելի շուտ կայացնել համաձայնութիւնը :

Ա. Վրացեան առարկում է այն մտքի դէմ, որ այնքան երկար կը
աւելէ բիւղջէի քննութիւնը . անցեալ տարւայ օրինակը այս դէպում
չէ կարելի ի նկատի ունենալ, որովհետեւ, նախ, անցեալ տարի կու-
սակցական պայքարը ահազին ժամանակ էր խլում պարլամէնտից եւ,
յետոյ, այժմ մենք աւելի փորձ ունենք. բիւղջէի քննութիւնը, իմ
կարծիքով, կը վերջանայ ամենաուշը վետրաւրի սկիզբը :

Վ. Թէքէեանը հարց է տալիս, թէ ի՞նչ բիւղջէով կը զեկավարւէր
կառավարութիւնը մինչեւ յունւարի սկիզբը, եթէ միայն վետրաւրին
կարող է վերջանալ բիւղջէի քննութիւնը :

Ա. Վրացեանը պատասխանում է, թէ կառավարութիւնը կը զե-
կավարւի այն բիւղջէով, որ ինքը ներկայացնելու է յունւարի հա-
մար՝ վատահ լինելով, որ խորհրդարանը կը հաստատէ այդ, կամ
ժամանակաւոր բիւղջէի իրաւունք կը ստանայ պարլամէնտից :

Դալով կառավարութեան կազմին՝ մեզ համար հասկանալի չէ,
թէ ինչո՞ւ է մէջ ըերւում 10-ի կազմը : Եթէ ընդունում էք, թէ Դաշ-
նակցութիւնը պէտք է ունենայ մէծամասնութիւն թէկուզ մէկ ձայ-
նով, էլ ինչո՞ւ էք դէմ իննի կազմին : Մենք ընդունում ենք, որ մեր
կուսակցութիւնը պէտք է ունենայ պարզ մէծամասնութիւն, եւ պղն-
դում ենք 9-ի վրա, որից 5-ը գաշնակցական եւ 4-ը ոչ - դաշնակցա-
կան, եւ չենք ընդունում առանձին չէղոք անձնաւորութիւն մինիս-
տրական կազմի մէջ : 10-ի կազմին մենք դէմ ենք :

Վ. Թէքէեան .— Մենք կը պահանջենք, որ զինուրական նախա-
րարը, իրեւ բացատիկ կարեւորութիւն ունեցող պաշտօն, լինի չէ-
զոք եւ երկու կողմի համաձայնութեամբ :

Ա. Վրացեան .— Զինուրական նախարարը կարող է լինել կուսակ-
ցական եւ ոչ - կուսակցական, բայց նա պէտք է լինի Դաշնակցութեան
ներկայացրած 5-ի մէջ : Իսկ, առհասարակ, բոլոր նախարարների վե-
րաբերմամբ էլ, ես կարծում եմ, տրւած անունները պէտք է ունենան

երկու կողմերի հաւանութիւնը։ Եթէ առնենք 10-ի թիւը, որ զուք էք առաջարկում, մենք կուղենք, որ Ե-ը լինի մեր թեկնածուներից, այդ թում եւ զինորական մինիստրը։

Ս. Յարութիւնեանը չօշափում է պորտֆէոյների բաշխման խընդիրը կառավարութեան մէջ եւ հարցնում է՝ արդեօք Դաշնակցութիւնը ընդունո՞ւմ է, որ արտաքին գործերի նախարարը լինի Պօղոս Նուպարը։

Ս. Վրացեանը դրական պատասխան է տալիս այդ հարցին։

Իսկ միւս պորտֆէոյների վերաբերմամբ թէ՛ նա եւ թէ Մ. Յարութիւնեանը յայտնում են, որ Դաշնակցութիւնը կը վերցնի ներքին գործերի մինիստրութիւնը եւ աշխատանքի ու երկրագործութեան մինիստրութիւնը, իսկ մնացած պորտֆէոյների մասին կարող են համաձայնութեան դալ եւ առանձնապէս չեն պնդի ոչ մէկի վրա։

Վ. Թէքէեան։— Արտաքին գործոց նախարարի բացակայութեան պատճառաւ նրա պաշտօնատարը այստեղ կընդունենք, որ ըլլայ նոյն հոսանքէն։

Ս. Յարութիւնեան։— Իմ անձնական կարծիքով, այդ պորտֆէոյը Պօղոս Նուպարի համար պէտք է լինի լոկ տիտղոս, իսկ նրա պաշտօնատարը այստեղ պիտի լինի դաշնակցական։

Ս. Յարութիւնեան։— Այդ առաջարկութեամբ խատիւում է 9-ի սկզբունքը՝ 5 - 4, որովհետեւ ոչ - դաշնակցական պորտֆէոյների թիւը կը դառնայ 3՝ հակառակ ձեր առաջարկած սկզբունքի։

Ս. Վրացեան։— Այդ Մ. Յարութիւնեանի անձնական կարծիքն է։ Այդ խնդիրները մանրամասնութիւններ են, որոնց մասին մենք վերջնական կարծիք չունենք։ Կարծում ենք, որ զլիաւոր խնդիրների մասին համաձայնելուց յետոյ, կարելի է որոշել այդ բաշխման խընդիրը։

Ս. Յարութիւնեանը կրկին պաշտպանում է, որ զինորական մինիստրը լինի չէզոք անձ, ինչպէս եւ մեր գորքը պէտք է հեռու լինի քաղաքական խնդիրներից։

Վ. Թէքէեան հարց է դնում՝ իրենց պատասխանի մէջ բերած ձայների երկու - երրորդի վերաբերեալ պահանջի մասին։

Ս. Վրացեան։— Մենք չենք կարող ընդունել այդ, ինչպէս եւ, առ հասարակ, որ եւ է սահմանափակում կառավարութեան որոշումների՝ երկու - երրորդով կամ այլ ձեռով։

Ալլա նախագահը հարց է դնում խորհրդարանի ընտրութիւնների մասին, թէ ինչպէս պէտք է կատարւեն նրանք։

Ս. Վրացեան։— Ընտրութիւնները պէտք է կատարւեն այն օրէնքների հիման վրա, որ ընդունւած են մեր հանրապետութեան մէջ, սակայն, մենք համաձայն ենք, որ տեղ սկան պայմաններն աչքի առաջ ուենալով, այս կամ այն փոփոխութիւնը մտցւի ընտրութիւնների և զանակի մէջ։ Ընտրութիւնների ամբողջ գործը կազմակերպելը յանձնուում է Ազգ։ Պատւիրակութեան, որը եւ ոկտագութիւնը կ զեկավարէ այդ գործը։

Վ. Թէքէեան հարց է դնում՝ արդեօք ընդունելի կը համարէի, եթէ գործը արագացնելու համար, իբրև գիւրացում, Ազգ։ Պատւիրակութիւննը յարմար գտնի, որ ինքը ամբողջ կազմով տեղափոխւի երեւան խորհրդարանի մէջ մանելու համար։

Ս. Վրացեան։— Ո՛չ։

Նախագահ։— Հարց է դնում, թէ ի՞նչ պարագաներում դադարի ժամանակ հրաւիրում է խորհրդարանը։

Ս. Վրացեան։— Օրինակ, պատերազմի խնդիր, հաշառութեան խնդիր, փոխառութիւն կնքելու խնդիր, վարչապետի խնդիր, օտար պետութիւնների հետ կայացրած որ եւ է պայմանագրի վաւերացման կամ ըաթիֆերացիայի խնդիր։ Նոյնպէս եւ այն արտակարգ հարցերը, որոնց հկատմամբ կառավարութեան մէջ համաձայնութիւն կայանայ խորհրդարան հրաւիրելու։

Վերջին կէտի առթիւ դարձեալ հարց է դրւում, թէ ի՞նչ կերպ կառավարութիւնը կորոշէ այդ խնդիրը, ձայների ի՞նչ մեծամասնութեամբ։

Ս. Վրացեանը բացատրում է, որ այդ հարցում կարելի է համաձայնութեան դալ։ Մենք դէմ չենք, որ այդ հարցը յատուկ մեծամասնութեամբ կամ նոյն իսկ միաձայնութեամբ լուծւի։ Ինչպէս եւ սրանից առաջ էլ մենք ասել ենք, կարող ենք կրկնել, որ մենք երաշխատորութիւն ենք տալիս, որ մինչեւ նոր խորհրդարանի կազմւելը կոալիսիոնը գոյութիւն կունենայ եւ չի տապալւի։

Նախագահ։— Այժմ անցնենք մեր պատասխանի 4-րդ կէտին, որով կրկնում ենք, որ պահում ենք Հոկտ. 31-ի առաջարկների վերջին գրութիւնը, որը կը վերաբերի երկու Հայաստանների միացման ձեւին եւ անոր յայտարարութեան։ Ի՞նչ էք կարծում այդ մասին։

Ս. Վրացեան։— Դրանով դուք ուզում էք ժխտել Մայիս 28-ի ակտը, իսկ մենք կարծում ենք, որ այդ ակտը պէտք է մնայ իր զօրութեան մէջ։ այս ըստէիս կայ մի Հայաստանի Հանրապետութիւն, որը թէեւ չէ ճանաչւած պաշտօնապէս, բայց նրա գոյութիւնը փոստ

է. միւս կողմից կայ եւ մի ուրիշ Հայաստան՝ Թիւրքահայաստանը, որ այժմ անունով միայն, բայց իրօք գեռ գոյութիւն չունի: Սկզբունքով մենք, ի հարկէ, միանդամայն համամիտ ենք, որ այդպիսի մի միութեան ակտ կատարելի. մենք՝ ինքներս՝ իրեւ գաշնակցականներ, միշտ ընդունել ենք մեր գործունէնութեան նպատակը Թիւրքահայաստանի դատը, բայց առ այժմ չենք տեսնում օրիէկտիւ պայմաններ այդ յայտարարութեան համար. ներկայ վայրկեանը չի թերագրում այդ քայլն առնել. ուստի գտնում ենք, որ այժմ եւ եթ չը պէտք է պարզ յայտարարել, թէ ո՞ր Հայաստանը որին է միանում. մենք միայն պէտք է հանդիսաւոր կերպով յայտարարենք երկու Հայաստանների միութիւնը, առանց շեշտելու, թէ Թիւրքահայաստանն է, որ կազմում է իր կառավարութիւնը եւ նրան միանում է Անդրկովկասում կազմւած Հայաստանի Հանրապետութիւնը, եւ ընդհակառակը:

Վ. Թէ՛քեանը նկատում է, որ Թիւրքահայաստանի հարցը պաշտօնապէս ճանաչւած է Կոնֆէրանսի կողմից. նա լուծւելու է մօտ ժամանակներում, այն ինչ Ռուսաստանի եւ, ուրեմն, Ռուսահայաստանի հարցը գեռ մնում է անորոշ, եւ մենք չդիտենք, թէ ի՞նչ կը լինի նրա վիճակը. ուստի եւ մեր վիճակը չպէտք է կապէլ Ռուսաստանի հարցի հետ:

Այստեղ Հայաստանի Հանրապետութեան հետ ստեղծւած են Վըրաստանը եւ Ազգրէջանը, եւ օտարները մեզի հետ կը պահեն միայն գործի յարաբերութիւններ, ինչպէս եւ Վըրաստանի ու Ազգրէջանի հետ. այն ինչ իրաւապէս Թիւրքահայաստանի գոյութիւն իրաւունքը աւելի զօրաւոր է:

Մ. Յարութիւնեան.— Ի հարկէ, մեղ համար շատ ցանկալի կը լինէր եւ մեր Հայաստանը կցւէր նրան, բայց իրականութիւնը այժմ մեզ ուրիշ բան է թերագրում, եւ քանի որ Թիւրքահայաստանը դեռ եւս գոյութիւն չունի, ուստի այս բոպէիս պէտք է ընդունենք իմ ընկեր Ս. Վըրացեանի առաջարկած ձեւը:

Մ. Յարութիւնեանը գտնում է, որ մենք պէտք է միայն յայտարարենք, որ երկու Հայաստանները միանում են, իսկ թէ ո՞րը միանում է միւսին, այդ այժմ դնելու ինդիր չէ եւ բոլորովին չի խանդարում Թիւրքահայաստանի դատի առանձին գոյութեան: Այդ իմ մասնաւոր կարծիքն է:

Նախագահ.— Պնդում է, որ Ազգ. Պատւիրակութիւնը առանձին կարեւորութիւն է տալիս այդ ձեւի յայտարարութեան:

Ա. Վրացեան.— Եթէ մենք խմբագրելու լինենք այդ մասին մի յայտս բարութիւն, նրա պատմական մասում կարելի է դնել այդ տեսակէտը, որ Թիւրքահայաստանի խնդիրը մեր գատի գլխաւոր, կենտրոնական կէտն է եղել միշտ, բայց ներկայումս պէտք է միայն պարզապէս երկու Հայաստաններ գրութիւնը յայտարարել:

Նախագահ.— Եզրափակելով մեր բոլոր ստացած պատասխանները գրած հարցումներէն՝ ես պէտք է հաստատեմ, որ համաձայնութեան ո՛չ մի կէտ մեր վերջին առաջարկներուն վրա, եւ կը մնայ, որ մենք գրաւոր կերպով արձանագրենք այդ: Ես այլեւս ո եւ է հնարաւորութիւն չեմ տեսնար միութիւն կայացնելու:

Այսուհետեւ նիստը վերջանում է. որոշում է վաղը ստորագրել վերջին երկու արձանագրութիւնները:

Ստորագրած բոլորից, բացի

Տէր - Ստեփանեանից (բացակայ.)

ՆԻՍՏ ԽՆՆԵՐՈՒԴԻ

Ներկայ էին բոլոր անդամները:

Նախագահում էր Ս. Վրացեանը:

Կարգացւեց եւ մի քանի փոփոխութիւններով վաւերացւեց նախորդ նիստի արձանագրութիւնը:

Ապա ստորագրւեցին 7-րդ եւ 8-րդ նիստերի արձանագրութիւնները:

Նախագահ.— Անցեալ անգամ պայմանաւորւեցինք, որ այսօր Դուք պիտի ասէք ձեր վերջնական խօսքը ձեր վերջին գրութեան առթիւ մեր տւած պատասխանի մասին:

Վ. Թէ՛քեանի.— Մենք վեց պատոնական եւ երեք անպաշտօն նիստերում երկարօրէն վիճեցինք մեր ներկայացրած առաջարկներուն վրա: Այս նիստերի միջոցին մեր յայտնած զիջումները ձեր փափաքին համաձայն գրաւոր եւս ներկայացուցինք, իբր վերջնական պայմաններ: Ձեր կողմէ տրւած պատասխանը որ եւ է չափով մեր նոր՝ զեղչեալ առաջարկներուն չի մօտենար, հետեւաբար, ցաւօք սրտի ստիպւած ենք յայտարարել, որ ուրիշ նոր պայմաններ չենք կրնար առաջարկել, որով եւ մեր պաշտօնը կը նկատենք լրացած: Կը հաղորդենք արդիւնքը մեզ զրկող Ազգ. Պատւիրակութեան, որ ինքը կը վճռէ այսուհետեւ իր ընելիքը:

Ս. Վրացեան.— Մէնք եւս ցաւում ենք, որ հնարաւոր չեղաւ երկու կողմից էլ բաղձացւած համաձայնութիւնը կայացնել։ Կարծում ենք, որ այս առաջարկութիւնները, որ մեր կողմից էին դրում, պէտք է բաւարար համարէին համաձայնութիւն կնքելու համար։ Յոյս ունենք, որ այս համաձայնութեան չկայացւելլ պատճառ չի լինի որ բոլոր համերաշխ եւ միարան առաջ չտանենք այն դործը, որի միակ նորատակն է Միացեալ եւ Անկախ Հայաստանի դազափարի իրականացումը։

Վ. Թէքէեան, Ն. Տէր - Ստեփանեան, Ս. Յարութիւնեան.

Ս. Վրացեան, Շ. Միսաքեան, Մ. Յարութիւնեան.
Քարտուղար՝ Յ. Քոչարեան։

**

Այսքանով, սակայն, բանակցութիւնները չվերջացան։ Վարչապետ Ա. Խատիսեանը, բանակցութիւնների արդիւնքի մասին դեկուցում լսելով Հանրապետական Պատուիրակութեան նախագահ Ս. Վրացեանից՝ վերջինիս խորհրդով Պօղոս փաշա նույարկն ուղարկեց հետեւեալ նամակը, որ դրւած էր Հանրապ. Պատուիրակութեան նախագահի ձեռքով եւ որ մի աւելորդ անդամ ցոյց է տալիս, թէ որքան իրական էր համաձայնութեան տենչը Երեւանում։

Նօ. 5275

9 Դեկտ. 1919 թ.

Վաեմափայլ Պօղոս փաշա Նուբարին
Փարիզ

Ի պատասխան Զեր 10 Սեպտ. սիրալիր նամակի պատիւ ունեմ հաղորդելու, որ մենք ուրախութեամբ ողջունեցինք Պ. Վ. Թէքէեանի եւ Պ. Ն. Տէր - Ստեփանեանի առաքելութիւնը եւ այն յուսով էինք, որ կարելի լը լինի փոխազարձ հասկացողութեամբ եւ համաձայնութեամբ անյապաղ ձեռնարկել ամբողջական Հայաստանի Միացեալ Խորհրդարանի, կառավարութեան եւ Պատուիրակութեան կազմութեանը։ Դժբախտաբար, սակայն, մօտ երեք շարաթ տեսող բանակցութիւնները ցանկալի արդիւնքը չտուին. իրաւ է, որ երկու կողմից էլ բուռն փափաք էր նկատում համաձայնութիւնը դոյշնելու, բայց որոշ պատճառներ, աւելի շատ ձեւական հանդամանքներ հնարաւոր չդարձրին այդ։ Ես դժւարանում եմ որ եւ է մէկին մեղաղբել, բայց պէտք է ասեմ, որ մեր կողմից բոլոր հնարաւոր

քայլերն արւեցին ընդառաջելու Պ. Վ. Թէքէեանի ներկայացրած առաջարկներին։ Մեկնելով մեր իրականութիւնից, այլ եւ աչքի առաջ ունենալով Հայաստանի թէ ներքին եւ թէ արտաքին հանդամանքները, մեզ թւում է, որ համաձայնութեան համար մեր առաջարկած պայմաններն աւելի արդար էին եւ աւելի համապատասխան հայ ժողովրդի իրական կացութեան ու շահերին։

Որպէս փոխառաջարկներ Պ. Վ. Թէքէեանի ներկայացրած առաջարկներին՝ մէնք զրինք հետեւեալ կէտերը, որոնք, ըստ էութեան, շատ էլ հեռու չեն ձեր տեսակէտներից, բայց, մեր կարծիքով, աւելի են համապատասխանում Հայաստանի քաղաքական պահանջներին եւ բխում են հայ ժողովրդի հոծ մէծամասնութեան մտածողութիւնից։ Մեր առաջարկներն էին։

1. — Կազմել Ամբողջական Հայաստանի Միացեալ Խորհրդարան՝ լրացուցիչ լնարութիւն կատարելով Հայաստանի այն մասերում, ուր լնարութիւն չի եղել, եւ դաղթավայրերում։ Լնարութիւնն անել Հայաստանի Հանրապետութեան օրէնքներով՝ յարմարեցրած տեղական պայմաններին։ Լնարութեան գործի զեկավարութիւնը յանձնել Պատուիրակութեան։ Լնարել եւս 51 արեւմտահայեր, որպէսզի երկու համաձիւ պատգամաւորների թիւը հաւասարի։

2. — Մինչեւ Միացեալ Խորհրդարանի գումարումը կազմել միացեալ կառավարութիւն՝ 9 կամ 11 հոգուց բաղկացած՝ կէսը արեւմտահայ, կէսը արելեւելահայ — 5 կամ 6 գաշնակցական, 4 կամ 5 ոչ գաշնակցական։ Նախարարները նշանակւում են փոխազարձ համաձայնութեամբ։ Արտաքին գործոց նախարարը եւ հաշտութեան վեհաժողովի պատւիրակութեան նախագահը կարող է միեւնոյն անձը լինել։

3. — Ներկայ խորհրդարանը շարունակում է իր զբաղումները. բիւղէի քննութիւնն աւարտելուց յետոյ կարելի է որոշ ժամանակով արձակուրդ տալ։ Միացեալ կառավարութեան գոյութիւնը երաշխաւուրում է մինչեւ միացեալ խորհրդարանի ընարութիւնը։

4. — Հաշտութեան վեհաժողովի երկու պատւիրակութիւնները ձուլում են եւ կազմւում է մէկ պատւիրակութիւն՝ Ազգային Պատուիրակութեան նախագահի գլխաւորութեամբ։ Պատւիրակութիւնն կազմի մէջ կը մտնեն արեւելահայեր եւ արեւմտահայեր՝ ինչ կուսակցութեան յարաբերութեամբ եւ լինի։ Պատւիրակութիւնը գործում է միացեալ կառավարութեան հրահանգներով եւ պատասխանատու է կառավարութեան առջեւ։

5. — Համաձայնութեան ակաի յայտարարութեան մէջ ասւում է, որ Արեւմտեան Հայաստանը եւ Արեւելեան Հայաստանը, իրրեւ անկախ միութիւններ, միացել են միմեանց :

Ահա սրանք են մեր առաջարկութեան էական կէտերը. մանրամանութիւնները յիշւած են նիստերի արձանագրութեանց մէջ: Այս բոլորից Դուք կը տեսնէք, թէ որքան անկեղծ էր մեր փափաքը երկուստեք համաձայնութիւն ստեղծելու եւ մեր ներսն ու արտաքին աշխարհի առջեւ դուրս գալու մէկ ճակատով ու մէկ կարդով: Եւ Եթէ, այնուամենայնիւ, համաձայնութիւնը տեղի չունեցաւ, ինձ թըւում է, որ դրա մէջ աւելի մեծ դեր կատարեց խնդրի ենթակայական կողմը, այսինքն՝ պակասը այն վստահութեան, որ այսպիսի դէպ-քործի յաջողութեան միակ գրաւականն է:

Այսուհանդերձ, ես ուզում եմ հաւատալ, որ Ազգ. Պատուիրակութեան առաջելութեան մեկնումը Երեւանից դեռ եւս բանակցութիւնների վերջնական խղում չի նշանակում: Սիրում եմ յուսաւ, որ հարցի մանրամասնութիւններին ծանօթանալուց յետոյ, Դուք բաւական կը համարէք մեր կողմից առաջարկած պայմանները եւ գործնական քայլեր կառնէք երկուստեք ցանկալի համաձայնութիւնն իրականութիւն դարձնելու: Եւ ինչ էլ լինի մեր վճիռը, Դուք միջոցներ ձեռք կառնէք Զեր հեղինակաւոր ազգեցութեամբ թոյլ չտալու հրապարակային պայքարի վերսկսման, որը արտաքին աշխարհում այնպիսի տպաւորութիւն կը թողնէ, որ, իրը թէ, մեր մէջ գոյութիւն ունի իրական անհամերաշխատթիւն ու պայքար ազգային - քաղաքական հիմնական հարցերի վերաբերմամբ: Ընդհակառակը, մօտիկ ծանօթութիւնը Զեր ներկայացուցիչների հետ ցոյց տևեց, որ Հայաստանի քաղաքական այսօրւայ ճակատագրին վերաբերող գլուխաւոր հարցերի նկատմամբ մեր մէջ հայեացքների նոյնութիւնն է տիրում եւ նկտուղ անհամաձայնութիւնը աւելի շատ արդիւնք է փոխադարձ անվատահութեան, ինչ որ դժւար պիտի չլինի վերացնել դործի լնթացքում:

Սպասելով Զեր կողմից հարցի բարենպաստ կարդագրութեան՝ մնամ՝

Հայաստանի Հանրապետութեան

Մինիստր - նախադաս Ա. ԽՍՏԻՍԵԱՆ

Թէ ի՞նչ զեկուցում ներկայացրեց Վ. Թէքէնանի առաջելութիւնը Ազգ. Պատուիրակութեան եւ ի՞նչ եղաւ վերջնիս վճիռը, մեզ յայտնի չէ: Բոտ երեւոյթին, Ազգ. Պատուիրակութիւնն էլ, իր առաքելու-

թեան պէս, բանակցութիւնները համարեց վերջացած եւ միութիւնը՝ չեղեալ: Երեւանում դէթ այդ խմասոով էլ հասկացւեց վարչապետ Ա. Խատիսեանի նամակի Երկար ժամանակ անպատճախան մընալը, ինչպէս եւ արտասահմանի հայ մամուլի որոշ մասի էջերում յարուցւած աղմունկը Վ. Թէքէնանի առաջելութեան շուրջ: Ազգ. Պատուիրակութեան մեկնումից երեք ամիս անցած, մի օր էլ Երեւանում ստացւեց Պօղոս վահայեց մի հեռագիր, որով յայտնում էր, թէ ինքը ընդունում է Հայաստանի կառավարութեան պայմանները եւ առաջարկում է անյապաղ միացնել Փարիզի զոյգ պատւիրակութիւններն ու ձեռնարկել միացնեալ կառավարութեան կազմութեան: Եւ այս վերջին գործը կատարելու համար իր կողմից ներկայացուցիչ էր նշանակում Հայ Ժողովրդական Կուսակցութեան պարագըլուին Սամ: Յարութիւննեանին եւ Արշ. Միիթարեանին: Այդ առթիւ Թիֆլիսից Երեւան եկաւ Ս. Յարութիւննեանը, որի հետ եղած խօսակցութիւնը կազմում է վերջին գործողութիւնը «Հայ - Հայկական բանակցութիւններ»-ի: Ահա եւ այդ խօսակցութեան արձանադրութիւնը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Խորհրդակցութիւն նախարարապետ Ա. Խատիսեանի, Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչ Ս. Յարութիւննեանի եւ Ազգ. Պատուիրակութեան առաջելութեան հետ բանակցող Յանձնաժողովի նախագահ Ս. Վրացեանի միջնեւ, 1920 թ. մարտ 25ին, նախարարապետի առանձնառենեակում:

Խորհրդակցութիւնը բանալով՝ նախարարապետ Ա. Խատիսեանը յայտնում է, որ Փետր. 18-ին ինքը ստացել է Պօղոս վահա Նուպարից մի հեռագիր, որով վերջին յայտնում է, թէ ինքը ընդունում է կառավարութեան այն պայմանները, որոնք բանակցութիւնների ժամանակ Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչները մերժել էին ընդունել: Միեւնոյն հեռագրում Պօղոս Նուպարը առաջարկում է անյապաղ միացնել Փարիզի Պատուիրակութիւնները, եւ նշանակել է Պ. Ս. Յարութիւննեանին եւ Ս. Միիթարեանին ներկայացուցիչ Հանրապետութեան կառավարութեան հետ միացնեալ կառավարութիւն կազմելու համար: Փետր. 20-ին Պ. Խատիսեանը հեռագրել է Պօղոս Նուպարին, թէ իր հեռագիրը ստացւած է, պատասխան կը տրի, երբ Երեւան հասնի Հ. Օհանջանեանը:

Մարտ 10-ին Պ. Ս. Յարութիւննեանը մի գրութեամբ ղիմել է նախարարապետին՝ հաղորդելով իր առաջելութեան մասին: Կառավա-

ըութիւնը քննելով հարցը՝ յանձնարարեց Պ. Ս. Վրացեանին, որը անդամակցել է Ազգ. Պատւիրակութեան ներկայացուցիչների հետ բանակցութիւններ վարող Յանձնաժողովին, խորհրդակցել Պ. Ս. Յարութիւննեանի հետ առաջարկւած հարցի առթիւ։ Ահա այդ նպատակով նշանակւած է այս խորհրդակցութիւնը։

Ս. Վրացեան. — Ձեզ յայտնի է, թէ ինչ պայմաններում սկսեցին բանակցութիւնները անցեալ հոկտեմբերին. Հայաստանի անկախութիւնը դեռ ճանաչւած չէր, հայկական ամբողջական հարցի լուծումը ձգձգում էր, իսկ հայ հասարակութիւնը, մանաւանդ արտասահմանում, չնորհիւ Ազգ. Պատւիրակութեան կողմնակիցների լնթացքի, պառակտւած էր եւ դրազւած ներքին պայքարով։ Այդ պայքարի վերացումն ու մէկ ճակատ կազմելու անհրաժեշտութեան գիտակցութիւնն էր պատճառ այն մեծ զիջումների, որ մեր կողմից եղան։ Դժբախտաբար, այդ զիջումները ո՛չ միայն մէրժեցին, այլ եւ Պօղոս Նուևարի պատւիրակութիւնները, բանակցութիւնների խզումից յետոյ անմիջապէս, պայքար սկսեցին Հայաստանի Հանրապետութեան եւ կառավարութեան դէմ։ Մինչդեռ մենք աշխատեցինք ամէն կերպ առաջ բերել համերաշնութիւն, առանց մի տող անդամ դրելու բանակցութիւնների մասին, Ազգ. Պատւիրակութեան ներկայացուցիչ Պ. Թէքէնանը ժողովների եւ թերթերի մէջ բացեց զործոն պայքար մէր դէմ, որ, ի հարկէ, բուռն յուղում առաջ բերեց հանրային մըստքերի մէջ եւ նոր դրվագատճառ հանդիսացաւ երկպառակութեան, յատկապէս արտասահման։ Ազգ. Պատւիրակութեան կուսակիցների Հանրապետութեան դէմ բոնած դիրքն, օրինակ, Ամերիկայում բացայաց թշնամական է, որի հետեւանքով ամբողջ գաղութը բաժանել է երկու հակադիր մասերի։ Հակառակութիւնների այդ ալիքներն արդէն հասել են եւ մեզ մօտ եւ աւելի ու աւելի գժզոհութիւններ են առաջ բերում, մանաւանդ մեր կուսակցութեան շրջաներում։ Ի՞նչ արժէք կունենայ կազմւած կաղլիցին կառավարութիւնը, եթէ նա յենւած չի լինելու ժողովրդական լայն խաւերի համականքի վրա։

Այս պատճառով, այլ եւ աչքի առաջ ունենալով Հայաստանի անկախութեան ճանաչման փաստը պետական կողմից, որ միանդամայն նոր հանդամանք է, մենք որոշել ենք, ըստ կարելույն շուտ, գումարել կուսակցական կօնֆէրանս եւ հարցի քննութիւնը գնել նրա առջեւ։ Միայն կօնֆէրանսի վճռից յետոյ մենք ի վիճակի կը լինենք դրական կամ բացասական պատասխան տալու։ Պէտք է ցաւել, որ հոկտեմբերին սկսւած բանակցութիւնների պատասխանը

միայն վետրւարին տրւեց, մինչդեռ Ազգ. Պատւիրակութիւնը ամէն հնարաւորութիւն ունէր աւելի առաջ ասելու իր վերջնական խօսքը։

Ներկայ պայմաններն աւելի քան երեք պահանջում են, որ Հայաստանն ունենայ ուժեղ եւ ժողովրդական վատահութիւնը վայելող կառավարութիւն։ Այն մթնոլորտը, որ ստեղծել են Ազգ. Պատւիրակութեան կուսակիցները, այն, եթէ ոչ թշնամական, առնուազն պայտվերաբերումը, որ նրանք ցոյց են տալիս դէպի Հանրապետութիւնը, աւելի եւս գժւարացնում է հոկտեմբերին առաջարկւած կողմիցին ձեւով հեղինակաւոր կառավարութեան կազմակերպումը։ Հոկտեմբերից ի վեր կացութիւնը մի շարք տեսակէտներից փոխւել է, եւ մենք կարեւոր ենք համարում հարցը նոր քննութեան ենթարկել։

Ս. Յարութիւննեան. — Պ. Ս. Վրացեանի առաջ բերած առարկութիւնը Հայաստանում ներկայումս կուսակցիոն կառավարութիւն կալութելու դէմ չեմ գանում հիմնաւոր եւ հարցի լուծումը Դաշնակցական կուսակցութեան կոնֆէրանսին ենթարկելով կարող է մեկնարանւել իրեւ մերժման մի ձեւ։

Նախ ես գանում եմ, որ անցեալ տարւայ հոկտեմբերեան բանակցութիւնները Հայոց Ազգ. Պատւիրակութեան ներկայացուցիչների հետ համարում են ոչ թէ խուած, այլ՝ ընդհատւած, որովհետեւ Պատւիրակութեան ներկայացուցիչները կառավարութեան կողմից առաջարկած պայմանները կուլիցիալի մասին գտան իրենց երաւասութեան սահմաններից գուրս եւ հարկաւոր համարեցին խնդրի վերջին լուծումը ներկայացնել Ազգ. Պատւիրակութեան անօրինութեան։ Այդպէս է իմաստը վերջին արձանագրութեան։ այդ մտքով է հասկացել եւ կառավարութիւնը, ինչպէս նկատում է Պ. Խատիսեանի համակից, Պօղոս Նուևարին գրւած։ Պատւիրակութեան ներկայացուցիչները բանակցութեան ամբողջ արձանագրութիւնները ներկայացրել են Պատւիրակութեան։ Անկախ սրանից, Պատւիրակութիւնը միաժամանակ ստացել է Հայաստանի կառավարութեան արտաքին գործոց մինիստրի։ Պ. Ս. Խատիսեանի ստորագրութեամբ մի նամակ Պօղոս Նուևար փաշայի հասցէին ուղղւած, որի մէջ Պ. Խատիսեանը կառավարութեան կողմից նախ առաջ է բերում հինդիքտի մէջ ամփոփած կառավարութեան առաջարկած պայմանները կուլիցիալ կառավարութիւն կազմելու մասին, որոնց մէջ գլխաւոր կէտերն այն են, որ կառավարութեան մէջ Դաշնակցութիւնը մէկ կուսակցիալի առաւելութեամբ պէտք է ներկայացնել եւ երկու արտաքին գործոց մինիստրի։ Պ. Ս. Խատիսեանի ստորագրութեամբ մի նամակ Պօղոս Նուևար փաշայի հասցէին կազմվէ մէկ պատւիրակի փոխարէն կազմութիւն, եւ ցանկութիւն է յայտնում, որ պատւիրակութիւնը ընդունի այդ պայ-

մանները։ Պատուիրակութիւնը քննեով խնդիրը եւ ի նկատի առնելով հայ ազգի բարձր շահերը ներկայ մոմենտում, որոշում է ընդունել բոլոր հինգ առաջարկած պայմանները առանց փոփոխութեան եւ դործը արագացնելու նպատակով իր համաձայնութիւնը հաղորդում է հեռագրով կառավարութեան։ Ուրեմն, կոսլիցիոն կառավարութեան խնդիրը լուծած պէտք է համարել եւ համաձայնութիւնը կայացած։ նոր կոնֆերանս հրատիրելը աւելորդ է, քանի որ Դաշնակցութեան աւելի հեղինակաւոր մարմինը՝ ընդհանուր համագումարը անցեալ տարի աւել է իր հաւանութիւնը։ Այժմս մեղ հարկաւոր է փոխազարձ համաձայնութեամբ որոշել միայն երեք հարց։ պորտֆէյլների բաժանումն, մինիստրների համար ընտիր թեկնածուներ եւ արտասահմանեան մեր երկու հայկական պատուիրակութիւններից կազմել մէկ պատուիրակութիւն։ Այսպէս էլ ես հասկացել եմ իմ միսիան, որը ստացել եմ Ազգ։ Պատուիրակութիւնից։

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ իբր ընդհանուր դըրութիւնը հոկտեմբերից մինչեւ այժմս փոխւել է, եւ թէքէեանի ու նրա համախոհների բոնած դիրքը արտասահման գժողոհութիւն է յարուցել, այդ առարկութիւնները եւս հիմք չեն տալիս յետաձելու կոսլիցիոն կառավարութիւն կազմելը եւ ահա թէ ինչո՛ւ։ մեր Հանրապետութեան վիճակը ամէն կողմից գեռ մնում է ծանր, եւ չի նըկատում համայն հայութեան աջակցութիւնը, որպէսզի երկիրը դուրս դայ իր այդ վիճակից։

Անկասկած պատճառներից մէկը ստեղծած գրութեան պէտք է համարել այն, որ մեր կառավարութիւնը եւ պարլամենտը միատարր են եւ այդ պետական հիմնարկութիւնների մէջ չեն ներկայացւած մեր ազգի երկու հատւածների կենսունակ եւ կարող ուժերը, որոնց համախմբումը այժմ աւելի անհրաժեշտ է զբացւում։ Առաջւայ բանակցութիւնների ժամանակ մենք յոյս ունէինք, որ Ամերիկան կը նդունի Հայաստանի մանդատը եւ, ի հարկէ, այդ գէպքում մեր դըրութիւնը աւելի շուտ կը թեթեւար եւ կը բարելաւէր։ Սակայն այդ յոյսերը չարդարացան։ Ամերիկան ընդունեց մանդատը, և Անգլիայի արտաքին գործոց նախարարը՝ Խորդ Քըրպլնը՝ մեր պատուիրակներին՝ Պօղոս փաշային եւ Աւետիս Ահարոննեանին յայտնել է, որ Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է յենտի իր ժողովրդի ուժերի վրա, իսկ Համաձայնութեան մէծ պետութիւնները ցոյց կը տան բարյական եւ գիւտանազիտական աջակցութիւն։ Այս յայտարարութիւնը պարզ կերպով կը թելազրէ մեղ, որ մեր պետութեան ամրապնդման համար հարկաւոր է հայկական երկու հատւածների միու-

թիւն եւ հայ կուսակցութիւնների համագործակցութիւն, մտնաւանդ արտաքին քաղաքականութեան մէջ, եւ այդ բոլորը պէտք է արտայայտուի Հանրապետութեան պետական գլխաւոր հիմնարկութիւնների միջոցով՝ պարլամենտի եւ կառավարութեան՝ վերակազմելով նըրանց կուլիցիոն ձեւով։ Թէքէեանի եւ նրա համախոհների արտայայտութիւնները արտասահմանում, ներկայ գէպքում եւ արուածինդրի վերաբերմանը առանձին նշանակութիւն չըկտք է ունենան, մտնաւանդ որ այդ գժողոհութիւնները ունեն մի նպատակ, որ ներկայ միատարր պարլամենտն ու կառավարութիւնը վերակազմեն կոսլիցիոն սկզբունքով։ Թէ որքան անհրաժեշտ է համարւում կոսլիցիոն կառավարութիւնը եւ արտասահմանեան հայկական կուսակցութիւնների կողմից, բաւական է կանգ առնել հէնց վերջին գէպքերի վրա, որոնք աեղի են ունեցել Պոլիս։ Հայկական բալոր քաղաքական կուսակցութիւնները վերջերս ունեցել են ժողով Պոլուում, այդ ժողովին մասնակցել է եւ Դաշնակցութիւնը։ Ժողովը քննելով Հայաստանի Հանրապետութեան զրութիւնը՝ գտել է, որ անհրաժեշտ ստեղծել կոսլիցիոն կառավարութիւն եւ այդ նպատակով նա գիտում է արել Հայաստանի կառավարութեան եւ Հայաստանի քաղաքական կուսակցութիւններին, որ իրազործւի այդ գաղափարը։

Ի նկատի ունենալով վերոյիշեալ բոլոր դիտողութիւնները՝ ես նորից կրկնում եմ, որ մեր Հանրապետութեան եւ ազգի շահի տեսակէտից հրամայողական պահանջ է, որ մինչեւ Հիմնադիր ժողովը կազմակերպւի կոսլիցիոն կառավարութիւն, այն հիմունքներով, որը առաջարկել է Հայաստանի կառավարութիւնը Ազգ։ Պատուիրակութեան եւ վերջինս աւել է իր համաձայնութիւնը։ Նոյն առաջարկութեան հիմունքներով պէտք է վերակազմեն պարլամէնտը եւ արտասահմանեան պատուիրակութիւնները։ Սակայն, քանի որ դուք յայտնում էք, որ Դաշնակցութեան Բիւրօն որոշել է հրաւիրել կոնֆէրանս այդ ինդիրից նորից քննելու եւ լուծելու համար, որի հետ համայն է եւ կառավարութիւնը, ուստի մեր բանակցութիւնները պէտք է համարել չկայացած եւ ինձ մնում է այդ մասին հաղորդել Փարիզի Ազգ։ Պատուիրակութեան՝ թողնելով, որ Պատուիրակութիւնը ինքը որոշի իմ անելիքը եւ բանելիք դիրքը։

Նախարարավետը ամփոփեց երկու կողմի եղբակացութիւնները, որով եւ վերջացաւ խորհրդակցութիւնը։

1920 թ. Մարտ 25

Երեւան

(Վերջ)

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՄՇԱԿՈՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կը կամենայի ինք այս բաժինը սկսել
տեղեկութիւններով Հայաստանի մշա-
կոյքի մասին, բայց, դժբախտաբար,
վերջին երկու տարին մշակոյքի գարգա-
ցումը Հայաստանում բոլորովին կանգ
է առել: Հայ լաւագոյն գրողների, ար-
և աստվագիտների, գիտութեամբ գրադ-
տունների մեծ մասը բանուում է, ունանք,
քերենս, եւ զնակահարւած: Մշակոյ-
քին ծառայող հաստատութիւններն ու
կազմակերպութիւնները «մաքրագոր-
ծւած»՝ աւերի են ենքարկւած: Հայ մը-
շակոյքի գործը մատնիւած է ուսւաց-

ման: Ինքնուրոյն աչքի զարնող հրատա-
րակուրի իւնեներ չկան: Մելքոնեան փոնդը
լուծւած է եւ այլեւս նոր զրբեր չի տա-
լիս: Հայ գիտուրի խնը, գրականուրի խն-
ը, արևատր, հոգեւոր ստեղծագործու-
թեան բոլոր բնագաւառները ամայցած
են: Լուրջ պարբերականները չկան:
Մամուլը լիցում է քարզմանուրի իւն-
եներով ուսւերէն քիրք-երից, եւ պաշ-
տօնական լուրերով ու նառերով: Ո՞չ մի
կենդանի միտք, ո՞չ մի ոգեւորող խօսք:
Զարհուրի է Հայաստանի մշակոյթի
այսուայ վիճակն:

Ա. ԶԵՊԱՆԵԱՆԻ ՅՈՒԹԵԼԵԱՆԸ

Եկող մայիսին, Փարփառմ, պիտի
տօնելի Պ. Արշակ Զօպանեանի գրական
գործութեաւը եան յիսմամնայ յորելեա-
նը: Կազմակերպիչ Յանձնաժողովովի մեզ
ուղարկած շրջաբերականից տեղեկա-
նում ենք, որ յորելեաւական համդեսը
տօնելու է Սորբոնի ամփիթատրո-
նում, Մայիս 14-ին:

Յանձնածողովը որոշել է կազմի Փը-
րամացի մտաւորական եւ բարեկալան
անձնաւորութիւններից հովանաւորող
մի մարմին, որին անդամակցելու են
նաև Փարփիքի երեխ հայ կրօնապետնե-
րը: Մի շարք ականաւոր գրամսացիներ,
ինչպէս Մարիուս Մուրէ, Ճորժ Դիհա-
մէլ, Համբիք Բորդո, Շարլ Դիլ, Ռենէ
Փիբոն եւ ուրիշներ ստանձել են յո-
նուինակի պառակ նախագահութեան:

Կազմակերպիչ Յանձնաժողովի որոշումը յոթերոշն է առաջարկություն կատարելու համար:

Թաքուլ, Օ. Թաղէկոսեան, Ա. Իեհիմ-
նեան, Ա. Խամէտանեան, Կ. Խուզփիկ-
եան, Ը. Կամսարական, Լ. Կ. Կէրտան,
Հ. Կոստանեան, Ա. Կէվրէկ, Ա. Ճիւն-
պիշշան, Ե. Մանէլեան, Մ. Մալում-
եան, Վ. Մեսրոպիան, Պ. Մուրատեան,
Մ. Նալպատիսեան, Է. Շահին, Ա. Շահ-
խարութի, Խ. Շիշմանեան, Ա. Զաքր-
իան, Ս. Պէրպէտիան, Ա. Պարքեւեան,
Մ. Պարսամեան, Ա. Պետրոսեան, Յ.
Սէմէրենեան, Ս. Սաղթեան, Յ. Ա. Ար-
ևանեան, Հ. Սամէլ, Յ. Սարգսեան,
Մ. Վարանդի, Գ. Փափազեան, Գ. Ֆէ-
նէրենեան :

Յանձնաժողովի դիւանը կազմւած է
հետևեալ անձերից.

Նախաղահ՝ Լիւռն կ. Կերտան, Փոխ -
Նախաղահ՝ Էտկար Շահին, Քարոզու -
ղար՝ Գ. Ֆենէրենան, Գանձացահ՝ Ս. -
Մայումեան:

Յանձնառողջով նշանակել է նաև երկու մասնախմբեր, որոնց պաշտօնը պիտի լինի կազմակերպել յորելենական հանդէսի գեղարւեստական բաժինը եւ դեկալարի յորելենանի միւրական հարցեր :

Զմունանի յիշեցնել, որ սա Պ. Ա. Զօպանեանի երկրորդ յոթեղեանն է, որ տօնելով է Փարիզում:

Արձանագրելով այս փաստական տրւ-
եալները՝ անհրաժեշտ ենք համարում ա-
ւելացնել նաև, որ յանձնին Պ. Ա. Զօ-
պանեանի մենք տեսնում ենք երկու
հանրային անձեր, — մէկը՝ հասարակա-
կան ու բաղադրական գործիչ, միւսը՝
գրական դէմք: Առաջինից մենք բաժան-
ւած ենք զաղափարի եւ գործելակերպի
դժւար անցանելի անընդունելով: Նա
տասնեակ տարիներ անընդհատ կատա-
դի պայքար է մզել մեզ համար նիփրա-
կան եղող զաղափարների, անձերի ու
գործերի դէմք եւ, փոխադարձաբար ան-
խնայ հարւածներ է ստացել: Եթէ այս
Զօպանեանի յոթեւամբ տօնելու, նա,

բնականաբար, կը մնար միայն իր կուսակիցների նեղ շրջանակում:

Բայց կուտակցական մարդ Զօպանեանցից զատ եւ նրանից առաջ, որքան եւ դժւար լինի բաժանել, կայ գրական գործիչ Զօպանեանը — նա՛, որ տւել է հայ մշակյալին բազմարիւ արժէքաւոր

աշխատուրի նենքը — «Թուղթի ն փառք»-ի հեղինակը, միջնադարի եան հայ բանաստեղծութեան բանասէքը, Նահապետ Քուչակին լոյս աշխարհ հանդը, ՄԿ. Պէշիկը աշխատին, Թ. Թերգեանի եւ այլոց կենսագիրն ու երկերի ժողովրդականացնողը, իրական ներշնչումը

յօրինած ուսանալորմերի երգիչը, ար-
և աստի եւ հայ մշակոյքի այլ նիւթերի
քեղմանար ուսումնասիրողը, հայ մշա-
կոյքը օտար հասարակութեան ծանօ-

թացողով ու ոյ գրավառութեան գա-
ձերի Փրանսերէն թարգմանիչը — ա՞յս
Զօպաննեանի յորելեանին ամենայն սի-
րով կը մասնակցինք եւ մենք։ Դրան ա-
պացոյց կազմ։ Յանձնաժողովի անդամ-
ների ցանկը։ Այդպիսի ցանկ, աւա՞զ,
կարելի չեղաւ կազմել Ա. Ահարոննեանի
յորելեանի առքի։ Մենք կասկած չու-
նինք, որ երէ Ահարոննեանը այսօր ա-
ռողջ լինէր, իբ անունն էլ պիտի դը-
նէր Պ. Զօպաննեանի Ցորելեական
Յանձնաժողովի անդամների կողմէն։

Սակայն, չնեմացնեմ ներկան անց-
խալի մռայլ վերյահումներով։ Մեր այս
վատ, ամեն տեսակիտից աննախանձելի
օրերում՝ զանամք տեսնել ինչ որ լաւ է,
ինչ որ միացնում եւ յուսադրում է, ինչ
որ կարող է ուժեղացնել մեզ, գեր ա-
զօս լոյսով պայծառացնել մեր կեան-
քի խաւար կրթակամարք։ Հայ մշակոյ-
քի նախումները այդ տեսակ լուսա-
ռու եւ յուսատու երեւոյք ներ են։ Մադ-
րենք, որ գրող – բանասէր Ա. Զօպան-
տանի գրական յորելեանը դառնայ մեզ
միացնող մէկ ազդակ, դառնայ Հայ
Մշակոյքի տօն։ Յոյց տանք, որ մենք
ոչ միայն խաչել գիտենք, այլ, եթի տե-
ղաքար գայ, գիտենք եւ յարգել։

Ե՞ՐԲ է ՀԻՄՆԻԵԼ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Այս հարցով վերջերս գրալւեց Ռ. Սեւեանը «Հայրենիք»ամսագրում (թիւ 170), գալով այն եղակացուրեան, որ Դաշնակցուրիւնը հիմնել է 1890 թ. օգոստոս ամսին եւ աշխատանքի լծել սեպտեմբերին: «Վ.Էմ»-ի ժթ. համարում մենք աւելի հաւանական համարեցինք, որ Հ. Յ. Դաշնակցուրիւնը հիմնել է յուշիս ամսին եւ գործի անցել օգոստոսին: Նոյն խնդիրը քննուրեան է առել եւ Ա. Գիւլխանդանեանը («Քառաշ» հոկտ.), որ նոյնպէս պնդում է, թէ Դաշնակցուրեան հիմնադրուրիւնը տեղի է ունեցել օգոստոս ամսին: Մեզ քը ունեմք, որ, ինչպէս Ռ. Սեւեանը, Ա. Գիւլխանդանեանն էլ սխալում է: Յամենայն դեպս, այդպիսի վեռական եղակացուրեան յանգելու համար փաստեր չկան:

Իր եղակացուրիւնը հիմնաւորելու համար Ա. Գիւլխանդանեանը նախ առաջ է բերում Դաշնակցուրեան հիմնադրուրեան մասնակցուներից եւ ենտագայ գործիչներից ումանց կարծիքները, որից երեսում է, որ այդ խնդիր մասին միաձայնուրիւն չկայ, որով այդ կարծիքներն, ի հարկէ, իմբ չեն կարող նկատել այս կամ այն տեսակէտը պաշտպանելու:

Ա. Գիւլխանդանեանի եղակացուրեան հիմնաւորման ծառայող զլիաւոր փաստը հնչակեան Ռ. Խանազատի յուշերն են: Խանազատը պատմում է, որ ինքն էլ մասնակցել է Դաշնակցուրեան կազմակերպուրեան սկզբնական աշխատանքին, 1890 թ. յուլիսի վերջերը կամ օգոստոսի սկիզբը Թիֆլիս հասնելուց յետոյ: Բայց այդ առջիւ մենք ունեմք նուսումի գրաւոր վկայուրիւնը, որից ենտեւում է, թէ Խանազատը ո'չ թէ Դաշնակցուրեան հիմնադիր ժողովին է մասնակցել, այլ բանակցել է եւ համաձայնուրեան եկել արդէն իմնաւո-

Դաշնակցուրեան հետ:*) Ուրեմն, պէտք է ներադրել, որ երբ յուշիսի վերջերին կամ օգոստոսի սկզբին խանազատը հասաւ Թիֆլիս, Դաշնակցուրիւնը արդէն կազմանած էր եւ ուներ Կենտրոնական վարչուրիւն: Այս վարչուրեան ժողով-ներին է մասնակցել խանազատը, բայց 35 տարի յետոյ, յուշերը գրելիս, կարծիլ է, թէ մասնակցել է Դաշնակցուրեան հիմնադիր ժողովներին:

Ա. Գիւլխանդանեանը առաջ է բերում նաև Հ. Յ. Դաշնանում պահած հաշտական մեկ քուղը, որ ներկայացնում է Դաշնակցուրեան 1890 թ. նոյեմբ. 1—1891 թ. յուլիս 10 ելմուտքը: Կարծես, ըստ Ա. Գիւլխանդանեանի, այս հաշտարուրը ել ապացոյց պէտք է ընդունել, որ Դաշնակցուրեան հիմնադրուրիւնը տեղի է ունեցել 1890 թ. օգոստոս ամսին: Եթէ այս, ապա այս փաստարդին էլ կարելի է հակադրել հետեւեալ փաստը.— 1892 թ. փետրարից Հ. Յ. Դաշնակցուրեան Վարչական կենտրոնի սկսում է հրատարակել կուսակցուրեան ստացած դրամական նւէրները: «Դրօշակ»-ի երրորդ համարում, ի միջի այլոց, արձանագրւած են հետեւեալ մուտքերը.— «1890 թ. ՕԳՈՍՏՈՍ 1-ի 8 թ. Ն. Ի. 5500 թ., նոյեմբ. 1-ից Դմաս. 100 թ., Ն. Ն. 7 թ.» եւ այլն: Արիշ խօսքով, 1890 թ. Օգոստ. 1-ին, Դաշնակցուրիւնը արդէն 5500 թ. նւէր է ստացել. նշանակում է գոյուրիւն ունեցել է, որ նւէր ստացել է...

*) Տե՛ս «Դիւան Հ. Յ. Դաշնակցուրեան», Հատոր առաջին, էջ 90:

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

«Վ.Է.մ»-ի անցեալ համարում վերջացրինք Վահրամ Նազենունու «Գիրք Դ. իւ իր ժամանակը» աշխատուրեան առաջին մասի տպագրութիւնը: Մի ժամանակ գործնական պատմաներով ստիպւած լինելով գործի շարութակուրեան հրատարակուրիւնն ընդհատելցաւ պէտք է արձանագրենք, որ այդ վերին աստիճանի հետաքրքրական եւ արծեաւոր գրւածքը ընթեցնդերի ակնկալաւած ուշադրութիւնը չգրաւեց: Ուզում ենի հաւատալ, որ դրա պատմանը լինուն էր. այսօրայ հայ ընթեցնը նոյն իսկ Վահրամ Նպ.-ի պարզ ու դիրամատչելի գրաբանից բան չի հասկանում:

Պէտք է խոստովանենք, սակայն, որ Մամկունու երկը «Վ.Է.մ»-ում իրեւ յաւելած տարին՝ մենք յոյ ունեինք, որ գէր հայ մասուի վարիչները կը կարդան եւ քարածարար կը ծանօթացնեն իրենց ընթեցնդերին: Դժբախտաբար, մեր քերերի խմբագիրներն էլ, ըստ երեւոյիրին, չեն կարդացել, որ չօգութեցին Վահրամ Նպ.-ի հաղորդած բազմարի հետաքրքրական փաստերից: Ասենք՝ զարմանալու էլ շատ տեղ չկայ. նայէ՛ք մեր լրագրուրեան՝ ինչո՞վ է սեւում նա. նայէ՛ք մեր խմբագիրներին ու լրագրուրներին՝ ինչո՞վ էն գրալած նրանք: «Մզուտած գրաբառով» շարադրւած երկարապատում մեր պատմութիւնը կարդալու ու դրամից ինչ որ քաղածքներ ամել — արծէ՛ գլուխ ցաւացնել, երբ աւելի հեշտուրեամբ կարելի է օտար քերերից նիւթեր հաւաքել ու կրամցնել հայ սակաւագետ բներցողին, բայց է, որ այդ նիւթերը լինեն զգայացունց, ամբոխի սրտին խօսող եւ

... մի ժամի աւելի բաժանորդ ապահովող:

Այսու հանդերձ՝ մենք չենք զջում, որ այդ կարեւոր աշխատուրեան հրատարակուրեան ձեռնարկեցինք: Եթէ այսօր հասկացող ու զնահատող ժիշկայ, տարակոյս չունինք, որ վաղը նըրանից օգտուղներ շատ պիտի լինին: Վահրամ Նպ. Մամկունու աշխատուրիւնը 19-րդ դարու հայոց պատմուրեան ամենակարեւոր աղբիւրներից մեկն է հանդիսանալու: Մենք դժւարանում ենք ցոյց տալ մի ուրիշ գիրք, որ ունենար Մամկունու գործի արժէքը: Երանի՛ թէ հնարաւոր լիներ լոյս ընծայել եւ երկրորդ հասորը, որ պակաս արծէաւոր չէ, իսկ որպէս մասնութ նոյն իսկ աւելի բանգագին:

Այսուղի աւելորդ չենք համարում արձանագրել եւ մի փաստ, որ յատկանշական է որպէս շշաների բարեկերի զնահատուրեան տեսակէտից:

«Վ.Է.մ»-ի հրատարակուրեան ձեռնարկելով՝ մենք, ի միջի այլոց, դիմեցինք եւ Բարեգործականի նուպարեան Մատենադարանին՝ խնդրելով տրամադրել մեզ իրենց մօտ գտնեած նիւթերը: Թէ՛ Պ. Գ. Սինապեանը, որ այն ժամանակ Մատենադարանի վարիչ պաշտօնեան էր Բարեգործականի կողմից, եւ թէ մատենադարանավոր Պ. Ա. Անտոնեանը սիրով ընդառաջ զնացին, եւ «Վ.Է.մ»-ը հնարաւորութիւն ստացաւ երատարակելու միջի այլոց, դիմեցինք եւ Վահրամ Նպ. Մամկունու ձեռնարկութիւնը յուղագույն աղբիւրը՝ առաջարկելով իրատարակել «Վ.Է.մ»-ում, այն պայմանով, որ 500 օրինակ արտասալի Մատենադարանի հա-

տար, վերջինիս հաշով: Զեռագրին ծանօթանալուց յետոյ՝ յանձն առինք այդ առաջարկութիւնը, որ ստացաւ նաև Պ. Գ. Մինաղեանի հաւանութիւնը: Եւ այնուհետեւ, Գէորգ Դ. կենսագրութիւնը լոյս տեսաւ «Վէմ»-ի 20 թւերում եւ սպարանատէրը իրաքանչիւր պրակից 500-ական օրինակ աւելի տպեց նույսպարեան Մատենադարանի համար:

Բայց տեսէք, թէ Սբուար Ալբոնիում ի՞նչ բարքեր են տիրում: Երբ ձեռագրի տաշին մասը լրացնելուց յետոյ՝ տպարանը հաշիւ ներկայացրեց Մատենադարանի Վարչութեան՝ վերջին մերժեց՝ առարկելով, թէ իր կողմից այդ տեսակ սպասպանի չի արւած էւ, հետեւարար, ինք չի կարող ընդունել 500 օրինակ 300 էջոց հասորի համար...

Բարեգործականը անհաշիւ դրամներ է ծախսում զանազան փուն բաների վրա: Զի՞՞ կարող մի փոքրիկ գումար էլ յատկացնել Մատենադարանի գործադրութ հաւաքւած պատմական բանգարդէ նիւթերի հրատարակութեան համար:

Բարեգործականը անհաշիւ դրամներ է ծախսում զանազան փուն բաների վրա: Զի՞՞ կարող մի փոքրիկ գումար էլ յատկացնել Մատենադարանի գործադրութ հաւաքւած պատմական բանգարդէ նիւթերի հրատարակութեան համար:

ՏՈՒԹՅ. Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԿՆԻ ԳԻՐՅԲԸ

Բոստոնում լսյա է տեսիլ ծանօթ հանրային գործէ Տոնք. Ն. Տ. Ս. Թաշճեկնի վեանդարանութական Առողջապահութիւն» գիրքը — ընտիր թղթի վրա մատուր տպագրութ սիրուն կազմով մի հասոր: Մասնագէտները վկայում են, թէ արժեգաւոր զործ է, բայց մեր ուշադրութիւնը զրաւողը այդ չէ: Մասնագիտական արժեգի մասին կը խօսի թժիշկները, մեզ հետաքրքրողը այն հանգամանքն է, որ գիրքը կազմուած է երկու լեզով՝ առաջին մասը հայերէն, յետոյ՝ նոյնիք անգլիերէն: Որ ասել է, թէ Ամերիկայում կան շատ հայեր, որոնք այլին հայ հայերէն չեն կարուում — ահանո՞ր բան արտասահմանի համար: Տոնք. Թաշճեկնի գիրքը այդ տեսակէտով ախտանիշ է եւ ահազանք միաժամանակ:

Այս՝ այս է: Եւ միայն չիւս. Ամերիկայում. հապա Հար. Ամերիկայում, հապա Թրանսյուն՝ ամէն տեղ՝ աւելի կամ պակաս: Տոնք. Թաշճեկնի գիրքը այդ տեսակէտով ախտանիշ է եւ ահազանք միաժամանակ:



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆ՝ «Հայ Եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները», Պուրըն, 1936.

Նրանից, որ լաւ գիտեն Հայոց պատմութիւնը եւ տեղեակ են Հայ Եկեղեցու դերին ամցեալում եւ ներկայում, անշուշտ, մեծ հետաքրքրութեամբ պիտի կարդան: Ա. Պարտիզեանի այս ընդարձակ աշխատութիւնը, ուր 440 մեծադիր էջերի մեջ հազարիւտ բարեխցնութեամբ ու մամրաժամութեամբ ցոյց են արւած բոլոր այն գիրքերը, որոնք բացել են հայ Եկեղեցու մարմնի վըրա՝ հայ համբային եւ ազգային կեանքի կապակցութեամբ: Միաժամանակ պատուում է հայ բոլշեվիկների երեսից Եկեղեցու «պաշտպանների» կեղծ դիմակը:

Ա. Պարտիզեանը առաջադրել է հետեւալ նպատակները:

1.- Շեշտել արտասահմանի հայ գաղութներու և մանաւանդ ամերիկանայ գաղութի տապնասի քաղաքական նշանակութիւնը, 2.- Ցոյց տալ, որ հայ Եկեղեցւոյ չուրջ ու ներս սկսած պայքարը կեղծ և արւեստական է, 3.- Երեւան բերել այն կողմը, որ ու եւ է շահ կանկալիք նման կուէս մը, և այսպիսով գտնել նախայածակը, 4.- Գտնել այն անձերը, որոնք եղան անհուատարիմ իրենց ուլստին ու գիրքին եւ հայոց Եկեղեցին մէջ գետին պատրաստեցին քաղաքային կուրի համար, ոչ միայն անձնապէս յարելով այս կամ այն քաղաքական հաստածին, այլ նաև փորձելով Եկեղեցին կապել այս կամ այն քաղաքական կառքին, 5.- Վերջապէս, գտնել այս թնձուկի լուծման բանալին եւ ցոյց տալ, թէ ինչպէս կա-

արատութիւնը եւ հայ եկեղեցւոյ ինք-
նավարութիւնը...

... Նոյն պաշտպանութիւնը ցոյց
պիտի տար ու եւ է այլ կազմակերպու-
թեան — նոյնիսկ կոմունիստ խմբակի
մը — եթէ անոր համար հայ ժողովուր-
դի Միութիւնն ու դատը եւ ինքնատի-
ռիութիւնը լինէին բացառիկ արժէք-
ներ: Բայց երբ աղջային արժէքներու և
հաստատութեանց մասին տարրեր գը-
նաւատութիւններ կան, բախումը կը
դառնայ անխուսափելի ներքին կեԱն-
քի Մէջ, ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ
ՄԻՋԱՄՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ»: (էջ
22): Օտարը միջամտեց հայ զաղուրա-
յին կեանքին՝ օգտագործելով պայքարի
մէջ նաև հայ եկեղեցին:

Գրքի առաջին գլուխն է՝ «Խորհրդա-
յին ոչժիմը եւ կրօնն ու եկեղեցին»: Այսուն հեղինակը մէջքերումներ է ա-
րել գրեթե բոլոր մարքսիստ եւ բոլշե-
վիկ ականաւոր տեսաբանների աշխա-
տուրիստներից՝ կրօնի եւ եկեղեցու մա-
սին: Նրա ուշադրութիւնից չի վրիշել
նաև խորհրդային օրէնսդրութիւնը նոյն
խնդրի վերաբերեալ: Գրախօսականի
սահմանների մէջ դժւար է բերել այն
չափազմց հետաքրքրական ժաղածք-
ները, որոնք կոյրերին անգամ կարող
են համոզել, թէ որն է բոլշեվիզմի
եւ խորհրդային իշխանութեան խկա-
կան վերաբերութիւնը հանդէկ կրօնի եւ
եկեղեցու: Եւ որքան օգտակար է այս
ամենը այն մոլորածների համար, ո-
րոնք համած իւղի տեղ են ընդունում
բոլշեվիկան կեղծիքները:

Շատ բնորոշ է «Անաստած» քերքից
բաղադր մէկ հաստածը (1932 թ. նոյ.
29): «Անաստածներու Միութիւնը
ոլէտք է հարածային կերպով հաշւե-
յարդարի ենթարկէ եկեղեցին՝ հալածե-
լով հոգեւորականութիւնը, որպէսզի ա-
նոնք ստիպւին ցրւիլ կամ չեղոքանալ
եւ այսպէսով իրաւունք տալ իշխանու-
թեանց, որ «փակէն» տակաւին բաց մը»:

նացած փոքրաթիւ եկեղեցիներն ալ»:
Բոլոր վկայութիւնները ճգույն են
ապացուցանել մէկ բան, թէ՝ «Խ. Մի-
ութիւնը իր բոլոր օրդաններու մէջոցավ
կաշխատի բոնի կերպով ջնջել կրօնը իր
սահմաններէն ներու»: (էջ 38): Եւ այս-
պիսի մի պետութիւն ներկայացւեց որ-
պէս պաշտպան հայ եկեղեցու...

Երկրորդ գլուխ մէջ հեղինակը գրադ-
ում է խորհրդային իշխանութեան եւ
Հայաստանեաց եկեղեցու փոխ — յա-
րաքերութիւններով: Հայաստանեաց ե-
կեղեցու վիճակը պատկերացնելու հա-
մար նա առաջ ժաղածքներ է անում
նաև «Վէմ»-ից («Վէմ», Յունիս — Ապ-
րիլ 1935): Բերում է նաև հաստածներ
«Պայքար»-ից, «Հ. Կոչնակ»-ից, «Ա-
զատ Եկեղեցի»-ից եւ այլն, եւ միան-
գամայն պարզում է այն ողբերգութիւ-
նը, որ ապրում է հայ եկեղեցին խոր-
հրդային ռեժիմի տակ:

Ցեսոյ մանրամասնօրէն կանգ է առ-
նում Մայր Արոնի ժայխայման ընթաց-
քի վրա՝ թւելով խորհրդային իշխա-
նութեան բոլոր դէկրէտները, որ վե-
րաբերում են այս խնդրին եւ որոնիք չեն
նախաչում ոչ հայ եկեղեցու միասնակա-
նութիւն, ոչ որ եւ է նւիրապետութիւն
եւ ոչ էլ Ամենայն Հայոց Կարուղիկոս:

Ապացուցանելով, որ երկրի մէջ բոլ-
շեվիկան ժաղականութիւնը վերա-
ցնում է եկեղեցական իշխանութեան ա-
մէն մի հետք՝ հեղինակը նոյն ժամանակ
պարզում է, թէ ինչական ժաղական
հաշիմերով նոյն բոլշեվիկները արտա-
սահմանում պաշտպան են հանդիսանում
եկեղեցականների «իշխանութեան», իր-
արարում են կիրքերը եւ պայքար ստի-
ռում հայ համայնքների մէջ:

Առանձին գլուխ էլ նւիրապետ է Զե-
կայի վեղարաւոր գործակալներին ար-
տասահմանում (էջ 85): Պասմաննան
եպիսկոպոս, Ռուբէն Եպ. Մանասիան,
Յ. Ղրթնան եպիսկոպոս, Մազլման
արքիպիսկոպոս: Այս ստոր եւ կետուոտ

մարդոց գործունելութեան մասին հե-
տինակը տած է այնքան առաջ փաս-
տիք, որ նիւթ կարող էին դասաւալ մի
առանձին հատորի:

Հետաքրքրական տեղեկութիւններ կան
եւ Գուրեան Արք.-ի ու բոլշեվիկների
յարաքերութիւնների մասին: Խորհրդա-
յին մատուլը միայն երկու տողով հա-
ղորդեց Սուրեննամ Կարուղիկոսի մահ-
աւան լուրը, մինչդեռ Ամերիկայի բոլ-
շեվիկեան առեւտրական ներկայացնուցիչ
Բողդանովի հետեւալ հեռազիրն էր ու-
ղարկում նիւթ երքի Հայոց Առաջնոր-
դարանին, Գուրեանի սպանութեան առ-
քիւ. «Համեցէք ընդունիլ մեր խորունկ
ցաւակցութիւնները». Գեւ. Արք. Գուր-
եանի եղերական ժահւան առթիւ: Մենք
հայ ժողովուրդին վշտակից ենք այս
անդարձանների կորուսին առթիւ: —
Բողդանովի: (էջ 106): Այսպիսով ստեղ-
ծուել էր մի չտեսնեած ներդաշնակու-
թիւն հայ եկեղեցականների եւ բոլշե-
վիկների միջեւ արտասահմանում, ժայ-
խայելու համար արտասահմանի հայու-
թիւնը:

Հետեւալ գլուխների մէջ Պարտիզ-
նանը նկարագրում է, թէ ինչպէս հայ
եկեղեցին հակազգային կուի թատր
դարձաւ հայ զաղութեան մէջ: Բուշե-
տիկները ընտրեցին եկեղեցին, որովհե-
տեւ նրանք ուզում էին զրաել մի հաս-
տառութիւն, «ուր զաղութահայ բո-
լոր տարրերը չվման կուղային կամայ
թէ ակամայ, որու համար բոլոր տար-
րերն ալ պատրաստ էին զոհելու եւ
կաւելու» ...

Ընթերցող հետաքրքրութեամբ կը
կարդայ այն էջերը, որոնք վերաբերում
են սփիւրքի հայութեան մէջ տարած
սայշաբին հայ գրօշին դէմ, քազմա-
րի մէջքերումներով հայկական մա-
մուլից, որոնք վերաբերում են այդ
խնդրին եւ որոնիք, ի միջի այլոց, պար-
զում են առակալապատճենների երկիրինի ժա-
պահականութիւնը այս խնդրում՝ «գուր-

գուրանիքի առակայ»էն սկսեալ մինչեւ
«բուրջի կտորը» (էջ 150 եւ 151):

Ապա՝ «Ռւրականը Ամերիկակայ զա-
գուրին մէջ» եւ «Օրէնքը պիտի տիրէ»
զլուխներում մանրակրկիտ կերպով քբն-
եած են բոլոր ապօրինի գործողու-
թիւնները, ազգային եւ հոգեւոր հաս-
տառութեանց բազմաթիւ գրութիւննե-
րը, որոնք վերաբերում են Գուրեան
Արք.-ի եւ իր շուրջը հաւաքած էլիքի
գործունելութեան: Խակ «Ղեւոնդ Արք.
Գուրեան մտաւորական առաջնորդ» գրի-
խում փորձ է արտած պատկերացնելու
այդ կերպականին, որպէս մարդ եւ ա-
ռաջնորդ: Առաջ են բերած Գուրեանին
նամաշող անձանց վկայութիւնների
մասին եւ մէկիկ մէկիկ բւած են
Գուրեանի ապօրինի կարգադրութիւննե-
րին կուրօրէն ենքարկւել չուզող եւ
Սահմանադրութիւնը պաշտպանող հո-
գեւորականների դէմ սարքած գաւե-
րը: Եւ ընթերցողը հետաքրքրութեամբ
տեսնում է, թէ ինչպէս, կարծես նա-
կատագրօրէն, Գուրեանի ճախաւեր կար-
գադրութիւնների շնորհիւ, ամպերը
կուտակում են ամերիկակայ երկըն-
ենում, մինչեւ եռագոյնի անպատու-
թեան պատմութիւնը:

Ցեսոյ հետեւալ գլուխների մէջ Պարտիզ-
նանը նկարագրում է, թէ ինչպէս հայ
եկեղեցին հակազգային կուի թատր
դարձաւ հայ զաղութեան մէջ: Բուշե-
տիկները ընտրեցին եկեղեցին, որովհե-
տեւ նրանք ուզում էին զրաել մի հաս-
տառութիւն, «ուր զաղութահայ բո-
լոր տարրերը չվման կուղային կամայ
թէ ակամայ, որու համար բոլոր տար-
րերն ալ պատրաստ էին զոհելու եւ
կաւելու» ...

Ցեսոյ հետեւալ գլուխների մէջ Պարտիզ-
նանը նկարագրում է, թէ ինչպէս հայ
եկեղեցին հակազգային կուի թատր
դարձաւ հայ զաղութեան մէջ: Բուշե-
տիկները ընտրեցին եկեղեցին, ի միջի այլոց, պար-
զում են առակալապատճենների երկիրինի ժա-
պահականութիւնը այս խնդրում՝ «գուր-

իասցելին նախ քան նրա սպանութիւնը,
ինչպէս, օրինակ՝ «Առաջնորդը հոգիով
դաշնակ մասուղէրիստների հետ է»...
կամ «Ժողովրդական զանգվածներուն ա-
րիւն քրտինքով իրենց մակարոյժ գոյու-
թիւնը քարշ տուող Դուրեկանները»... եւ
կամ «Իր ամբողջ կեանքի ընթացքին
ուրիշներու աշխատանքով յզդացող մի
ողբուկ, ինչպիսին է Դուրեկան եպիս-
կոպոս...» (Էջ 365): Խոկ Գուրեան եպիս-
կոպոս, 1934 թ. Մայիս
9-ին, գրում էր, թէ՝ «Այդ գանակը,
որ խրեցաւ Դուրեկանի կողին, խրեցաւ
Սորհքային Հայաստանի կողին, անոր
կմուռնիստական սրտին, աշխատառ-
ական գասակարգային սկզբունքներուն
և ամար»: (Էջ 365):

Բազմաբիւ ուրիշ հետաքրքրական օրինակներով Պարտիզան բաց է անուանքութեան առջեւ «միացեալ նակատ» կոչւած զազրելի դասի ներքին ծալքերը: Այս «միացեալ նակատը» կազմւած էր դեռ Դուրեսանի սպանութիւնից առաջ, սակայն, սպանութիւնից յետոյ էր, որ մի արտասովոր աշխուժութեամբ նետ- և եց իրապարակ, օգտագործելով Դուր- եանի դիմակը:

Ի՞նչ էր Դաշնակցութեան դիրքը համ-
դեպ հայ եկեղեցու: Այս հարցին հե-
ղինակը պատասխանում է «Հայ Յ.
Դաշնակցութիւն եւ հայ եկեղեցին» գր-
իսի մէջ: Նա յիշեցնում է ականաւոր
գործիչներ Ակնունիի եւ Շահրիկեանի
գրածները այդ առրիւ, «Դաշնակցու-
թիւնը հայ եկեղեցիներու քարերն ան-
դամ կը պաշտպանէ, եթէ ո եւ է Սուլ-
թան, որ ըլլայ այն, կամ որ եւ է նա-
ևարարութիւն, որն ըլլայ այն, յանդզնի
ենք գնել անսոնց վրա» (Ակնունի):
Միայն ըսէ՞ք, մաքրակրօն, կարճ եւ
բրկայն փեշերով չէրիսաթձններ: Դուք
ըր էք պաշտպանած Հայ եկեղեցին
աշերք... Լսէ՞ք, ինչո՞ւ կը ստէք Դաշ-
նակցութիւնը զրպարտելով... Դուք ու-
ցացա՞ծ էք, տեսա՞ծ էք երբեք ընդհա-

նուը վատանդի, յարձակումի, ձնչումի բանութեան հանդէպ աւելի անկեղծ պաշտպան եկեղեցիի սեփականութեանց եւ Հայ ժողովորդի համար, քան Դաշնակութիւնը»: (Յ. Շահրիկիսան), (էջ 406):

Հ. Յ. Դաշնակցութեան երկու ակա-
նաւոր իրավաբակագիրներու այս տո-
ղերը լրիւ կերպով ներկայացնում էն
Դաշնակցութեան վիրաբերմունքը համ-
դեպ հայ եկեղեցու: «Ինչպէս 1903 -
1905-ին, — ասում է հեղինակը —, այ-
սօր ալ իր իրաւունքներուն համար կը-
տղ հայ ժողովրդի կողքին կանցնած է
Հ. Յ. Դաշնակցութիւնը... Դաշնակցու-
թիւնը, իրեւ հայ իրականութիւնին ծը-
նունդ առած քաղաքական կազմակեր-
պութիւն մը, բարյական պարտաւորու-
թիւն կը զայ պաշտպանել հայ քաղա-
քացին՝ անոր խզճի վրա ժործւած ա-
նարդար բոնութեան դէմ, եւ աւելի մէծ
զարաւորութիւն մը՝ պաշտպանելու
հայ եկեղեցին իրեւ հայ ժողովրդի
պատմական սահեղձագործութիւնը, ա-
ռո հոգեկան սէտքերուն զոհացում
ուղ հաստատութիւն մը, որ նոյն ա-
նեն ծառայած է իրեւ միութեան սիմ-
ուլ մը, նշանակ մը, հայ ժողովրդի
սմար: Պաշտպանած է զայն սուլթա-
նութի դէմ, պաշտպանած է զայն ցա-
նութի դէմ, եւ չէր կընար չպաշտպա-
նու զայն բոլցեւիսմի դէմ»:

Ներքին գլուխը նւիրւած է եղբակաւ-
րի իւմենիրին: Հեղինակը նախ դիտել
տալիս, որ հայ նկեղեցու տագիտապը
և բնիր եկեղեցւոյ ներքին հութենէն
յարարերութիւններէն, այն է՝ զա-
նական, վարդապետական, բարեկոր-
կան ու նորապետական անհամա-
յութիւններէ եւ տարակարծութիւն-
է, այլ թէ՝ ան պարտագրւած է ար-
քուում՝ ՔԱՂԱՔԸՆԿԱՆ այն տարակա-
պայմաններէն, որոնց ներքեւ կը
նեփ այժմ հայ եկեղեցւոյ Մայր Ա-
ռէ: Կարճ խօսքով՝ հայ եկեղեցւոյ

տագնապին պատճառը ՔԱՂԱՔԱԿԱՆ կերպությունը է և ոչ եկեղեցական»: Եջ 429): Եւ ցաւ է յայտնում, «որ Մայր Աթոռը ցոյց չտաւ մինչեւ այսօր այն բարոյական կորովը, որ այդ նպատակով կակըն-կալէք իրմէ: Վերջին քանի տարիներու փաստերը կը հաստատեն մէկ իրողութիւն, որ Մայր Աթոռը, հակառակ իր բացարձակ չեղոքութեան հաշանդնդուն՝ բազմաթիւ անզամներ ապացու-ցուց որ ինք կողմանակից է արտասահ-մանեան հայ իրականութիւնը փոփոր-կող քաղաքական պայքարներու մէջ»: (Եջ 427):

Հստ հեղինակի, «Հայոց եկեղեցին
Մայր Աթոռը զատապարտւած է շահա-
զործութեան եւ մահւան, ինչ որ արդէն
նպատակն է խորիքդային իրականու-
թեան: Այս պարագաների մէջ անհնա-
րին է պահպանի եկեղեցու միասնակա-
նութիւնը:

Յետոյ Պարտիզեան մնանամ է Հայ հ-կեղցու վերաբերեալ օրէնսդրական խնդիրները, տաճկահայ եւ ուստահայ հատուածների տարրերութիւնը եւ այլն։ Նա առանձին ուշադրութիւն է դարձը-նում հայ եկեղեցու ժողովրդապետական սկզբումքի վրա։ «Հայ Ակեղեցւոյ օ-րէնքներն ու աւանդութիւնները Եզծե-լով ու սիամ մէկնարաննելով՝ արտասահ-մանի Հոգեւոր առաջնորդները այսօր օ-րէնքի զուրս եւ վեր կը նկատիին, եւ կարելի չէ զանոնք ժողովրդական պա-տասխանատութեան կոչել»։ (Եջ 477)։ Եւ խօսելով այն առաջարկների եւ պա-տասխների մասին, որ դնում են ուսմիա-լարները եւ զանազան բռլիւթագններ, որը թէ յանուն հայ եկեղեցու միաս-ականութեան (օրինակ Դաշնակցու-նամ Տաղաթական ուղղութեան մասին և այլն), հետիմակը արդարացի կեր-ով եղբակացնում է. «Ի՞նչ կապ ունի Յ. Բ. Դաշնակցութեան քաջաքական ուղղութեանը Հայոց եկեղեցւոյ տագ-սպիրիւնին հայոց եկեղեցւոյ տագ-սպիրիւնին հետ։ Ապա եթէ Դաշնակցու-թիւնն ալ ուցէ իր քաղաքական ուղ-

Դութիւնը նախաղայման զնել բանակ-
ցութեանց (ինչպէս անում են ռամկա-
լարները), ի՞նչ պիտի լինեն հայ եկե-
ղեցւոյ նորապետութիւնը, անոր նոր-
րակը, եկեղեցական հատւածները»: Եւ
վերջացնելով գիրքը՝ աւելացնում է՝
«Այդ անմիտ ու բացաձակապէս ան-
տեղի պայմանին, սակայն, Գանձակ-
ցութիւնը միայն արհամարհանքով կը
պատասխանէ, այն արհամարհանքով,
որ Եսպիկտեառ խոսցոցած է հետեւ-
ալ զրւածքին մէջ.

Ներոն մահւան դատապարտած էր
ատերանոս անուն կողոնսու մը: Ներո-
նի պաշտօնեաներէն Եպափրողիսոս կը
օտենայ Լատերանոսի եւ կը հարցնէ
նոր թէ՝ բան մը ունի՞ Ըստելիք մեռ-
լէ առաջ: Լատերանոս կը պատաս-
անէ սոսոյիկի մը պէս. «Եթէ բահլիք
ու ունենամ՝ տիրո՞ջդ կըսեմ, ո՞չ թէ
նոր ծառապին»:

Հետաքրքական եւ լիերին աստիճանի
ոժիքաւոր աշխատութիւն մըն է Պար-
ոգիանի գիրքը։ Հեղինակը լիովին յա-
զել է իր տաջադրած նպատակի մէջ։
Եւած չափազանց առաս փաստերի վե-
րաց նաև կարողացել է ապացուցանել, որ
ու եկեղեցու տագնապը եւ տիրահրա-
կ «Մարցեալ նակատը» կազմակերպ-
էին օտար իշխանութեան կողմից
իշխանութեան համար հայ գաղութները
փորելու համար հայ եկեղեցու հիմ-
լ։ Դուրս Արքեպոս-ի դիմակը շահա-
ծեց մինչեւ վերց։

անձին հայ եկեղեցու տագթապի, Ա.
տիգիանը ներկայացրել է բռվան-
հայ կեանքի տագթապը:

Ս. ԱՐԱՄԵԼԻ

“V E M , ”
REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
 Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՎՐԱՅԵՍՆ - Փետրվար 18-ից յետոյ	1
Ո. ԲԵՐԲԵՐԵԱՆ - Պատրամիքների շրջանից	11
Վ. ՄԻՆԱԿՈՐԵԱՆ - Արհաւդրութիւնների օրեկ	31
ՏՈՒԹ. Վ. ԹՈՐԹՈՄԵԱՆ - Յուշատերքս	57
Ա. ԱԲԵՂԵԱՆ - Միջազգային դաշնագիրներ Հայաստանի մասին	75
ՀՄ. ՄԱՆՈՒԿԵԱՆ - Դեպքերը Վասպուրականում	88
ՀԱՅ - ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ	96
ԿԵՍՆԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ - Մշակոյքը Հայաստանում	Ա. Զօպան-
իանի յորելեանը	Եղբ է հիմնել Հ. Յ. Դաշնակցութիւնը
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ - Գէորգ Գ. Եւ իր ժամանակը	Տոփր. Ն. Տ.
Ս. Թաշնեանի գիրքը	113
ԴՐԱԽԵՕՍԱԿԱՆ - Ս. Արամեան՝ Ա. Պարտիգեան՝ «Հայ եկեղեցւոյ տուգնասըլ եւ անոր պատասխանութենքը»	115
ՅԱԻԵԼԻԱԾ - Գիւտ Միկրարեան՝ «Պրազիլահայ գաղութը»	1

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ֆրանսա եւ Սիրիա
Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս,
Մնացեալ բռլոր Երկիրները
Հասցե՝ ճամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար . . .

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)

ԳԻՒՏ ՄԻՒԹԱՐԵԱՆ

ՊՐԱԶԻԼԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ
≡ ՍԿԻԶԲԵՆ ՄԻՆՉԵԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ ≡

(ԱՐՏԱՏՊԻԱՆ “ՎԵՄ” ՀԱՆԴԻՍԻ)



Գեղ. Տպ. Մաթիկան — Imprimerie Artistique 42, Rue de la Jonquière (17^e)

ՓԱՐԻԶ

1938

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Զ Օ Ն

Հայրական խամդակաք սիրով կը նւիրեմ
զաւակներուս —
ՇԱ.Ք. - ԶԱ.ՐՈՒ.ՀԻԻ
եւ
ՓԵՏՐՈ - ՌՈՊԵՐԹՈՅԻ
Հեղինակ

Սոյն աշխատութիւնը համառօտ ուսումնասիրութիւն մըն է, որու հեղինակը — մէկը մեր որակեալ մտաւորականներէն — տարիներէ ի վեր ապրելով Պրազիլիոյ տնտեսական գլխաւոր կեղրոնին՝ Սան Բաւլոյի մէջ, մօտէն ծանօթ է պրազիլիական կեանքին ընդհանրապէս եւ հայ գաղութի անցեալին ու ներկային՝ ի մասնաւորի։ Գիւտ Մխիթարեան հայ մամուլին տուած է մէկէ աւելի շահեկան յօդւածներ Պրազիլիոյ եւ պրազիլահայութեան մասին։ Ներկայ աշխատութիւնը ամփոփումն է իր տարիներէ ի վեր հաւաքած նիւթերու։

Թիրեւս ըստ ըլլայ՝ արժէ՞ արդիօֆ այսքան տեղ նւիրել պգտիկ — շուրջ 5000 հոգինոց — համայնքի մը կեանքին, երբ անդին հարիւր հազարներու կեանքը հազիւ ուշադրութեան առարկայ կը դառնայ։ Արժէ՞։ Որովհետեւ խնդիրը միայն գաղութի մը միծ կամ պգտիկ ըլլալը չէ, այլեւ այն հոգեկան ու նիւթական կորովը, որ ան երեւան կը բերէ իր գոյութեան ընթացքին։ Մանաւանդ հայութեան բնավայրէն ու հայկական հոծ համախմբումներէն այնքա՞ն հեռու ընկած գաղութ մը, որպիսին է Պրազիլիոյ հայութիւնը։ Այս «փոքրիկ հօտը» իր գոյութեան առաջին օրէն իսկ սկսած մինչեւ այսօր հերոսական պայքար կը մղէ չիտրւելու համար ազգի մայրական պորտէն ու հակառակ տարապայմանօրէն համայնակուլ միջալայրին՝ կը յամափի պահել իր ազգային դիմագիծը, կուգէ մնալ հեռաւոր մէկ յառաջապահը հայկական ազատազումդին։ Կապրի ու կերագէ օր մը նորէն համբուրելու հայրենի հողը, որուն այնքա՞ն կարօտը կը բաշէ։ Հայ ժողովրդի հրաշագործ կենսունակութեան բազմաթիւ ապացոյցներէն մէկը չէ՞ նաեւ պրազիլահայ գաղութը իր գոյութեան փաստովն իսկ։

Գիւտ Մխիթարեանի գրւածքը գիտական ուսումնասիրութիւն մը ըլլաէ աւելի փաստերու եւ երեւմն նաեւ խորհրդածութիւններու հաւաքածոյ մըն է։ Պայմանները չեն ներած բովանդակ նիւթը սպառելու։ Բայց ինչ որ տրւած է՝ ինքնին արդէն արժէքաւոր տուրք մըն է մեր, աւա՞ղ, չափէն աւելի երկարած ու ցանուցիր եղած տարագրութեան պատմութեան համար։ Երանի՛ քէ ուրիշ գաղութներու մէջ ալ գտնւէին Գ. Մխիթարեանի օրինակին հետեւող մարդիկ։

Փարիզ

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Պրազիլահայ գաղութի ծագումն ու զարդացումը ուրաքանչելէ առաջ, պէտք տեսանք մէկ քանի համարու տեղեկութիւններ տալ ներ-
կայիս եր մէջ շուրջ 5000 հայութիւն պարունակող երկրի մը ընդհա-
կանութիւնակին, կլիմային, բնակչութեան, արդիւնաբերութեան և
գաղթական հին շրջաններու մասին:

Պաղպականական բարձրությունը կազմում է 1500 մետր, իսկ առավելագույնը՝ 2200 մետր:

Պրազիլ պողոս : Պրազիլը առաջին անգամ կոչված է ilha de Vera Cruz (Վերացրության կղզի), յետոյ փոխած է Terra de Santa Cruz-ի (Ս. Խաչի Երկիր), քիչ վերջը կոչվածէ BRAZIL, իր մէջ գանւած տախտակին անունով : Այս «Pan - Brazil» ըստածը տախտակի տեսակ մըն է, որ Պրազիլիոյ միայն յատուկ է եւ որը իր հարստութեան աղբիւրներէն մին եղած է :

Պիտի եղած է :
Պրավիլիոյ պատմութիւնը լիցուն է ներքին յեղափոխութիւնեւ-
րով եւ արտաքին պատերազմներով , բայց մենք չպիտի զբաղինք ա-
նանցմով , քանի որ անոնք մեր ազգային եւ քաղաքական կեանքին հետ
ո եւ է աղերս չունին :

ԿԼԻՄԱ.—Պրազիլ կը պատկանի հասարակածային գոտին եւ ու-
նի այլազան կլիմաներ : Ծովեզերքները համեմատաբար աւելի են-
թակայ են ցուրտ հոսանքներու, որոնք կը քաղցրացնեն եւ հաճելի
կրնեն օդը :

Պրաղիլիոյ կլիման ընդհանրապէս խոնաւ է : Համարեւ
գօտիին ջերմութիւնը 30° - 40° աստիճան է :

Օդի տեսակնոով՝ Պրազիլը կարելի է բաժնել երկու գոտու՝
Առաջինը՝ հասարակածային, որուն մէջ կիյայ Վերին Ամազոնի
հանգը: Հոն անձրևի երկու եղանակներ կան եւ չերժութեան մի-
ջին աստիճանն է 26° , ու տաքը շատ զօրաւոր:

Երկրորդը՝ ենթահասարակածային գոտի, որ իր ամենը է չեր-
նակէ շատ մը նահանդներ, որոնց օղը անձրեւու եւ տաք է. ջեր-
մութեան միջինը $23^{\circ} - 26^{\circ}$ աստիճան է: Այս շրջանն ալ ունի իր կար-
գին տարրեր կլիմաներ: Կան տեղեր, ուր $23^{\circ} - 24^{\circ}$ է ջերմութիւնը,

տեղեր ալ կան, ուր 18° - 21°-ի կը հասնի: Այս վերջիններէն են Ս. Բալօ, Ռիօ - տը - ժամէյրօ, Մինաս - ժէրայս եւ ուրիշ նահանդներ:

Երրորդը՝ բարեխառն զատի լսուածն է, ուր 20°-էն վար է չերմութեան աստիճանը եւ շատ հաճելի օդ մը ունի: Այս գօտիին մէջ կիյնայ Կրանտէ - աը - Սուլը: Հոս ձմեռը շատ ցուրտ կընէ:

ԴՆԱԿԶՈՒԹԻՒՆ. — Պրազիլ ունի (ըստ 1934 Դեկտ. 31-ի մարզահամարի) 47·794·874 բնակիչ՝ 8·511·189 քառակուսի քիլոմետր տարածութեան վրա: Ֆրանսացի պատմաբան Փօլ - Փէրէն ըսած է, թէ Պրազիլ կրնայ 600·000·000 բնակիչ պարունակել:

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ եի ՃԱՐՏԱՐԱՐԻՒԵՏ. — Պրազիլիոյ արևոտեսականը կարելի է խոացնել սա երեք բառերուն մէջ՝ շաբար, սսկի եւ սուրն:

Արդարեւ, ասոնցմէ առաջինը տարիներու ընթացքին Պրազիլիոյ համբաւը շինած է:

Ի վերջոյ, հանքային գիտեր՝ հնախոյզներու հետաքրքրութիւնը արթնցուցած են եւ գաղութներու ուշադրութիւնը կեղոնացուցած իրենց վրա: Տասնեւութերորդ գարուն Պրազիլ շատ իրաւամբ նկատւած է ոսկիի եւ ադամանդի երկիր:

Եոյն գարուն վերջերը սուրճի առաջին սերմերը մուտ զտած են Պրազիլ եւ չուտով տարածւելով երկրին ամէն կողմերը եւ մասնաւրաբար Ս. Բաւլոյի նահանդին մէջ՝ տիեզերական համբաւի արժանացած են:

Պրազիլիոյ մէջ կը մշակւի նաև բամպակ, և այս երկիրը աշխարհի վրա երրորդ տեղը կը գրաւէ իր բամպակի արտադրութեամբը:

Պէտք է ըսել, որ Պրազիլ իր հիւսւածեղինի ճարտարարւեստը կը պարտի բամպակի մշակութեան, որուն կեղրոնն է Ս. Բաւլօն:

Յորենն ալ լայն չափով կը մշակւի թէեւ, բայց իր պէտքին անրաւական կուգայ: Պակսածը կը ներածւի Հիւս. Ամերիկայէն եւ Արծինը ինէն:

Պրազիլ կարտաղը նաև քաքաօ եւ ծխալուտ, որոնք կը մշակւին Պահեայի նահանդին մէջ: Ասոնցմէ զատ կարտաղը եղիպացորին, բրինձ, սև լուրիա (Փէյժոն):

Պրազիլ նշանաւոր է նարինչի, պահանի, անանասի եւ այլ քաղցւահամ պառղներու արտադրութեամբ:

ՀԱՆՔԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. — Հանքաղործութիւնը Պրազիլիոյ մէջ մէծ կարեւութիւն ստացած է գաղթականութեան շրջանին: Եորեկ

գաղթականներ հետզհետէ երկրին ներսերը թափանցելով՝ վնասած ու գտած են մեծ քանակութեամբ թանկագին քարեր եւ ոսկի, որոնք ճոխացուցած են Փորթուկալի թաղաւորական գանձը, որ ծանր տուրքեր զանձած է Պրազիլէն: *)

Պրազիլ ունի արծաթի, երկաքի եւ ուրիշ կարեւոր հանքեր ալ, որոնք տուակ կամ նւազ չափով կը շահագործւին եւ երկրին հարստութեան կը նպաստեն:

ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Գաղթականական հոսանքը դէպի Պրազիլ ունի իր մեծ ու պատիկ շրջանները Եւրոպայի քաղաքական անցուդարձերու հետեւանքով եւ Պրազիլիոյ ոկտքերուն բերմամբ:

Առաջին անդամ Պրազիլ գաղթողները կը լան փորթուկացիները, յետոյ Փրանսացիներ եւ հոլանդացիներ կուգան թէեւ, բայց իբր դաշութ կարեւոր հետք մը չեն թողուր:

1853-ին Ամերիկէի սեւամորթները կը ոկսին մուտք ունենալ իբր դերի:

1824-ին, երբ արդէն անկախ էր Պրազիլ, գերմանները կը դադշեն եւ առանձին գաղթավայր կը հիմնեն:

19-րդ դարու ընթացքին զանազան միջոցներ ձեռք կառնին գաղթաթային հոսանքը քաջալերկու համար: Պայմանագրութիւնները կը ստորագրին գերման կառավարութեան հետ եւ մէծ թիւով գերմաններ բարեւին գէպի Ռիօ - Կրանդէ - տը Սուլ եւ Սանրա - Բարդին նահանդները:

1859-ին գերման գաղթականութիւնը կանդ կառնէ եւ 1873-ին կը սկսի կտալականը եւ գլխաւորաբար կը հաստատի Ս. Բաւլոյի մէջ:


1873 - 1915-ին գաղթականութիւնը կը ներկայացւի մէծ մասամբ սերբացիներէ, յետոյ կուգան փորթուկացիները, գերմանները, ոուրիշացիները եւ ճափոնները:

Պրազիլիոյ պատմութիւնը շատ անհպատ զոյներով կը ներկայացնէ գաղթականութեան անցեալ շրջանները:

Գերմանիան, որ առաջինը կը լան պատմութիւնը նաև արդիողը գերման գաղթականներու երթը է Պրազիլ:

Այդ արդեւքը կը տեւէ մինչեւ 1898: Յաջորդ տարին կայսերական նոր հրամանաղբույլ մը այդ արդեւքը կը մերժի:

*) Պրազիլ իր անկախութիւնը հռչակած է 1822 Սեպտ. 7-ին, Ս. Բաւլոյի մօս իգիրանկա կոչւած վայրին մէջ, արիւնահեղ կուրէ մը յետոյ: 1899 նոյեմբեր 15-ին ալ Համբայիստուքիւն հռչակած է:



Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)